

Արկաղի Իվանյան

Տիգրան Եսայան

ԲԱՆԿԱՅԻՆ
ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ
ԵՎ ԱՈՒԴԻՏ

ՖԻՆԱՆՍԱԲԱՆԿԱՅԻՆ ԶՈԼԵԶ

ԵՐԵՎԱՆ
2003

Ֆինանսաբանկային քոլեջի հիմնադիրներ

ՀՀ կրթության և գիտության նախարարություն
ՀՀ կենտրոնական բանկ
Հայաստանի բանկերի միություն

Հայաստանի Հանրապետություն
ք. Երևան 2, Ամիրյան 26

Հեռ. (3 741) 537788

Հեռ./ֆաքս (3 741) 537767

Web-site: <http://www.fbc-edu.am>

E-mail: staff@fbc-edu.am

Ձեռնարկի տպագրությունն իրականացվել է «Բանկ և ոչ բանկ ֆինանսական հաստատությունների ուսուցանում և թրեյնինգ» ծրագրի շրջանակներում, «Շորբանկ» խորհրդատվական ծառայություններ կորպորացիայի դրամաշնորհի միջոցներով՝ ԱՄՆ միջազգային զարգացման գործակալության (USAID) ֆինանսավորմամբ:

The publication of the manual is done within the “Bank and Non Bank Financial Institutions Mentoring and Training” program supported by Shorebank Advisory Services Inc. grant funded by United States Agency for International Development (USAID)

Հրատարակչի գրանցման համարանիշ

© Ֆինանսաբանկային քոլեջ

Հարգարժան ընթերցող

Հայաստանի Հանրապետությունում գործող բանկերի մրցունակությունը բարձրացնելու, դրանք ժամանակակից գիտելիքներով զինված մասնագետներով համալրելու նպատակով ստեղծվեց Ֆինանսաբանկային քոլեջը:

Առաջնորդվելով ուսումնական գործընթացի կազմակերպման միջազգային փորձով՝ Ֆինանսաբանկային քոլեջը կիրառում է ուսուցման ժամանակակից մեթոդներ, այդ թվում՝ քոլեջի դասախոսների կողմից ստեղծված ուսումնական նյութեր, որոնք ստացել են Հայաստանի Հանրապետության ֆինանսաբանկային ոլորտի մասնագետների հավանությունը և արժանի են համարվել որպես դասագիրք տպագրվելու: Դասագրքերի առավելություններից մեկն այն է, որ դրանց հեղինակները հանրապետության բանկային ոլորտի լավագույն մասնագետներ են:

Ողջունում ենք Ֆինանսաբանկային քոլեջի ուսումնական նյութերի տպագրությունը և հուսով ենք, որ դրանք լայն օգտագործման նյութ կդառնան ոչ միայն քոլեջի ուսանողների, Հայաստանի Հանրապետությունում բանկային գործի մասնագետներ պատրաստող մյուս ուսումնական հաստատությունների, այլև ֆինանսաբանկային ոլորտի մասնագետների համար:

**Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի խորհուրդ**

Ֆինանսաբանկային քոլեջի դասախոսների կողմից ստեղծված ուսումնական նյութերը համահունչ են ժամանակի պահանջներին և լիովին համապատասխանում են բանկային մասնագետների պատրաստման միջազգային չափանիշներին: Դրանք արդիական են և ներառում են իրավիճակային օրինակներ ֆինանսաբանկային ոլորտի առօրյայից, որոնց ուսումնասիրությունն էլ ավելի է նպաստում մատուցվող նյութի ընկալմանը:

Ֆինանսաբանկային քոլեջի դասախոսությունների տպագրությունն առաջընթաց քայլ է հանրապետության կրթական ոլորտի բարեփոխումների գործընթացում:

Կարծում ենք, դրանք սեղանի գիրք կդառնան և՛ բանկային գործն ուսումնասիրողների և՛ ընթերցողների ավելի լայն շրջանակի համար:

Հայաստանի բանկերի միություն

Բարի երթ

Գ Ր Ա Խ Ո Ս Ա Կ Ա Ն

Ա. Իվանյանի և Տ. Եսայանի «Բանկային վերահսկողություն և աուդիտ» ուսումնական նյութի

Հեղինակները վեց բաժնով ներկայացնում են «Բանկային վերահսկողություն և աուդիտ» առարկան:

Առաջին բաժնում ներկայացված են բանկային գործի առանձնահատկությունները, բանկային վերահսկողության հիմունքները, ինչպես նաև համառոտ բերված է այն միջավայրը, որի վրա է հիմնվում բանկային վերահսկողը իր աշխատանքում: Այդ ամենը թույլ է տալիս հեղինակներին հաջորդ բաժնում ներկայացնել բանկային վերահսկողության, անկախ աուդիտի, ինչպես նաև ներքին հսկողության կարգավորման և իրագործման իրավական հիմքերը: Առանձնահատուկ մոտեցման է արժանացել Հայաստանի Հանրապետությունում կիրառվող վերահսկման ռեժիմը: Հեղինակների փորձը առավել ցայտուն արտացոլված է վերահսկողական աշխատանքների (տեխնիկայի) նկարագրությունում: Նյութում նաև հանգամանորեն ներկայացվել են այնպիսի կարևոր ասպեկտներ, ինչպիսիք են՝ կենտրոնական բանկ - առևտրային բանկ, կենտրոնական բանկ - աուդիտոր, առևտրային բանկ - աուդիտոր փոխհարաբերությունները:

Յուրաքանչյուր գլխի վերջում բերվող ինքնաստուգման հարցերը գործնական բնույթ են հաղորդում ուսումնական նյութին:

Ուսումնական նյութը նաև պարունակում է հետագա զարգացման զգալի հնարավորություններ, ինչպես մատչելիության, այնպես էլ ուսանողների մասնագիտական գիտելիքների կիրառելիության աստիճանների հետագա բարձրացման առումով:

Ընդհանուր առմամբ, ուսումնական նյութի մատուցումը կնպաստի քոլեջի շրջանավարտների տեսական պատրաստվածության և մասնագիտական գիտելիքների խորացմանը: Գիրքը կարող է օգտակար լինել նաև այն անձանց համար, ովքեր հետաքրքրություն են ցուցաբերում բանկային գործի նկատմամբ:

ՀՀ կենտրոնական բանկի
բանկային ադմինիստրատոր

Ռ. Պետրոսյան

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ֆինանսարանկային քոլեջի հիմնադիրներ2

Հարգարժան ընթերցող.....3

Կենտրոնական բանկի խորհուրդ3

Գ Ր Ա Խ Ո Ս Ա Կ Ա Ն4

ԳԼՈՒԽ 1. ԲԱՆԿԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆԿԱՏԱՍԲ ՎԵՐԱՀՄԿՈՂՈՒԹՅԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ.....7

1.1. Ներածություն 7

1.2. Բանկային գործի անկայուն բնույթը 7

1.3. Բանկային վերահսկողության ընդհանուր դրույթները 8

1.4. Իրավական և հաշվառման միջավայրեր 8

Ինքնաստուգման հարցեր..... 10

ԳԼՈՒԽ 2. ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ՎԵՐԱՀՄԿՄԱՆ ՈՒՇԻՄ.....11

2.1. Վերահսկողությունը ՀՀ բանկերի նկատմամբ 11

2.1.1. Տեղերում իրականացվող և ոչ ելքային վերահսկողություն 11

2.1.2. Բանկերում համալիր վերաստուգումների իրականացման ռազմավարությունը 13

2.1.3. Վերաստուգումների տեսակները 14

2.1.4. Վերաստուգման արդյունքների ամփոփումը 15

2.2. Բանկային իրավախախտումների արձանագրումը, պատժամիջոցների կիրառումը և վարույթների ընթացակարգը..... 16

2.3. Բանկային վերահսկողի խնդիրները 16

Ինքնաստուգման հարցեր..... 17

ԳԼՈՒԽ 3. ԲԱՆԿԱՅԻՆ ԱՆԿԱՆ ԱՈՒԴԻՏ18

3.1. Աուդիտորական գործունեության կարգավորման իրավական հիմքերը ՀՀ-ում 18

3.2. Աուդիտորի որակավորման վկայականի տրամադրումը 19

3.3. Աուդիտորական ծառայությունների իրականացման լիցենզավորումը..... 20

3.4. Աուդիտի փաստաթղթավորումը..... 20

3.5. Աուդիտորական եզրակացության տեսակները 21

3.6. Բանկային անկախ աուդիտը և նրա նպատակը 22

3.7. Բանկերի և աուդիտորների իրավունքներն ու պարտականությունները 23

3.8. Աուդիտոր-Կենտրոնական բանկ փոխհարաբերությունները 24

Ինքնաստուգման հարցեր..... 24

ԳԼՈՒԽ 4. ԲԱՆԿԵՐԻ ՆԵՐՔԻՆ ՀՄԿՈՂՈՒԹՅՈՒՆ (ՆԵՐՔԻՆ ԱՈՒԴԻՏ).....25

4.1. Ներքին հսկողության հիմնական սկզբունքները..... 26

4.2. Ներքին հսկողության հիմնական խնդիրները 26

4.3. Ներքին հսկողության հիմնական նպատակները..... 26

4.4. Ներքին հսկողության երեք հիմնական հասկացությունները..... 26

4.5. Ներքին հսկողության համակարգը և մեթոդները 28

4.6. Ներքին հսկողության արդյունավետ համակարգի ստեղծման հիմքը 29

4.6.1. Կապիտալի բավարար մակարդակ 30

4.6.2. Իրացվելիություն 30

4.6.3. Ակտիվների որակը 30

4.6.4. Ռիսկերի կենտրոնացում 30

4.6.5. Կառավարում 31

4.7. Ներքին հսկողության պրակտիկ դրույթները..... 31

4.8. Ներքին հսկողության ծառայության աշխատակիցների (աուդիտորների) վարքագծի կանոնները 32

4.9. Ներքին հսկողության հիմնական տարրերը 32

4.10. Ներքին հսկողության համակարգ 33

4.11. Ներքին հսկողության ծառայության աշխատակիցների իրավունքները և պարտականությունները 34

Ինքնաստուգման հարցեր..... 35

ԳԼՈՒԽ 5. ՆԵՐՔԻՆ ՀՄԿՈՂՈՒԹՅԱՆ ՏԵՆՆԻԿԱ.....36

5.1. Տեղեկատվություն 36

5.2. Բանկի գնահատման հիմնական չափանիշները և իրականացման մեխանիզմները 38

5.3. Բանկի ակտիվների նկատմամբ հսկողությունը և իրականացման մեխանիզմը 39

5.4. Ակտիվների դասակարգում 41

Ինքնաստուգման հարցեր..... 43

ԳԼՈՒԽ 6. ՎԵՐԱՀՄԿՈՂԱԿԱՆ (ՍՏՈՒԳՄԱՆ) ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ44

6.1. Բանկի դրամական ակտիվների ստուգումը, դասակարգումը և գնահատումը	44
6.2. Վարկային պորտֆելի ստուգումը և գնահատումը	47
6.3. Բանկի սեփական կապիտալի աուդիտ	55
6.4. Ավանդային գործառնությունների ստուգում	56
6.5. Բանկի արժեթղթերի պորտֆելի և արտարժույթային գործառնությունների ստուգում	56
6.6. Բանկի հիմնական միջոցների ստուգում	57
6.7. Բանկի հաշվետվությունների կազմման և տնտեսական նորմատիվների հաշվարկման ստուգում	57
<i>Ինքնաստուգման հարցեր.....</i>	<i>57</i>
ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ	58
ՀԱՆԳՈՒՑԱՅԻՆ ԲԱՌԵՐԻ ՑՈՒՑԻՉ	58

ՊԼՈՒԽ 1. ԲԱՆԿԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆԿԱՏԱԱՍԲ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ

Թեմայի նպատակն է պարզաբանել բանկերի դերը ֆինանսական և տնտեսական կյանքում, բանկային գործի անկայուն բնույթը, ամփոփ ներկայացնել բանկային վերահսկողության ընդհանուր դրույթները և Հայաստանի Հանրապետությունում բանկային գործունեության կարգավորման ու վերահսկման իրավական դաշտը և հաշվառման միջավայրը:

Ուսուցիչների և հնարավորների նկարագիրը: Թեմայի ավարտից հետո ուսանողները կկարողանան.

- բնութագրել բանկերի ակտիվ դերը երկրի ֆինանսական և տնտեսական կյանքում, դրանով պայմանավորված հիմնավորել բանկերի գործունեության նկատմամբ պաշտոնական վերահսկողության անհրաժեշտությունը
- ներկայացնել բանկային գործի առանձնահատկությունները, որոնք կարող են հանդիսանալ բանկի հնարավոր կորուստների աղբյուր և խախտել կայունությունը
- թվարկել բանկային վերահսկողության հիմքում ընկած ընդհանուր նպատակները և դատողությունները
- ամփոփ բնութագրել վերահսկողների իրավասությունը
- թվարկել իրավական կառուցվածքով կարգավորվող հարցերը, ՀՀ տարածքում բանկերի գործունեությունը կարգավորող հիմնական օրենքները և այլ նորմատիվ ակտերը, ներկայացնել, թե դրանցից յուրաքանչյուրն ինչ է սահմանում
- թվարկել հաշվառման համակարգերում ընդգրկվող հարցերը, հաշվապահական հաշվառումը կարգավորող պետական մարմնի իրավասության սահմաններում հաստատման և կազմակերպությունների համար պարտադիր կատարման ենթակա հարցերը:

1.1. Ներածություն

Վերահսկողությունը տնտեսական այս կամ այն գործունեության նկատմամբ տնտեսագիտության առավել գործնական և ժամանակակից ուղղություններից մեկն է:

Բանկերը և նրանց գործունեությունը, որպես կանոն, հանդիսանում են պաշտոնական վերահսկողության առավել խիստ ուշադրության առարկա, քան ձեռնարկատիրական գործունեության որևէ այլ բնագավառ: Նրանց նկատմամբ մեծ առանձնահատուկ մոտեցումը պայմանավորվում է ֆինանսական և տնտեսական կյանքում բանկերի ունեցած ակտիվ դերով:

Երկրի ֆինանսական և տնտեսական կյանքը երեք կարևոր կողմերով կախված է բանկերից.

- Վճարային մեխանիզմում, որը սպասարկում է տնային տնտեսություններին, կառավարությանը և ձեռներեցության ոլորտը, բանկերը զբաղեցնում են կենտրոնական տեղ: Ժամանակակից որևէ տնտեսական գործունեություն դժվար է պատկերացնել առանց բանկի միջնորդ գործունեության: Հատկանշական է այն համեմատությունը, որ բանկային համակարգը տնտեսության մեջ ունի նույն դերը, ինչպիսին արյունատար համակարգը օրգանիզմում:
 - Բանկերն ընդունում են **ավանդներ**, որոնք դիտվում են լայն իմաստով, որպես «փող» և կազմում են հասարակական հարստության մի մասը: Արդյունքում ակնկալվում է, որ նրանք ամբողջությամբ կվերադարձվեն առաջին պահանջի դեպքում, կամ ավանդի ժամկետի ավարտից հետո:
 - Շուկայական հարաբերությունների պայմաններում ֆինանսական ռեսուրսների բաշխման մեջ բանկերն առաջատար դեր են խաղում, իրականացնելով միջնորդական գործառույթ ավելցուկային միջոցների դեպոզիտների և հավանական վարկառուների միջև, որի հիմքն է հանդիսանում վարկառուների վերցրած միջոցների վերադարձման արդյունավետ գնահատականը:
- Բանկային հսկողության իրավասության հիմնական արդարացունը ավանդատուների կորուստների **ռիսկի** կրճատումն է և դրա միջոցով հասարակության վստահության ապահովումը բանկերի նկատմամբ: Չնայած հսկողությունը կենտրոնանում է կոնկրետ բանկի վրա, վերահսկողները պետք է հաշվի առնեն այն հնարավորությունը, որ մի կազմակերպության խնդիրները կարող են ավելի լայն համակարգային հետևանքներ ունենալ մյուսների վրա, կամ ազդել վճարային համակարգի ամբողջականության վրա:

1.2. Բանկային գործի անկայուն բնույթը

Բանկային գործն ունի մի շարք առանձնահատկություններ, որոնք կարող են հանդիսանալ բանկի հնարավոր կորուստների աղբյուր և խախտել վերջինիս կայունությունը.

- Եկամուտների մեծ կախվածությունը ավանդատուների և վարկառուների միջև բանկերի միջնորդային գործարքներից: Դա նշանակում է, որ բանկերի կայունությունը կարող է լինել խոցելի, ինչպես առանձին վերցված վարկառուների և ավանդատուների տնտեսական անբարենպաստ վիճակների այնպես էլ ընդհանուր համակարգային փոփոխությունների պարագայում:
- Համեմատած շատ արտադրական և առևտրական կազմակերպությունների հետ, բանկի սեփական կապիտալը ունի հարաբերականորեն փոքր տեսակարար կշիռ նրա ներգրաված միջոցներում: Դրանով հանդերձ, բանկային գործունեության բնույթը թույլ է տալիս վերջիններիս, իրականացնել սեփական կապիտալը բազմիցս գերազանցող ներդրումներ և դրամական հոսքեր: Բանկային գործի այս և այլ առանձնահատկություններով են պայմանավորված բանկային համակարգի ավելի լուրջ հակվածությունը ֆինանսական ռիսկերին:
- Որպես կանոն, **ակտիվների և պասիվների** մարման ժամկետների կառուցվածքներն էականորեն տարբերվում են, ընդ որում հաճախ ակտիվների մարման ժամկետները լինում են ավելի երկար, քան պասիվների, ինչը նույնպես հանդիսանում է բանկերի միջնորդային դերի անխուսափելի հետևանքը:
- Երբեմն ֆինանսական հաշվետվությունների հրապարակայնության պակասը խանգարում է, նույնիսկ որոշ դեպքերում չի թողնում շահագրգիռ կողմերին ռազմավարական ուսումնասիրել բանկի ուժեղ և թույլ կողմերը: Բանկի

հաշվեկշռային և արտահաշվեկշռային դիրքերը կարող են ավելի արագ փոփոխվել, քան արտադրական և առևտրական կազմակերպություններում: Արդյունքում հաճախորդները բանկի մասին թերի տեղեկատվություն են ստանում, որն իր հերթին կարող է բացասաբար անդրադառնալ բանկի ֆինանսական վիճակի վրա:

Ելնելով տվյալ հետազոտություններից, բանկի վճարունակությունը մեծապես կախված է ավանդատուների վստահությունը ոչ միայն առանձին բանկերի, այլև բանկային համակարգի և ֆինանսական շուկաների նկատմամբ պահպանելու հնարավորությունից:

Ինչպես նշվեց, բանկային վերահսկողության ուշադրության կենտրոնում գտնվում է կոնկրետ բանկը, սակայն ավանդատուների համար ռիսկը նվազեցնելու, ինչպես նաև բանկային համակարգի անվտանգության և հուսալիության համար վերստուգողները նաև պետք է հաշվի առնեն խնդիրների ավելի լայն, համակարգային հետևանքները, այդ թվում՝ կոնկրետ բանկերի սնանկությունը:

Համակարգային հետևանքները կարող են կապված լինել մեկ կոնկրետ բանկի հետ, որը հիմնական կամ գլխավոր դեր է խաղում ազգային տնտեսական կյանքում: Սակայն հնարավոր է, որ ոչ մեծ բանկի դժվարություններն առաջ բերեն համակարգային խնդիրներ, եթե օրինակ, ավանդատուները սկսեն անհանգստանալ այլ բանկերի ապահով լինելու մասին և զանգվածաբար հանեն իրենց ավանդներն այդ բանկերից: Արդյունքում բանկերի զգալի մասը կարող է հայտնվել անվճարունակության խնդրի առջև: Նման իրավիճակները, որպես կանոն, կործանարար հետևանքներ են ունենում նույնիսկ կայուն տնտեսությունների համար:

Վերահսկողները պետք է հաշվի առնեն բոլոր նման հնարավորությունները: Երբեմն առկա մտահոգությունը կարող է բավարար հիմք հանդիսանալ բանկային համակարգի վերահսկողության ռեժիմը վերանայելու համար:

Կարելի է փաստել, որ բանկային վերահսկողությունը ունի նաև արտահայտված մակրոտնտեսական նշանակություն:

1.3. Բանկային վերահսկողության ընդհանուր դրույթները

Տարբեր երկրներում գոյություն ունեցող բանկային վերահսկողության ռեժիմների և փորձի բազմազանության հիմքում ընկած են ընդհանուր նպատակներ և դատողություններ: Վերահսկողները հիմնականում ձգտում են, որպեսզի բանկերը լինեն՝

- ֆինանսական տեսակետից ապահով
- բարձրակարգ ղեկավարվող
- ավանդատուների շահերին չսպառնացող:

Տվյալ նպատակներին հասնելու համար վերահսկողները ձգտում են ձևավորել լիարժեք դատողություններ հետևյալ հարցերի վերաբերյալ՝

- Ի՞նչ աստիճանի ռիսկով է աշխատում բանկը (ռիսկերի գնահատական):
- Ի՞նչ ռեսուրսներ ունի բանկը տվյալ ռիսկերը ղեկավարելու համար: Ռեսուրսները կարող են լինել նյութական (օրինակ՝ կապիտալ, բավարար ներգրավված միջոցներ) կամ ոչ նյութական (կառավարման որակ և հսկողության համակարգ):
- Բավարար է արդյո՞ք հայտնաբերած ռեսուրսների ծավալը՝ ռիսկը հավասարակշռելու համար:

Թեև վերստուգողներին անհրաժեշտ է ունենալ համապատասխան գիտելիքներ շուկայի և գործնական միջավայրի մասին, սակայն չի կարելի սպասել, որ նրանք բանկային գործի առևտրային շրջանում այնքան իրազեկ լինեն, որքան բանկի ղեկավարները: Ամեն դեպքում, առևտրային որոշում ընդունելը բանկի ղեկավարների բացառիկ իրավունքն է, այլ ոչ թե վերահսկողի պարտականությունը: Վերահսկողը պետք է վերստուգի և գնահատի բանկի գործունեությունը, քաղաքականությունը և ռազմավարությունը ամբողջությամբ: Անհրաժեշտության դեպքում, հիմնվելով կոնկրետ իրավական կամ տնտեսական չափանիշների վրա, նա պետք է կարծիք ձևավորի բանկի ապահովության և նրա ղեկավարության համապատասխանության մասին:

1.4. Իրավական և հաշվառման միջավայրեր

Որպես տնտեսվարող սուբյեկտներ, բանկերը գործում են տնտեսական ընդհանուր և բանկային առանձնահատկություններին բնորոշ իրավական և հաշվառման միջավայրերում: Համապատասխան իրավական և հաշվառման կառուցվածքները անհրաժեշտ են ոչ միայն շուկայական տնտեսությունում բանկային վերահսկողության արդյունավետ կազմակերպման, այլ նաև բանկերի համար՝ իրենց տնտեսական խնդիրները լուծելու առումով:

Իրավական կառուցվածքը պետք է կարգավորի հետևյալ հարցերը.

- բիզնեսի կազմակերպում սեփականության իրավունքի, տնտեսավարող սուբյեկտների իրավունքների և պարտավորությունների ստեղծում
- բանկերի հարաբերությունների իրավական կարգավորում հասարակայնության, տնտեսական կազմակերպությունների, պետական և վերահսկող մարմինների հետ
- սեփականությունը տնօրինելու իրավունք՝ որոնց օգնությամբ այն բանկերը, որոնք վարկառուից գրավ են վերցրել տրամադրված վարկի դիմաց, կարող են գրանցել այդ իրավունքը, իսկ ծայրահեղ դեպքում՝ իրացնեն գրավադրված գույքը և բավարարեն իրենց պահանջները
- անվճարունակություն պայմաններ և արարողակարգեր, որոնց օգնությամբ վարկատու բանկը կազմակերպությունից պարտքը չստանալու դեպքում կարող է պահանջել նրա սնանկ ճանաչումը:

Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերի գործունեությունը կարգավորվում են ՀՀ օրենքներով, ՀՀ կենտրոնական բանկի կամ կառավարության լիազորած պետական մարմնի հետ համատեղ հաստատված ենթաօրենսդրական ակտերով: Առաջինները բնութագրում են գործունեության ընդհանուր իրավական դաշտը, իսկ վերջինները՝ ավելի կոնկրետացնում են այդ դաշտը:

Հաշվառման համակարգերը պետք է ներառեն հետևյալ հարցերը.

- հաշվառման բնագավառում ստանդարտների համապատասխանեցված հավաքածու, որով պետք է առաջ-նորոշվեն բոլոր կազմակերպությունները ֆինանսական հաշվետվությունների պատրաստելիս, որը հեշտացնում է ռեսուրսների բաժանման գործընթացը

- կազմակերպությունների ֆինանսական հաշվետվությունների անկախ ստուգումը և սերտիֆիկացիան, որն իրականացվում է արտաքին աուդիտորների միջոցով

- ֆինանսական գործունեության աուդիտորական ստուգման արդյունքների հրապարակումը:

Բանկերի գործունեությունը կարգավորող հիմնական օրենքներն են.

- «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքը, որը սահմանում է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խնդիրները, իրավունքները և պարտավորությունները:

- «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքը, որը սահմանում է Հայաստանի Հանրապետության տարածքում ստեղծվող և գործող բանկերի, նրանց և օտարերկրյա բանկերի մասնաճյուղերի, ներկայացուցչությունների, գրանցման, լիցենզավորման, գործունեության կարգավորման և դադարեցման, ինչպես նաև բանկային գործունեության վերահսկողության կարգը և պայմանները:

- «Բանկերի և վարկային կազմակերպությունների սնանկության մասին» ՀՀ օրենքը, որը սահմանում է բանկերի անվճարունակ ճանաչելու հիմքերը և սնանկացման ընթացակարգը, բանկերի ավանդատուների և վարկատուների, սնանկացման այլ մասնակիցների իրավունքներն ու պարտականություններն այդ ընթացակարգում:

- «Բանկային գաղտնիքի մասին» ՀՀ օրենքը, որը սահմանում է բանկային գաղտնիք կազմող տեղեկությունները, այդ տեղեկությունների հրապարակման, պահպանման և տրամադրման իրավական հիմքերը և կարգը, բանկային գաղտնիքի շուրջ ծագող հարաբերությունների մասնակիցների իրավունքները և պարտականությունները, ինչպես նաև տվյալ օրենքի պահանջները խախտելու համար պատասխանատվությունը: Բանկային գաղտնիք են համարվում բանկի հաճախորդին սպասարկելու կապակցությամբ տվյալ բանկին հայտնի դարձած հաճախորդի հաշիվների վերաբերյալ տեղեկությունները, հաճախորդի հանձնարարությամբ կամ հօգուտ հաճախորդի կատարված գործառնությունների վերաբերյալ տեղեկությունները, ինչպես նաև նրա առևտրային գաղտնիքը և նրա վերաբերյալ ցանկացած այլ տեղեկություն, որը հաճախորդը մտադիր է գաղտնի պահել և բանկը տեղյակ է կամ կարող էր տեղյակ լինել այդ մտադրության վերաբերյալ:

- «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքը՝ կարգավորում է բանկերի հաշվապահական հաշվառմանը վերաբերող հարաբերությունները: ՀՀ բանկերում այն կարգավորվում է Կենտրոնական բանկի կողմից՝ Կառավարության լիազորած պետական մարմնի հետ համատեղ:

- «Արժույթային կարգավորման և արժույթային վերահսկողության մասին» ՀՀ օրենքը՝ սահմանում է ՀՀ-ում արժույթային գործառնությունների իրականացման ընդհանուր սկզբունքները, արժույթային վերահսկողության մարմինների լիազորությունները, արժույթային արժեքների տիրապետման, օգտագործման և տնօրինման բնագավառում իրավաբանական և ֆիզիկական անձանց իրավունքներն ու պարտականությունները, պատասխանատվությունը արժույթային օրենսդրությունը խախտելու համար:

Հաշվապահական հաշվառումը կարգավորող պետական մարմինն իր իրավասության սահմաններում հաստատում է կազմակերպությունների համար պարտադիր կատարման ենթակա.

ա) հաշվապահական հաշվառման ստանդարտները

բ) հաշվապահական հաշվառման հաշվային պլանները և դրանց կիրառման մասին հրահանգները

գ) հաշվապահական հաշվառումը կարգավորող իրավական այլ ակտեր:

ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի կողմից հաստատված կանոնակարգեր.

- «Բանկերի և օտարերկրյա բանկերի մասնաճյուղերի գրանցումը և լիցենզավորումը, մասնաճյուղերի և ներկայացուցչությունների գրանցումը» կանոնակարգ 1-ը սահմանում է ՀՀ տարածքում ստեղծվող և գործող բանկերի, օտարերկրյա բանկերի մասնաճյուղերի գրանցման և լիցենզավորման, մասնաճյուղերի, գործառնական գրասենյակների (կետերի) և ներկայացուցչությունների, ինչպես նաև օրենքով սահմանված փոփոխությունների գրանցման ընթացակարգերի մասով ՀՀ օրենքների համապատասխան դրույթների կիրառումն ապահովելու համար անհրաժեշտ կարգերն ու պայմանները:

- «Բանկերի գործունեության կարգավորումը, բանկային գործունեության տնտեսական նորմատիվները» կանոնակարգ 2-ը սահմանում է ՀՀ տարածքում գործող բանկերի և օտարերկրյա բանկերի մասնաճյուղերի համար ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանված հիմնական տնտեսական նորմատիվները:

- «Բանկերի հաշվետվությունները, դրանց ներկայացումը և հրապարակումը» կանոնակարգ 3-ով սահմանվում է ՀՀ կենտրոնական բանկի ներկայացվող հաշվետվությունները և նրանց ներկայացման ժամկետները:

- «Բանկերում վերստուգումների իրականացումը» կանոնակարգ 4-ը սահմանում է բանկերում, դրանց, ինչպես նաև օտարերկրյա բանկերի մասնաճյուղերում, գործառնական գրասենյակներում (կետերում), ներկայացուցչություններում ՀՀ կենտրոնական բանկի ծառայողների կողմից վերստուգումների անցկացման կանոնները:

- «Բանկերում և վարկային կազմակերպություններում հանցավոր ճանապարհով ձեռք բերված միջոցների շրջանառության և տեռորիզմի ֆինանսավորման կանխարգելման մասին» կանոնակարգ 5-ը սահմանում է բանկերի և վարկային կազմակերպությունների կողմից իրականացվող պարտադիր միջոցառումներն ու ընթացակարգերը, որոնք ուղղված են հանցավոր ճանապարհով ձեռք բերված միջոցների շրջանառության և տեռորիզմի ֆինանսավորման կանխարգելմանը:

- «Բանկերի վերակազմավորման և լուծարման ընթացակարգը» կանոնակարգ 6-ը կարգավորում է բանկերի վերակազմավորումը և լուծարումը՝ այն մասով, որը մտնում է ՀՀ կենտրոնական բանկի իրավասության մեջ:

- «Բանկերի սնանկացման ընթացակարգի մասին» կանոնակարգ 7-ը սահմանում և կարգավորում է բանկերի սնանկացման գործընթացը՝ այն նասով, որը նտնում է ՀՀ կենտրոնական բանկի իրավասության մեջ:
- «Հայաստանի Հանրապետության տարածքում արտարժույթային կարգավորումը և վերահսկողությունը» կանոնակարգ 8-ը սահմանում է Հայաստանի Հանրապետության տարածքում ընթացիկ հաշվի և կապիտալի շարժի հետ կապված գործարքների իրականացումը, արտարժույթը որպես վճարամիջոց օգտագործելու դեպքերը և վերահսկումը, արտարժույթի նկատմամբ հայկական դրամի փոխարժեքի որոշումը, արտարժույթի առք ու վաճառքի գործառնությունների լիցենզավորումը, կարգավորումը և վերահսկողությունը:
- «Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերում կանխիկ դրամով կատարվող գործառնությունները» կանոնակարգ 9-ը, որը կարգավորում է Հայաստանի Հանրապետության դրամի վճարունակության հատկանիշները, բանկերում ՀՀ դրամանիշների փոխանակումը, Կենտրոնական բանկում դրամը փորձաքննության ընդունելը և փոխանակելը, ՀՀ թղթադրամների և մետաղադրամների փաթեթավորումը, բանկերում կանխիկ դրամի վերահաշվման ժամանակ հայտնաբերված հաշվետախալների վերականգնման կանոնակարգումը, բանկերում կանխիկ դրամի և այլ արժեքների ինկասացիան, բանկերում դրամարկղային գործառնությունների իրականացումը:
- Բացի վերոհիշյալ կանոնակարգերից, ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի կողմից հաստատվել են.
 - «Բանկային իրավախախտումների» կանոնագիրքը, որը սահմանում է ՀՀ տարածքում գործող բանկերի, դրամց տարածքային ստորաբաժանումների, օտարերկրյա բանկերի մասնաճյուղերի (հետագայում՝ բանկ) կողմից վերջիններիս գործունեությունը կարգավորող օրենքների և այլ իրավական ակտերի պահանջների խախտումները, վարույթների ընթացակարգը, պատժամիջոցները, դրամց կիրառման կարգը:
 - այլ նորմատիվ ակտեր և կանոնակարգեր, որոնցով կարգավորվում են վերը նշված կանոնակարգերով չսահմանվող և ՀՀ կենտրոնական բանկի իրավասությանը ենթակա այլ հարցերը:
- ՀՀ կենտրոնական բանկի և Կառավարության լիազորած պետական մարմնի հետ համատեղ հաստատված կարգեր.
- «Բանկերի և բանկային գործունեության մասին» և «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքների համաձայն, բանկերի գործունեությունը կարգավորվում է նաև ՀՀ կենտրոնական բանկի և Կառավարության լիազորած պետական մարմնի՝ ՀՀ ֆինանսների նախարարության հետ համատեղ հաստատված կարգերի հիման վրա, մասնավորապես՝
 - «Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերի վարկերի ու դեբիտորական պարտքերի դասակարգման և հնարավոր կորուստների պահուստների ձևավորման» կարգով սահմանվում է հնարավոր կորուստների համար ընդհանուր և հատուկ պահուստավորումը, անհուսալի ճանաչված ակտիվների դուրսգրման հարցերը:
 - «Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերի ինվեստիցիոն արժեթղթերում ներդրումների հնարավոր կորուստների պահուստի ձևավորման և օգտագործման» կարգը կանոնակարգում է բանկերի կողմից ինվեստիցիոն արժեթղթերում ներդրումների դասակարգման, դրամց հնարավոր կորուստների պահուստի ձևավորման ու օգտագործման հարցերը:

Ինքնաստուգման հարցեր

1. Ինչո՞վ է պայմանավորված բանկերի գործունեության կարգավորման և պաշտոնական վերահսկողության անհրաժեշտությունը:
2. Որո՞նք են բանկային գործի առանձնահատկությունները:
3. Որո՞նք են բանկային գործի անկայուն բնույթի հետևանքները (այդ թվում՝ համակարգային հետևանքները):
4. Որո՞նք են բանկային վերահսկողության հիմքում ընկած ընդհանուր նպատակները և դատողությունները:
5. Որո՞նք են վերահսկողների իրավասությունները:
6. Որո՞նք են իրավական կառուցվածքով կարգավորվող հարցերը:
7. Որո՞նք են հաշվառման համակարգերում ընդգրկվող հարցերը:
8. Որո՞նք են ՀՀ տարածքում բանկերի գործունեությունը կարգավորող հիմնական օրենքները, ներկայացնել թե՛ դրանցից յուրաքանչյուրն ի՞նչ է սահմանում:
9. Որո՞նք են ՀՀ կենտրոնական բանկի կանոնակարգերը և դրանցով կարգավորվող հարաբերությունները (հարցերը):
10. Որո՞նք են ՀՀ կենտրոնական բանկի և Կառավարության լիազորած պետական մարմնի հետ համատեղ հաստատված կարգերը և դրանց կարգավորման առարկան:

ԳԼՈՒԽ 2. ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ՎԵՐԱՀՍԿՄԱՆ ՌԵԺԻՄ

Թեմայի նպատակն է՝ պարզաբանել տեղերում և փաստաթղթային վերահսկողությունը, ամփոփ ներկայացնել փաստաթղթային վերահսկողությունը, ներկայացնել Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերում, ինչպես նաև օտարերկրյա բանկերի մասնաճյուղերում վերստուգումների իրականացման կարգը:

Ունակությունների և հմտությունների նկարագիրը: Թեման ուսումնասիրելուց հետո ուսանողները կկարողանան՝

- տարբերել տեղերում և փաստաթղթային վերահսկողությունը
- ամփոփ բնութագրել փաստաթղթային վերահսկողությունը
- նկարագրել Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերում, ինչպես նաև օտարերկրյա բանկերի մասնաճյուղերում վերստուգումների իրականացման ընթացակարգը, այդ թվում՝
 - ⇒ համալիր վերստուգումների ընթացակարգը
 - ⇒ բանկերում համալիր վերստուգումների իրականացման ռազմավարությունը
 - ⇒ նպատակային վերստուգումների ընթացակարգը
 - ⇒ թվարկել բանկերի իրավունքներն ու պարտականությունները
- ներկայացնել բանկային վերահսկողի խնդիրները:

Յուրաքանչյուր երկիր ինքն է որոշում լիցենզավորման և վերահսկողության գործառնությունները կենտրոնական բանկին կամ մեկ այլ կազմակերպության տալու հարցը: Միջազգային պրակտիկայում ընդունված են տարբեր մոտեցումներ, որոնք հաշվի են առնում տեղական առանձնահատկությունները, ինչպես նաև այն հանգամանքը, թե երկրի իշխանությունները որքանով են կարևորում բանկային վերահսկողությունն ընդհանրապես:

Ամեն դեպքում, շատ կարևոր է, որ վերահսկողություն իրականացնող մարմինը անկախ լինի քաղաքական կամ այլ արտաքին ներգործությունից, որպեսզի որոշումներն ընդունվեն բանկային վերահսկողության օբյեկտիվ սկզբունքներով: Ոչ պակաս կարևոր է այնպիսի մեխանիզմի գոյությունը, որի օգնությամբ վերահսկող մարմինները կարողանան հաշվետվություն տալ իրենց կատարած աշխատանքների մասին՝ կառավարությանը կամ խորհրդարանին:

2.1. Վերահսկողությունը ՀՀ բանկերի նկատմամբ

Հայաստանի Հանրապետությունում բանկային գործունեության նկատմամբ վերահսկողության բացառիկ իրավունքը պատկանում է Կենտրոնական բանկին:

Բանկային վերահսկողությունը սկսվում է լիցենզավորման գործընթացից: Համապատասխան օրենքով սահմանված դրույթներով լիցենզավորման գործընթացը պետք է լինի խիստ և մանրակրկիտ: Բոլոր վերահսկողները համաձայն են այն բանի հետ, որ հապճեպ լիցենզավորումը բերում է երկարատև հիասթափության: Լեցենզավորման, ինչպես նաև լիցենզիան հետ կանչելու կամ նրա վրա սահմանափակումներ դնելու մասին որոշումները պետք է ընդունվեն այն հիմքերի վրա, որոնք, մի կողմից, կապահովեն արդարությունը և մյուս կողմից, թույլ կտան այդ որոշումների հետ առնչվող անձանց բացատրել և բողոքարկել անբարենպաստ որոշումները:

2.1.1. Տեղերում իրականացվող և ոչ ելքային վերահսկողություն

Մի շարք երկրներում բանկային վերահսկողության մոտեցման հիմնական օղակ է հանդիսանում տեղերում (ելքային կամ on-site) վերստուգումներ անցկացնելը և դրա շնորհիվ սեփական տեղեկատվության ստացումը, այն ժամանակ, երբ այլ երկրներում նախապատվությունը տրվում է ոչ ելքային (փաստաթղթային կամ off-site) ստուգումներին, այսինքն՝ ուսումնասիրվում է բանկերի կողմից ներկայացվող տեղեկատվությունը:

Տվյալ մոտեցումները հաճախ դիտվում են որպես միմյանց լրացնող, այլ ոչ թե այլընտրանքային, և երբ ստուգումներն անցկացվում են համատեղ, բանկային վերահսկողությունը դառնում է առավել արդյունավետ:

Փաստաթղթային վերահսկողություն

Այսպիսի վերահսկողությունը ենթադրում է վերստուգող մարմիններին ներկայացված ֆինանսական հաշվետվությունների և վիճակագրական տվյալների ստուգում և վերլուծություն:

Տվյալ տեղեկատվության վերլուծությունը ենթադրում է վերահսկել յուրաքանչյուր բանկի գործունեությունը և վերահսկող մարմինների կողմից ներկայացվող պահանջների ժամանակին կատարումը, ինչպես նաև հայտնաբերում է առաջացած խնդիրները: Այսպիսով, տվյալ գործընթացը կարող է օգտակար լինել տեղերում իրականացվող վերստուգումներին հատկացված ռեսուրսների ավելի արդյունավետ օգտագործման համար: Բանկի կողմից տրամադրված տվյալների և նրա գործունեության արդյունքների համեմատումը մեկ այլ բանկի համանման ցուցանիշների հետ նույնպես կարող է մեծ նշանակություն ունենալ: Բանկերի գործունեության արդյունքների համեմատական վերլուծությունները (UBPR) նույնպես հիմնված են բանկերից ստացված հաշվետվությունների և այլ տեղեկատվության վրա:

Այս կարգով իրականացվող վերստուգումները կախված են բանկերի կողմից ժամանակին և ճշգրիտ տեղեկատվության ներկայացումից, առանց որի ստուգման ամբողջ ընթացքը հենց ի սկզբանե կունենա լուրջ թերություններ:

Ինչպես արդեն նշել ենք, ՀՀ տարածքում գործող բանկերի կողմից Կենտրոնական բանկ ներկայացվող հաշվետվությունները և դրանց ներկայացման ժամկետները սահմանվում են «Բանկերի հաշվետվությունները, դրանց ներկայացումը և հրապարակումը» կանոնակարգ 3-ով, իսկ բանկերի և օտարերկրյա բանկերի մասնաճյուղերի համար ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանված հիմնական տնտեսական նորմատիվները՝

«Բանկերի գործունեության կարգավորումը, բանկային գործունեության տնտեսական նորմատիվները» կանոնակարգ 2-ով:

Տեղերում իրականացվող (երթային) վերստուգումներ

Այսպիսի վերահսկողությունը հնարավորություն է տալիս անցկացնել բանկի գործունեության և վիճակի մասին անկախ ստուգում, ինչպես նաև ստուգել բանկի կողմից ներկայացվող տվյալների արժանահավատությունը: Օգտվելով ընտրական մեթոդից, վերստուգողները հիմնականում ուշադրություն են դարձնում բանկի հաշվառման և վերահսկման համակարգերին և նրան, թե որքանով է այն համապատասխանում ընդունված չափանիշներին, ինչպես նաև բանկի քաղաքականությանը և գործառնական արարողակարգերին, որից ելնելով տալիս են հիմնավորված գնահատականներ բանկի գործունեության այս կամ այն ուղղության մասին:

Յայտատանի Յանրապետության տարածքում գործող բանկերում, դրանց, ինչպես նաև օտարերկրյա բանկերի տարածքային ստորաբաժանումներում գործունեության նկատմամբ վերահսկողության բացառիկ իրավունքը պատկանում է ՀՀ կենտրոնական բանկին: Տեղերում վերստուգումներն իրականացվում են ՀՀ կենտրոնական բանկի բանկային վերահսկողության ծառայության աշխատակիցների կողմից:

Բանկերում վերստուգումներն անցկացվում են ՀՀ կենտրոնական բանկի նախագահի հրամանի կամ ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի որոշման և դրանց հիման վրա բանկային վերահսկողության ծառայության ղեկավարի կողմից տրված լիազորագրով:

Վերստուգում իրականացնելու մասին ՀՀ կենտրոնական բանկի նախագահի հրամանում կամ ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի որոշման մեջ նշվում են վերստուգվող բանկի անվանումը, վերստուգման տեսակը և նպատակը, իսկ լիազորագրում՝ վերստուգող խմբի կազմը, այդ թվում՝ ղեկավարը, վերստուգում անցկացնելու սկիզբը և ավարտը:

Վերստուգող խմբում, որպես կանոն, ընդգրկվում են բանկային վերահսկողության ծառայության աշխատակիցները, իսկ անհրաժեշտության դեպքում՝ նաև ՀՀ կենտրոնական բանկի կառուցվածքային այլ ստորաբաժանումների աշխատակիցները: Այլ ստորաբաժանումների կողմից վերստուգմանը մասնակցելու կապակցությամբ առաջացած տարածայնությունները լուծում է ՀՀ կենտրոնական բանկի նախագահը:

Վերստուգող խմբի անդամների թիվը չի կարող 2-ից պակաս լինել:

Վերստուգումներն անցկացվում են բանկի հիմնադիր փաստաթղթերի, դրանցում կատարված փոփոխությունների, կառավարման մարմինների որոշումների, բանկի ղեկավար մարմինների հրամանների, կարգադրությունների, կատարված գործառնականությունների արդյունքում կազմված հաշվապահական հաշվառման փաստաթղթերի, ֆինանսական հաշվետվությունների, պայմանագրերի (ակտերի, արձանագրությունների և այլն) ինչպես նաև համակարգիչներում և էլեկտրոնային կրիչների վրա պահպանվող տեղեկատվության ուսումնասիրության և վերլուծության միջոցով:

Կողմերի իրավունքներն ու պարտականությունները.

Վերստուգվող բանկի ղեկավարությունը պարտավոր է ընդունել և աջակցել վերստուգող խմբին, մասնավորապես՝

ա) ապահովել վերստուգման ընթացքում վերստուգող խմբի անդամների անարգել մուտքը և ելքը բանկի շենք կամ նրա առանձին ծառայողական տարածքներ ամբողջ աշխատանքային օրվա ընթացքում, իսկ ոչ աշխատանքային օրերին և ժամերին՝ ըստ փոխադարձ պայմանավորվածության

բ) վերստուգման առաջին օրը կազմակերպել վերստուգող խմբի անդամների հանդիպումը բանկի գործադիր մարմնի ղեկավարի (ղեկավարների) և վերստուգմանն աջակցող իրավասու անձանց հետ

գ) վերստուգող խմբին հատկացնել աշխատանքային տարածք, որն ապահովված է աշխատելու համար բավարար պայմաններով, ինչպես նաև տեխնիկական և կապի միջոցներով:

Վերստուգող խումբը վերստուգումներ իրականացնելու նպատակով իրավասու է.

ա) անարգել մուտք գործել բանկի բոլոր տարածքները, բացառությամբ դրամապահոցի, որտեղ մուտքը կատարվում է միայն բանկի համապատասխան աշխատակիցների ուղեկցությամբ

բ) օգտվել վերստուգման համար անհրաժեշտ, բանկում առկա կազմակերպատեխնիկական միջոցներից, ինչպես նաև վերստուգվող բանկ բերել և տանել համակարգիչ, մագնիսական կրիչներ (դիսկետներ), հաշվիչներ և այլն

գ) վերստուգվող բանկի ղեկավարներից և իրավասու աշխատակիցներից պահանջել վերստուգման համար անհրաժեշտ փաստաթղթեր՝ կնքված բանկի կնիքով և ստորագրված իրավասու անձանց կողմից, այդ թվում՝

- բանկի հիմնադիր փաստաթղթեր, դրանցում կատարված փոփոխություններ, բանկի կառավարման մարմինների որոշումներ, բանկի ղեկավար մարմինների հրամաններ և կարգադրություններ, ներքին վերահսկողության ակտեր
- պայմանագրեր, գրագրություններ, դրամարկահաշվարկային փաստաթղթեր, ֆինանսական հաշվետվություններ, սկզբնական և այլ հաշվապահական փաստաթղթեր
- տեղեկություններ կատարված գործառնականությունների վերաբերյալ, մերժված վարկային հայտեր, հաճախորդների բողոք-դիմումներ
- բանկի գործունեությունն ապահովող համակարգչային համակարգի հետ կապված փաստաթղթեր
- անկախ աուդիտային կազմակերպության հետ ունեցած հարաբերություններին առնչվող բոլոր փաստաթղթերը, ինչպես նաև բանկի վերստուգիչ հանձնաժողովի հաշվետվությունը, բանկի գործունեության ծրագրի կատարման ընթացքի և նախորդ վերստուգման արդյունքներով հայտնաբերված խախտումների ու թերությունների վերացման ուղղությամբ բանկի ձեռնարկած միջոցառումների մասին տեղեկատվություն և այլ անհրաժեշտ փաստաթղթեր՝ վերստուգումները ժամանակին և սպառիչ իրականացնելու համար

դ) անհրաժեշտության դեպքում ինքնուրույն կամ վերստուգվող բանկի օգնությամբ պատճենահանել անհրաժեշտ փաստաթղթեր, ֆայլեր, հաշվողական ցանցում կամ առանձին համակարգչային համակարգում պահվող գրառումներ

ե) վերստուգվող բանկի ղեկավարությանը և իրավասու աշխատակիցներին իրենց իրավասության սահմաններում ներկայացնել հիմնավոր այլ պահանջներ, եթե դրանք բխում են վերստուգման անհրաժեշտությունից և նպատակից:

զ) հաճախորդների համաձայնությամբ վերջիններից ստանալ իրավական ակտերի պահանջների պահպանման վերաբերյալ գրավոր տեղեկատվություն, որն անհրաժեշտ է փաստացի հանգամանքները, այդ թվում՝ վերստուգվող բանկից ստացված փաստաթղթերում պարունակվող տվյալների հավաստիությունը հաստատելու համար:

Վերստուգման ամբողջ ընթացքում, առանց վերստուգող խմբի անդամների թույլտվության, կողմնակի անձանց մուտքը վերստուգող խմբին հատկացված տարածք արգելվում է: Վերստուգող խմբին հատկացված տարածքն աշխատանքային օրվա ավարտին կարող է կնքվել և հանձնվել վերստուգվող բանկի պահպանությանը:

Անհրաժեշտության դեպքում, վերստուգող խմբի ղեկավարն իրավասու է կնքել բանկի առանձին ծառայողական տարածքները, եթե տվյալ պահին այլ կերպ հնարավոր չէ ապահովել դրանցում պահվող փաստաթղթերի, կանխիկ դրամի և այլ արժեքների վերստուգումը, հաշվառումը կամ գույքագրումը: Այս դեպքում կազմվում է համապատասխան ակտ, որը ստորագրվում է վերստուգող խմբի ղեկավարի և բանկի համապատասխան աշխատակիցների կողմից:

Բանկերում վերստուգումներ իրականացնելիս արգելվում է ՀՀ կենտրոնական բանկի վերստուգող խմբի օրինական գործողություններին խոչընդոտել կամ միջամտել: Վերստուգվող բանկի ղեկավարների և իրավասու աշխատակիցների կողմից վերստուգման ընթացքում վերստուգողների օրինական պահանջները չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը, այդ թվում՝ ուշացնելը, ինչպես նաև կեղծ կամ անարժանահավատ տվյալներ ներկայացնելը համարվում է վերստուգումների խոչընդոտում:

Վերստուգող խմբի անդամների պարտավորությունները.

- վերստուգող խմբի անդամները պատասխանատվություն են կրում ժամանակավորապես իրենց տրամադրված փաստաթղթերի ապահովության և վերադարձնելիության համար
- վերստուգող խմբի անդամներն իրենց ստուգումների ընթացքում չպետք է խանգարեն բանկի բնականոն աշխատանքին
- վերստուգող խմբի անդամները պարտավոր են պահպանել ստուգման ընթացքում իրենց հայտնի դարձած տեղեկատվության գաղտնիությունը:

Բանկերում վերստուգումների իրականացման արդյունքում կազմված հաշվետվություններում և ակտերում (տեղեկանքներում) պարունակվող տեղեկությունները համարվում են բանկային գաղտնիք, որոնք կարող են տրամադրվել բացառապես օրենքով նախատեսված հիմքերով և կարգով:

2.1.2. Բանկերում համալիր վերստուգումների իրականացման ռազմավարությունը

Բանկերում համալիր վերստուգումներն իրականացվում են ըստ տարբերակված մոտեցումների, մասնավորապես՝ ֆինանսապես առողջ և հեռանկարային բանկերում համալիր վերստուգումներն անց են կացվում ավելի պակաս պարբերականությամբ, քան մնացած բանկերում:

Նոր հիմնադրվող բանկերում հերթական համալիր վերստուգումներն իրականացվում են նրանց գործունեության մեկ տարին լրանալուց հետո:

Բանկերում համալիր վերստուգումները նախատեսված է անցկացնել 3 տարին մեկ անգամ, եթե վերջին վերստուգումներին հաջորդող երկու տարվա ընթացքում

- փաստաթղթային (off-site) վերահսկողության տվյալներով, ըստ գնահատման CAMELS համակարգի, բանկն ունի միջին համակարգայինից բարձր վարկանիշ
- բանկը չի խախտել հիմնական տնտեսական նորմատիվները
- բանկն ունի վճարունակության բարձր ցուցանիշներ. կապիտալի համարժեքության նորմատիվների փաստացի մեծությունները 2 և ավելի անգամ գերազանցում են սահմանված նորմատիվները
- բանկն աշխատել է շահութաբերությամբ. շահութաբերության ցուցանիշներն ըստ ընդհանուր կապիտալի և ընդհանուր ակտիվների, գերազանցում են համակարգային միջին ցուցանիշները
- յուրաքանչյուր տարի բանկն ստուգվել է անկախ աուդիտորական կազմակերպության կողմից, և վերջինիս հրապարակած եզրակացությունը դրական է
- բանկում գործում է ներքին վերահսկողության արդյունավետ մեխանիզմ, վերստուգիչ հանձնաժողովը պատշաճորեն է կատարել օրենքով նախատեսված գործառնությունները:

Բանկերում համալիր վերստուգումները նախատեսված է անցկացնել 2 տարին մեկ անգամ, եթե վերջին վերստուգմանը հաջորդող 1,5 տարվա ընթացքում

- փաստաթղթային վերահսկողության տվյալներով, ըստ գնահատման CAMELS համակարգի, բանկն ունի միջին համակարգայինի մոտ վարկանիշ
- բանկի կողմից մեկ ֆինանսական տարվա ընթացքում հիմնական տնտեսական նորմատիվների թույլ տրված խախտումների թիվը չի գերազանցում 3-ը
- բանկի կապիտալի համարժեքության փաստացի նորմատիվները 1,5-2 անգամ գերազանցում են սահմանված նորմատիվները
- բանկի շահութաբերության ցուցանիշները մոտ են համակարգային միջին ցուցանիշներին
- յուրաքանչյուր տարի բանկն ստուգվել է անկախ աուդիտորական կազմակերպության կողմից, և վերջինիս հրապարակած եզրակացությունը դրական է

- Կենտրոնական բանկը բանկի վերստուգիչ հանձնաժողովի գործունեությունը գնահատել է բավարար: Բանկերում համալիր վերստուգումները նախատեսված է իրականացնել յուրաքանչյուր տարի, եթե՝
- փաստաթղթային (off-site) վերահսկողության տվյալներով, ըստ գնահատման CAMELS համակարգի, բանկն ունի միջինից ցածր վարկանիշ
- բանկն ունի վճարունակության և իրացվելիության լուրջ հիմնախնդիրներ
- բանկը պարբերաբար խախտել է հիմնական տնտեսական նորմատիվները
- բանկի շահութաբերության ցուցանիշները համակարգային միջին ցուցանիշներից ցածր են
- բանկը չի ստուգվել անկախ աուդիտորական կազմակերպության կողմից
- նախորդ վերստուգման արդյունքներով ԿԲ վերստուգող խումբը հիմնավորել է մեկ տարի անց բանկում համալիր վերստուգում անցկացնելու անհրաժեշտությունը:

Համալիր վերստուգումները պետք է կրեն ոչ միայն զուտ տեսչական (վերահսկողական) բնույթ, այլև վերստուգումների արդյունքներով, անհրաժեշտության դեպքում, ելնելով տեսչական վերահսկողության փորձից՝ բանկին պետք է ներկայացվեն խորհրդատվական բնույթի առաջարկություններ (մասնավորապես, բանկի կառավարման բարելավման, ներքին վերահսկողության արդյունավետ մեխանիզմների ներդրման, ակտիվների և պասիվների հավասարակշռված կառավարման և այլ հարցերի գծով):

Բանկերում համալիր վերստուգումների անցկացման հաճախականությունը որոշելիս հաշվի են առնվում նաև անկախ աուդիտային ստուգումների արդյունքները:

2.1.3. Վերստուգումների տեսակները

Վերստուգումները լինում են՝

ա) համալիր վերստուգումներ, այդ թվում՝

- հերթական
- արտահերթ:

բ) նպատակային վերստուգումներ:

Համալիր վերստուգումներ

Բանկերում համալիր վերստուգումներն իրականացվում են բանկերի գործունեությունը կարգավորող օրենքների և իրավական ակտերի պահանջներին բանկի կողմից իրականացվող գործունեության համապատասխանությունը, ՀՀ կենտրոնական բանկ ներկայացված հաշվետվություններում և տեղեկատվություններում արտացոլված տվյալների արժանահավատությունը պարզելու, ֆինանսական վիճակը, արդյունքները, ռիսկերը և վերստուգման արդյունքներով CAMELS համակարգով բանկը գնահատելու նպատակով:

Դերթական համալիր վերստուգումներն իրականացվում են բանկերում համալիր վերստուգումների իրականացման ռազմավարությանը համապատասխան՝ ՀՀ կենտրոնական բանկի բանկային վերահսկողության ծառայության ղեկավար կողմից հաստատված ծրագրի համաձայն:

Բանկերի համալիր վերստուգումների ժամանակ պարտադիր կատարվում է ամփոփ վերլուծություն և գնահատում հետևյալ ուղղություններով՝ կապիտալի համարժեքություն, ակտիվների որակ, կառավարում, ֆինանսական արդյունքներ (եկամուտներ և ծախսեր), իրացվելիություն, ռիսկերի գնահատում, օրենսդրության պահանջների պահպանում:

Համալիր վերստուգումների ընթացքում կատարվում է բանկի ընդհանուր ակտիվների առնվազն 70%-ի, բայց ոչ պակաս, քան եկամտաբեր ակտիվների (վարկային, ինվեստիցիոն ներդրումներ և այլն) 70 %-ի ուսումնասիրություն:

Համալիր վերստուգումների ժամկետը կախված է բանկի ակտիվների ծավալից, տարածքային ստորաբաժանումների քանակից և, որպես կանոն, սահմանվում է մինչև 60 օր: Անհրաժեշտության դեպքում վերստուգումների տևողությունը բանկային վերահսկողության ծառայության տնօրենի կողմից կարող է երկարաձգվել մինչև 30 օր ժամկետով:

Համալիր վերստուգումների ամբողջ ընթացքում բանկի շենքի մուտքին փակցվում է հայտարարություն, որտեղ նշվում է ՀՀ կենտրոնական բանկի կողմից վերստուգում իրականացնելու, բանկի հաճախորդներից առաջարկություններ ու հայտարարություններ ստանալու հնարավորության մասին, ինչպես նաև վերստուգող խմբի հեռախոսահամարը: Բանկի ղեկավարները պարտավոր են վերստուգող խմբին տրամադրել բանկի հաճախորդներից և մասնակիցներից ստացված բողոքները և առաջարկությունները: Անհրաժեշտության դեպքում կարող է կազմակերպվել վերստուգող խմբի հանդիպում բանկի հաճախորդների և մասնակիցների հետ:

Դերթական համալիր վերստուգումներն իրականացվում են վերստուգումների ժամանակացույցի հիման վրա, որը կազմվում է յուրաքանչյուր տարվա համար և հաստատվում ՀՀ կենտրոնական բանկի նախագահի հրամանով:

Դերթական համալիր վերստուգումներն իրականացվում են ոչ ավելի, քան ֆինանսական տարին մեկ անգամ:

Արտահերթ համալիր վերստուգումները

Արտահերթ համալիր վերստուգումները նշանակվում են ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի գաղտնի որոշմամբ: Դրանց իրականացման համար հիմք կարող են հանդիսանալ՝

- հիմնական տնտեսական նորմատիվների պարբերաբար խախտումները
- CAMELS-ի ցուցանիշներում վտանգավոր միտումների ի հայտ գալը
- ՀՀ կենտրոնական բանկի բանկային վերահսկողության ծառայության հիմնավորումը:

Համալիր վերստուգումների ավարտից հետո՝ մեկշաբաթյա ժամկետում, բանկի ղեկավարության և վերստուգող խմբի անդամների մասնակցությամբ անցկացվում է վերստուգման արդյունքների նախնական քննարկում, որին,

անհրաժեշտության դեպքում, կարող են հրավիրվել նաև տվյալ բանկում աուդիտային ստուգում անցկացրած անկախ աուդիտորական կազմակերպության ներկայացուցիչները:

Համալիր վերստուգման համար սահմանված ժամկետը լրանալուց հետո՝ երկշաբաթյա ժամկետում, վերստուգման արդյունքների և բանկի հետ քննարկման արդյունքների հիման վրա վերստուգող խմբի կողմից կազմվում է հաշվետվություն 2 օրինակից, որոնք վերստուգող խմբի կողմից ստորագրվում և հանձնվում են բանկի ղեկավարությանը: Բանկի ղեկավարությունը մեկ շաբաթվա ընթացքում ծանոթանում է հաշվետվությանը, և բանկի գործադիր տնօրենը (վարչության նախագահը) ստորագրում է այն «Հաշվետվության հետ ծանոթացել եմ» մակագրությամբ և մեկ օրինակը վերադարձնում վերստուգող խմբին:

Բանկի գործադիր տնօրենը (վարչության նախագահը) կարող է հաշվետվությանը կից ներկայացնել իր առարկություններն ու բացատրությունները: Վերստուգող խումբը հաշվետվությունը բանկի գործադիր տնօրենի (վարչության նախագահի) առարկությունների ու բացատրությունների հետ միասին ներկայացնում է ՀՀ կենտրոնական բանկի բանկային վերահսկողության ծառայությանը համապատասխան բաժնի պետին, որը հաշվետվությունը ստանալուց հետո՝ 1 շաբաթվա ընթացքում, իր եզրակացությունների և առաջարկությունների հետ այն ներկայացնում է ՀՀ կենտրոնական բանկի բանկային վերահսկողության ծառայության ղեկավարին:

ՀՀ կենտրոնական բանկի բանկային վերահսկողության ծառայության ղեկավարը կազմակերպում է ներկայացված նյութերի քննարկում, որին, անհրաժեշտության դեպքում, կարող են մասնակցել նաև ՀՀ կենտրոնական բանկի այլ ստորաբաժանումների աշխատակիցներ, իսկ վերստուգվող բանկի կողմից առարկությունների և բացատրությունների առկայության դեպքում՝ պարտադիր նաև բանկի ղեկավարներն ու տվյալ բանկում աուդիտային ստուգում անցկացրած անկախ աուդիտորական կազմակերպության ներկայացուցիչները: Վերջում քննարկման արդյունքները ներկայացվում են ԿԲ նախագահին:

Նպատակային վերստուգումներ

Նպատակային վերստուգումներն իրականացվում են, հիմք ընդունելով.

- ՀՀ կենտրոնական բանկ ներկայացվող հաշվետվություններում արտացոլված տվյալների անարժանահավատության կամ կատարված գործառնությունների օրինականության վերաբերյալ ՀՀ կենտրոնական բանկի բանկային վերահսկողության ծառայության հիմնավորումը
- ՀՀ կենտրոնական բանկի կառուցվածքային այլ ստորաբաժանումների կողմից ներկայացվող հիմնավորված առաջարկությունները
- պետական մարմինների առաջարկությունները
- բանկի հաճախորդների կամ մասնակիցների բողոքները:

Նպատակային վերստուգումները, որպես կանոն, իրականացվում են առանց բանկին նախապես ծանուցելու և ըստ հետևյալ հիմնական ուղղություններով.

- հիմնադիր փաստաթղթերում կատարված փոփոխությունների օրինականության վերստուգում
- բանկի ընդհանուր կապիտալի մեծության գնահատում
- բանկի իրացվելիության գնահատում
- ակտիվների վերլուծություն, դասակարգում և գնահատում
- բանկի կառավարման որակի գնահատում
- բանկի ֆինանսական արդյունքների (եկամուտներ և ծախսեր) գնահատում
- ռիսկերի առանձին տեսակների գնահատում
- դրամական միջոցների հոսքերի գնահատում
- ՀՀ կենտրոնական բանկ ներկայացված հաշվետվություններում և տեղեկատվություններում արտացոլված տվյալների արժանահավատության վերստուգում
- ՀՀ կենտրոնական բանկի հանձնարարականների ու առաջարկությունների կատարման ընթացքի վերստուգում
- ֆինանսական գործառնությունների առանձին տեսակների օրինականության վերստուգում:

Նպատակային վերստուգումների իրականացման ժամկետները, որպես կանոն, սահմանվում են մինչև 15 օր:

Նպատակային վերստուգումների ավարտից հետո վերստուգող խումբը վերստուգման արդյունքները քննարկում է բանկի ղեկավարի (ղեկավարների) հետ: Անհրաժեշտության դեպքում քննարկմանը կարող են մասնակցել վերստուգման խնդրին առնչվող բանկի համապատասխան ստորաբաժանումների աշխատակիցները:

Վերստուգումների արդյունքների և բանկի հետ քննարկումների հիման վրա վերստուգող խմբի կողմից կազմվում է ակտ, որն ստորագրվում է վերստուգող խմբի և բանկի ղեկավարի կողմից: Ակտը կազմվում է 2 օրինակից, որոնցից մեկը հանձնվում է վերստուգվող բանկի ղեկավարին: Բանկի գործադիր տնօրենը (վարչության նախագահը) կարող է ակտին կից ներկայացնել իր առարկություններն ու բացատրությունները:

Ակտի մյուս օրինակը հանձնվում է բանկային վերահսկողության ծառայության համապատասխան բաժնի պետին: Վերջինս 5 օրվա ընթացքում բանկային վերահսկողության ծառայության ղեկավարին է ներկայացնում ակտը և դրա վերաբերյալ իր եզրակացություններն ու առաջարկությունները: Վերջինս ներկայացված նյութերի վերաբերյալ կազմակերպում է քննարկում, որին անհրաժեշտության դեպքում կարող են հրավիրվել նաև ՀՀ կենտրոնական բանկի այլ ստորաբաժանումների աշխատակիցներ և վերստուգվող բանկի ներկայացուցիչներ:

2.1.4. Վերստուգման արդյունքների ամփոփումը

Վերստուգման արդյունքները բանկային վերահսկողության ծառայության ղեկավարի կողմից ներկայացվում են ՀՀ կենտրոնական բանկի նախագահին: Վերջինիս մոտ իրականացվող քննարկման արդյունքում, բանկային իրավախախտումների առկայության դեպքում կայացվում են համապատասխան որոշումներ:

Վերստուգման ընթացքում բացահայտված խախտումների վարույթն իրականացվում է օրենսդրությամբ սահմանված կարգով:

Վերստուգումների ընթացքում հաստատապես հայտնի, նախապատրաստվող կամ արդեն իսկ կատարված քրեորեն հետապնդելի արարքի հատկանիշներ պարունակող խախտումների բացահայտման դեպքում ՀՀ կենտրոնական բանկն այդ մասին ծանուցում է համապատասխան իրավապահ մարմիններին:

2.2. Բանկային իրավախախտումների արձանագրումը, պատժամիջոցների կիրառումը և վարույթների ընթացակարգը

Այն կարգավորվում է ՀՀ ԿԲ կողմից ընդունված «ՀՀ տարածքում գործող բանկերի, օտարերկրյա բանկերի մասնաճյուղերի, կամ դրանց ղեկավարների կողմից բանկային օրենսդրության խախտումների արձանագրման, վարույթների ընթացակարգի և պատժամիջոցների կիրառման մասին» կարգով:

Պատժամիջոցների կիրառումն ունի կանխարգելիչ բնույթ, որի նպատակն է կանխել բանկերի կողմից օրենսդրության խախտումները, ապահովել ՀՀ բանկային համակարգի հուսալիությունը, բնականոն գործունեությունը, բանկերի գործունեության համար ազատ տնտեսական մրցակցության հավասար պայմանների ստեղծումը, ինչպես նաև Կենտրոնական բանկի այլ խնդիրների իրագործումը:

Տվյալ կարգի իմաստով.

▪ խախտում է համարվում՝ բանկի և (կամ) նրա ղեկավարի ուղղակի կամ անուղղակի այն գործողությունները կամ անգործությունը, որոնք հակասում են բանկային գործունեությունը կարգավորող օրենքների և այլ օրենքներից բխող այլ իրավական ակտերի պահանջները

▪ չհիմնավորված ռիսկային գործունեություն՝ այն գործունեությունը, կամ անգործությունը, որի հետևանքով բանկը կրել է կամ ԿԲ հիմնավոր կարծիքով կկրի էական ֆինանսական վնաս՝ վտանգելով հաճախորդների շահերը

▪ անարժանահավատ տվյալներ՝ ԿԲ ներկայացվող հաշվետվություններում կամ հրապարակման ենթակա տեղեկատվությունում արտացոլված և իրականությանը չհամապատասխանող տվյալներ:

Բանկի կամ բանկի ղեկավարի կողմից թույլ տրված խախտումը արձանագրվում է ԿԲ բանկային վերահսկողության ծառայության համապատասխան ստորաբաժանման կողմից արձանագրություն կազմելու միջոցով, որտեղ եռօրյա ժամկետում ուղարկվում է բանկի ղեկավարությանը, որն իր հերթին կարող է յոթ օրվա ընթացքում ԿԲ ներկայացնել առարկություններ և պարզաբանումներ: Բանկային վերահսկողության ծառայության ստորաբաժանումը իրավաբանական պարզաբանումներ ստանալու համար դիմում է ԿԲ իրավաբանական վարչությանը: Վերը նշված ժամկետները անցնելուց հետո խախտման արձանագրությունը, կից փաստաթղթերի հետ ներկայացվում է ԿԲ լիցենզավորման և վերահսկողության հարձնաժողովին: Քննարկումների արդյունքում կայացվում է որոշում հետևյալ պատժամիջոցների կիրառման, կամ կարճելու մասին.

- խախտման համար բանկին նախազգուշացում հայտարարելու և (կամ) տուգանք նշանակելու մասին
- բանկի ղեկավարին զբաղեցրած պաշտոնից հեռացնելու
- տուգանք չկիրառելու, տուգանքը մեղմացնելու, վարույթը կասեցնելու, կարգում նախատեսված դեպքերում վարույթը կարճելու, տուգանքի կամ այլ պատժամիջոցի կիրառումը հետաձգելու
- բանկի հետ պայմանագիր կնքելու, կամ լիցենզիան ուժը կորցրած ճանաչելու մասին:

Կարգը նշված յուրաքանչյուր դեպքի համար նախատեսում է մանրամասն ընթացակարգեր:

2.3. Բանկային վերահսկողի խնդիրները

Վերահսկողի՝ ավանդատուների կորուստների ռիսկը նվազեցնելու նպատակը, հաճախ դիտվում է, որպես երաշխավորություն այն բանի, որ բանկը երբևէ չի սնանկանա: Սակայն, նման պատկերացումը սխալ է, որովհետև շուկայական համակարգի հիմնական սկզբունքն այն է, որ այն ժամանակ, երբ որոշ կազմակերպություններ բարգավաճում են, մյուսները սնանկանում են և դուրս գալիս ասպարեզից:

Վերահսկողների խնդիրը տվյալ գործընթացի բնականոն ընթացքին խանգարելը չէ, այլ վերահսկելը, որ բանկի գործունեության ռիսկայնությունը չանցնի խելամտության սահմանը:

Ոմանք կարող են մտածել, թե ավանդատուների կորուստները կանխելու առավել արդյունավետ տարբերակ է ցանկացած բանկային ռիսկի անթույլատրելիությունը: Նման մոտեցումը սխալ է բանկային և ընդհանրապես ցանկացած տնտեսական ձեռնարկի բնութագրման առումով: Բանկերը պետք է դիմեն ռիսկի, ֆինանսական տարաբնույթ ծառայությունների մատուցման ընթացքում, որը հանդիսանում է նրանց տարբերող (աչքի ընկնող) ներդրումը շուկայական տնտեսությունում: Բանկերի համար թերևս ավելի ցայտուն է արտահայտված այնպիսի տնտեսական հասկացությունների երկընտրանքը, ինչպիսին են շահութաբերությունը և ոչ ռիսկային գործունեությունը: Գաղտնիք չէ, որ առավելագույն շահույթ ստանալը ենթադրում է նաև ֆինանսական ռիսկերի առավելագույն չափ, որն իր հերթին կասկածի տակ է դնում կազմակերպության կայունությունը: Եվ ընդհակառակը՝ բանկի լիովին ոչ ռիսկային գործունեությունը ենթադրում է նվազագույն շահութաբերություն, որն իր հերթին կասկածի տակ է դնում բանկի գործունեության նպատակահարմարությունը: Տվյալ խնդրի շուրջ միայն բանկի ղեկավարության հավասարակշռված մոտեցումը կարող է դառնալ բանկի անվտանգության և շահութաբերության գրավականը:

Վերահսկողի խնդիրն է ապահովել, որ բանկերի ղեկավարությունը ռիսկերը.

- գիտակցի
- հայտնաբերի
- վերահսկի:

Հարկ է նշել, որ առավելագույն վտանգ է ներկայացնում այն ռիսկը, որը դեռ պետք է հայտնաբերվի կամ գիտակցվի ղեկավարության կողմից:

Չամաշխարհային պրակտիկայում գոյություն ունեն ընդհանրություններ բանկային վերահսկողության նպատակների, բանկային ոլորտին վերաբերող ստանդարտների և մեթոդոլոգիաների կարևոր ուղղությունների վերաբերյալ, որոնց վրա պետք է կենտրոնացվի վերահսկողության ուշադրությունը: Սակայն, վերահսկողության ազգային ռեժիմները անխուսափելիորեն տարբերվում են կախված երկրների բանկային համակարգերի պատմությունից, նրանց իրավական և մշակութային միջավայրերից, ինչպես նաև բանկային համակարգի չափերից և կառուցվածքից:

Ինքնաստուգման հարցեր

1. Որո՞նք են Կենտրոնական բանկի կողմից բանկերի գործունեության վերահսկողության տեսակները:
2. Ինչպիսի՞ն է համալիր վերստուգումների ընթացակարգը:
3. Ինչպիսի՞ն է բանկերում համալիր վերստուգումների իրականացման ռազմավարությունը:
4. Ի՞նչ հիմքերի առկայության դեպքում են իրականացվում արտահերթ համալիր վերստուգումները:
5. Ինչպե՞ս կարելի է նկարագրել նպատակային վերստուգումների ընթացակարգը:
6. Ի՞նչ է կանոնակարգվում «ՀՀ տարածքում գործող բանկերի, օտարերկրյա բանկերի մասնաճյուղերի, կամ դրանց ղեկավարների կողմից բանկային օրենսդրության խախտումների արձանագրման, վարույթների ընթացակարգի և պատժամիջոցների կիրառման մասին» կարգով:
7. Որո՞նք են բանկային վերահսկողի խնդիրները:

ՎՈՒԽ 3. ԲԱՆԿԱՅԻՆ ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏ

Թեմայի նպատակն է՝ պարզաբանել անկախ աուդիտի դերն ու նշանակությունը, նրանց տեսակները, նկարագրել բանկային անկախ աուդիտը, Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերում աուդիտորական ստուգումների իրականացման կարգը, ինչպես նաև ՀՀ տարածքում աուդիտորական գործունեությունը կարգավորող օրենսդրական դաշտը:

Ուսուցիչությունների և հնտությունների նկարագիրը: Թեմայի ավարտից հետո ուսանողները կկարողանան.

- բնորոշել բանկային աուդիտը
- բնութագրել [աուդիտի](#) հիմնական նպատակը և տեսակները
- բնութագրել բանկի աուդիտն իրականացնող իրավասու աուդիտորին
- ներկայացնել բանկային աուդիտորի իրավունքներն ու պարտականությունները
- նկարագրել բանկային աուդիտորի որակավորման կարգը
- նկարագրել աուդիտի անցկացման փաստաթղթավորումը, աուդիտային հաշվետվությունը և եզրակացությունը
- բնութագրել [աուդիտոր](#) - կենտրոնական բանկ փոխհարաբերությունները:

Աուդիտորական գործունեության ստեղծումն ու տարածումը համաշխարհային պրակտիկայում պայմանավորված է տնտեսական արժանահավատ տեղեկատվության նկատմամբ եղած մեծ պահանջարկով: Նման տեղեկատվությունը տնտեսական ցանկացած որոշման մշակման, պլանավորման և կայացման անկյունաքարն է: Տվյալ դեպքում չափազանց կարևոր է աուդիտորի (անկախ մասնագետի) կարծիքը, որը ենթադրվում է, որ պետք է լինի օբյեկտիվ և արժանահավատ: Աուդիտի ծագումը ունի բավական հին պատմություն: Audit (լսել) տերմինը հայտնի է դեռևս Հին Հռոմից, որտեղ նմանատիպ աշխատանքները կատարվում էին համապատասխան պետական ծառայողների կողմից:

Ցանկացած կազմակերպություն ունի իրեն վերաբերող տեղեկատվության օգտագործողների շրջանակ, որի մեծությունը՝ կախված կազմակերպության չափերից, ինչպես նաև տնտեսության մեջ ունեցած նշանակությունից, կարող է տատանվել՝ ընդհուպ մինչև հասարակության սովոր զանգվածները: Տեղեկատվության օգտագործողների շրջանակն ընդգրկում է ոչ միայն ձեռնարկության սեփականատերերին, այլև պետությանը՝ ի դեմս հարկային և այլ մարմինների, հասարակայնությանը և ֆինանսական ու տնտեսական ինստիտուտներին: Վերջիններս աուդիտորական արժանահավատ տեղեկատվությունը կարող է օգտակար լինել ապագա համագործակցության մասին որոշումներ կայացնելու համար: Պատահական չէ, որ զարգացած տնտեսություններում անկախ աուդիտորական ընկերությունների եզրակացությունները էական դեր են խաղում կազմակերպությունների նկատմամբ հասարակայնության և պետության ունեցած վստահության մակարդակի վրա: Աուդիտորական արժանահավատ եզրակացությունը ի գործ է բարձրացնել կամ իջեցնել ցանկացած ֆիրմայի վարկանիշը՝ բոլոր հետևանքներով հանդերձ: Դրանով են պայմանավորված նաև աուդիտորական ընկերություններին ներկայացվող խիստ պահանջները, որոնք արտացոլվում են օրենսդրական ակտերում և կանոններում:

Ներկայումս աշխարհում հայտնի է «Մեծ քառյակ» անվանումը, որը վերաբերում է առավել հայտնի և հզոր չորս աուդիտորական «KPMG», «Price Waterhouse», «Deloyte Touch», «Ernest & Yung» ընկերություններին: Վերջիններս իրենց մասնաճյուղերն ունեն աշխարհի բազմաթիվ երկրներում: Բացի այդ, տարբեր երկրներում գործում են աուդիտորական բազմաթիվ մեծ և փոքր ընկերություններ: Կախված տարբեր երկրների օրենսդրական, տնտեսական և այլ տարբերություններից, աուդիտի իրականացումն ունի իր առանձնահատկությունները: Սակայն նրանց ներկայացվող հիմնական պահանջները նույնն են, որոնք արտացոլված են աուդիտի միջազգային ստանդարտներում:

3.1. Աուդիտորական գործունեության կարգավորման իրավական հիմքերը ՀՀ-ում

ՀՀ տարածքում աուդիտորական գործունեությունը կարգավորվում է «Աուդիտորական գործունեության մասին» ՀՀ օրենքով (ընդունված է 2002 թվականի դեկտեմբերի 26-ին) և Աուդիտի ստանդարտներով (հաստատվել է 2001թ սեպտեմբերի 10-ին):

Համաձայն օրենքի՝

Աուդիտորական գործունեությունը ֆինանսական հաշվետվությունների և (կամ) ֆինանսական հաշվետվություններ ներառող փաստաթղթերում առկա այլ տեղեկատվության (այսուհետ՝ ֆինանսական հաշվետվություններ) աուդիտի և (կամ) աուդիտին հարակից ծառայությունների (աուդիտորական դիտարկում, համաձայնեցված ընթացակարգեր, կոմպիլյացիա (տեղեկատվության հավաքում) իրականացումն է:

Անկախ աուդիտը օրենսդրության պահանջներին համապատասխան աուդիտային գործունեություն իրականացնելու իրավունք ունեցող անձի կողմից կազմակերպության հաշվապահական հաշվառման վարման ճշտության ու ֆինանսական հաշվետվությունների անկախ ստուգում է, որի արդյունքում տրվում է եզրակացություն այդ հաշվետվությունների արժանահավատության վերաբերյալ:

Ֆինանսական հաշվետվությունների արժանահավատությունը նշված հաշվետվություններում արտացոլված տեղեկությունների ճշտության այնպիսի աստիճան է, որը հնարավորություն է տալիս այդ տեղեկությունների հիման վրա ընդհանուր առմամբ կատարելու ճիշտ եզրակացություն կազմակերպության գործունեության արդյունքների մասին և ընդունելու համապատասխան որոշումներ:

Արևմտյան մասնագիտական գրականության մեջ Աուդիտը բնորոշվում է նաև որպես տեղեկատվական [ռիսկի](#), կամ հաշվետվությունների մեջ սխալ տեղեկատվության լինելու հավանականության նվազեցման գործընթաց:

Հարակից ծառայություններ

Ֆինանսական հաշվետվությունների աուդիտորական դիտարկումն այնպիսի ընթացակարգերի իրականացում է, որը հնարավորություն է ընձեռում աուդիտորին պարզելու, թե արդյոք առկա են այնպիսի փաստեր, որոնք կարող են վկայել այն մասին, որ ֆինանսական հաշվետվությունները, բոլոր էական առումներով, կազմված չեն Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան:

Համաձայնեցված ընթացակարգերն աուդիտորական բնույթի այնպիսի ընթացակարգեր են, որոնց շուրջ համաձայնության են գալիս այդ ընթացակարգերն իրականացնող անձը, իրավաբանական անձը (հիմնարկը կամ անհատ ձեռնարկատերը) և համապատասխան երրորդ անձը կամ անձինք, և որոնց արդյունքում այդ ընթացակարգերն իրականացնող անձի կողմից ներկայացված հաշվետվության հիման վրա այդ հաշվետվությունն օգտագործողները կարող են կատարել եզրահանգումները:

Կոմպիլյացիան ֆինանսական տեղեկատվության հավաքումը, դասակարգումը և ամփոփումն է՝ այն օգտագործելու համար առավել հասկանալի և հարմար տեսքի բերելու նպատակով:

Աուդիտը և աուդիտորական դիտարկումն աուդիտ իրականացնող անձին հնարավորություն են ընձեռում տեղեկատվության արժանահավատության վերաբերյալ ապահովելու իր հավաստիացումը, իսկ համաձայնեցված ընթացակարգերը և կոմպիլյացիան այդպիսի հավաստիացում չեն նախատեսում:

Աուդիտորական ծառայության իրականացումն առանց աուդիտորական ծառայությունների իրականացման լիցենզիայի (այսուհետ՝ լիցենզիա) արգելվում է: Աուդիտորական ծառայությունները պետք է իրականացվեն առնվազն մեկ աուդիտորի կողմից:

Աուդիտորն աուդիտորական ծառայություններ կարող է իրականացնել ինքնուրույն որպես անհատ աուդիտոր և (կամ) որպես աուդիտ իրականացնող անձի աշխատող, այդ թվում՝ քաղաքացիաիրավական պայմանագրի հիման վրա, եթե նա անդամակցում է Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով՝ լիազորված մարմնի կողմից հավատարմագրված, միջազգային չափանիշներին համապատասխանող հասարակական կազմակերպությանը (այսուհետ՝ մասնագիտացված կառույց):

Աուդիտի ստանդարտները՝ աուդիտի միջազգային ստանդարտներին համապատասխանող, աուդիտի անցկացման, ինչպես նաև աուդիտին հարակից ծառայությունների իրականացման մեթոդներն ու կարգը կանոնակարգող նորմատիվ իրավական ակտեր են: ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության կողմից ընդունվել են միջազգային աուդիտորական ստանդարտներին բոլոր էական կողմերով համապատասխանող ազգային ստանդարտներ, որոնցով առաջնորդվում են տեղական աուդիտորները:

Աուդիտ իրականացնող անձն ինքնուրույն է ընտրում իր աշխատանքի ձևերն ու մեթոդները՝ ելնելով աուդիտորական գործունեության մասին նորմատիվ իրավական ակտերի պահանջներից:

Աուդիտ իրականացնող անձին չի արգելվում իրականացնել նաև հետևյալ ծառայությունները.

- հաշվապահական հաշվառման ներդրում, վերականգնում և վարում, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների կազմում
- բանկի հաշվապահական հաշվառման քաղաքականության մշակում
- հաշվապահական հաշվառման, տնտեսագիտության և ֆինանսների, աուդիտի ուսուցում
- հարկերի, տուրքերի և պարտադիր այլ վճարումների պլանավորում և հաշվարկում
- ակտիվների և պարտավորությունների գնահատում
- բանկերի ֆինանսատնտեսական գործունեության վերլուծություն
- հաշվապահական, տնտեսագիտական, ֆինանսական, հարկային և կառավարչական խորհրդատվություն
- բանկային գործունեության բնագավառում իրավաբանական ծառայությունների մատուցում
- գործարար (բիզնես) ծրագրի կազմում
- մասնագիտական գրականության հրատարակում:

Վերը նշված ծառայությունների առանձին տեսակների մատուցման համար օրենքով լիցենզիա պահանջվելու դեպքում աուդիտ իրականացնող անձը գործունեության այդ տեսակներով զբաղվելու համար պարտավոր է սահմանված կարգով ստանալ համապատասխան լիցենզիա:

3.2. Աուդիտորի որակավորման վկայականի տրամադրումը

Աուդիտորների որակավորումը օրենքով սահմանված պահանջներին բավարարող աուդիտորի որակավորում ստանալու համար մասնագիտացված կառույցին դիմած ֆիզիկական անձի (այսուհետ՝ դիմող) մասնագիտական գիտելիքների ստուգման արդյունքների հիման վրա աուդիտորի որակավորման վկայական (այսուհետ՝ վկայական) տալու ընթացակարգ է:

Աուդիտորների որակավորումն իրականացվում է քննությունների միջոցով: Աուդիտորների որակավորման քննությունները կազմակերպվում և անցկացվում են մասնագիտացված կառույցի կողմից՝ Հայաստանի Հանրապետության օրենքների, այլ նորմատիվ իրավական ակտերի պահանջների, ինչպես նաև համապատասխան կրթական ծրագրերի շրջանակներում:

Աուդիտորների որակավորման քննություններն իրականացնում է հանձնաժողովը, որի կազմավորման կարգը, կանոնադրությունը, աուդիտորների որակավորման ստուգման կարգը և որակավորման քննությունների ծրագիրը հաստատում է մասնագիտացված կառույցը՝ համաձայնեցնելով լիազորված մարմնի և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի հետ: Որակավորման հանձնաժողովի կազմում ընդգրկվում է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի նախագահի կողմից ներկայացվող բանկի մեկ ներկայացուցիչ:

Աուդիտորի որակավորում կարող է ստանալ յուրաքանչյուր քաղաքացի

Աուդիտորների որակավորման քննությանը կարող են մասնակցել Հայաստանի Հանրապետության քաղաքացիները, օտարերկրյա քաղաքացիները և քաղաքացիություն չունեցող այն անձինք, ովքեր ունեն

ա) տնտեսագետի մասնագիտությամբ բարձրագույն կրթություն և վկայական ստանալու համար դիմում ներկայացնելու օրվան նախորդող վերջին հինգ տարվա ընթացքում առնվազն երեք տարվա մասնագիտական աշխատանքի փորձ, կամ

բ) բարձրագույն կրթություն և վկայական ստանալու համար դիմում ներկայացնելու օրվան նախորդող վերջին յոթ տարվա ընթացքում առնվազն հինգ տարվա մասնագիտական աշխատանքի փորձ:

Աուդիտորների որակավորման քննություններին մասնակցել չի թույլատրվում այն դիմողին, որը դատարանի վճռով ճանաչվել է անգործունակ կամ սահմանափակ գործունակ, կամ դատարանի վճռով զրկվել է ֆինանսատնտեսական հարաբերությունների իրականացման բնագավառում որոշակի պաշտոն զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից:

Աուդիտորի որակավորման վկայականը տրվում է անժամկետ:

Վկայականն ստանալուն հաջորդող յուրաքանչյուր տարվա համար առնվազն 40 ժամ աուդիտորը պետք է մասնակցի (կամ դասախոսի) աուդիտորների մասնագիտական վերապատրաստման դասընթացներին, սեմինարներին և (կամ) խորհրդակցություններին (այսուհետ՝ դասընթացներ), որոնց ներկայացվող պահանջները սահմանում է մասնագիտացված կառույցը:

Աուդիտորի որակավորման քննության կազմակերպման համար գանձվում է պետական տուրք՝ օրենքով սահմանված կարգով և չափով:

Աուդիտորի որակավորման վկայականը կարող է ուժը կորցրած ճանաչվել հետևյալ հիմքերի առկայության դեպքում

ա) որակավորման քննություններին մասնակցելու թույլտվության համար պահանջվող փաստաթղթերը կեղծելու միջոցով աուդիտորի որակավորման վկայական ստանալու փաստի հաստատումը

բ) ֆինանսատնտեսական հարաբերությունների իրականացման բնագավառում որոշակի պաշտոն զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից անձին զրկելու մասին դատավճիռն օրինական ուժի մեջ մտնելը:

3.3. Աուդիտորական ծառայությունների իրականացման լիցենզավորումը

Աուդիտորական ծառայությունների իրականացման լիցենզավորումը սույն օրենքով սահմանված լիցենզիա ստանալու իրավունք ունեցող սուբյեկտներին «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի և սույն օրենքի համաձայն լիցենզիաների տրման, վերաձևակերպման, գործողության կասեցման և դադարեցման հետ կապված գործընթաց է:

Լիցենզիա ստանալու իրավունք ունի որպես անհատ ձեռնարկատեր պետական գրանցում ստացած մասնագիտացված կառույցին անդամակցող աուդիտորը, ինչպես նաև առևտրային կազմակերպությունը՝ անկախ վերջինիս կազմակերպական-իրավական ձևից, բացառությամբ բաց բաժնետիրական ընկերությունների, եթե կազմակերպության

ա) աշխատողներից առնվազն երկուսն աուդիտոր են, և նրանցից մեկը կազմակերպության գործադիր մարմնի ղեկավարն է

բ) հիմնադիրների (մասնակիցների) առնվազն 1/2-ը մասնագիտացված կառույցին անդամակցող աուդիտոր է, և՝

- կազմակերպության կանոնադրական կապիտալի 50 տոկոսից ավելին պատկանում է նրանց, կամ՝
- նրանց և աուդիտորական կազմակերպություններին (այդ թվում՝ օտարերկրյա պետություններում սահմանված կարգով գրանցում ստացած) է պատկանում կազմակերպության կանոնադրական կապիտալի առնվազն 75 տոկոսը:

Լիցենզիայի գործողությունը դադարեցվում է «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված դեպքերում և կարգով, ինչպես նաև՝ աուդիտ իրականացնող անձի կողմից կեղծ [աուդիտորական եզրակացություն](#) տրամադրվելու դեպքում:

3.4. Աուդիտի փաստաթղթավորումը

Աուդիտի անցկացումը պարտադիր փաստաթղթավորվում է աուդիտորի կողմից: Այն նախատեսում է աուդիտորի աշխատանքային փաստաթղթերի և աուդիտի արդյունքների հիման վրա ամփոփիչ փաստաթղթերի կազմումը: Ամփոփիչ փաստաթղթերը ներառում են աուդիտորական հաշվետվությունը և աուդիտորական եզրակացությունը:

Աուդիտորի *աշխատանքային փաստաթղթերը* կազմվում են նախքան աուդիտի անցկացումը ու աուդիտի ընթացքում, և դրա ավարտից հետո պետք է պարունակեն արժանահավատ աուդիտորական հաշվետվություն ու աուդիտորական եզրակացություն կազմելու համար անհրաժեշտ տեղեկատվություն:

Աուդիտորի աշխատանքային փաստաթղթերն աուդիտորի սեփականությունն են: Դրանցում, ինչպես նաև աուդիտորական հաշվետվություններում պարունակվող տեղեկատվությունը բանկային գաղտնիք է և ենթակա չէ հրապարակման, բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի:

Աուդիտորական հաշվետվությունը (նամակ ղեկավարությանը) բանկի ղեկավարներին և հիմնադիրներին (մասնակիցներին) հասցեագրված փաստաթուղթ է, որը պարունակում է սպառիչ տեղեկատվություն աուդիտի արդյունքների, ֆինանսական հաշվետվություններում թույլ տրված էական խախտումների, հաշվապահական հաշվառման վարման սահմանված կարգից շեղումների մասին, ինչպես նաև աուդիտի անցկացման պայմանագրով նախատեսված և աուդիտի ընթացքում ստացված այլ տեղեկություններ:

Աուդիտորական հաշվետվությունը կազմվում է առնվազն երեք օրինակից, ստորագրվում աուդիտորների և անմիջականորեն աուդիտին մասնակցած այլ մասնագետների կողմից՝ իրենց հարցերի մասով: Աուդիտորական հաշվետվության մեկ օրինակը տրվում է բանկին, մյուսը՝ Կենտրոնական բանկին, իսկ երրորդը մնում է աուդիտորի մոտ:

- Աուդիտորական եզրակացությունն իրավաբանական նշանակություն ունեցող փաստաթուղթ է բանկերի հաշվետվությունների արժանահավատության մասին, որը պետք է պարունակի աուդիտորի հիմնավորված հետևությունը բանկերի ֆինանսական հաշվետվությունների արժանահավատությունը հաստատելու (կամ չհաստատելու) վերաբերյալ: Աուդիտորական եզրակացությունը զաղտնիք չպարունակող փաստաթուղթ է: Այն Կենտրոնական բանկին է ներկայացվում բանկերի տարեկան հաշվետվության ներկայացումից հետո վեցամսյա ժամկետում:

- Աուդիտորական եզրակացությունը կեղծ է ճանաչվում դատական կարգով: Միտումնավոր կեղծ աուդիտորական եզրակացությունը կամ հաշվետվությունն այն աուդիտորական եզրակացությունը կամ հաշվետվությունն է, որը կազմվել է առանց աուդիտ անցկացնելու կամ աուդիտի ստանդարտներին համապատասխան փաստաթղթավորում իրականացնելու, ինչպես նաև այն եզրակացությունը, որը հակասում է [աուդիտի ենթարկվող](#) անձի կողմից ներկայացված և աուդիտ իրականացնող անձի կողմից աուդիտի ընթացքում ուսումնասիրված փաստաթղթերի բովանդակությանը:

Բանկերի կողմից աուդիտորին պահանջվող տեղեկատվություն ներկայացնելու պայմաններում տրված սխալ աուդիտորական եզրակացության հետևանքով նրան պատճառված վնասի համար աուդիտորը կրում է պատասխանատվություն օրենսդրությամբ սահմանված կարգով:

Պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների կազմման համար

Չնայած այն հանգամանքին, որ ֆինանսական հաշվետվությունների մասին կարծիք կազմելու և այն արտահայտելու պատասխանատվությունը կրում է աուդիտորը, այդ հաշվետվությունների կազմման և ներկայացման համար պատասխանատվություն է կրում կազմակերպության ղեկավարությունը: Ֆինանսական հաշվետվությունների աուդիտը կազմակերպության ղեկավարությանը չի ազատում այդ պատասխանատվությունից:

3.5. Աուդիտորական եզրակացության տեսակները

Աուդիտորական եզրակացությունները կարող են լինել հետևյալ հիմնական տեսակների:

- Դրական կարծիք պետք է արտահայտվի, երբ աուդիտորը գալիս է այն եզրահանգման, որ ֆինանսական հաշվետվությունները, բոլոր էական առումներով տալիս են ճշմարիտ և իրական պատկերը՝ համաձայն ֆինանսական հաշվետվությունների կազմման հիմունքների: Ստորև ներկայացվում է աուդիտորական դրական եզրակացության օրինակ:

Աուդիտորական եզրակացություն

(համապատասխան հասցեատեր)

Մենք աուդիտի ենք երթարկել ԱԲԳ կազմակերպության կիզ հաշվապահական հաշվեկշիռը առ 01-ը հունվարի 20xx թ., ինչպես նաև հաշվետու ժամանակաշրջանի ֆինանսական արդյունքների և դրամական հոսքերի մասին հաշվետվությունները: Նշված ֆինանսական հաշվետվությունների համար պատասխանատու է կազմակերպության ղեկավարությունը: Մեր պարտականությունն է անցկացված աուդիտի արդյունքում արտահայտել կարծիք ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ:

Մենք աուդիտն իրականացրեցինք աուդիտի ստանդարտներին (աուդիտի ազգային ստանդարտներին և գործնական փորձին) համապատասխան: Այդ ստանդարտներով պահանջվում է, որ մենք աուդիտը պլանավորենք և իրականացնենք՝ ֆինանսական հաշվետվությունները էական խեղաթյուրումներից զերծ լինելու մասին ողջամիտ երաշխիք ձեռք բերելու նպատակով: Աուդիտորական աշխատանքները ներառում են ֆինանսական հաշվետվություններում արտացոլված տեղեկատվության և բացահայտումների հիմքերի հետազոտումը՝ թեսթային հիմունքներով: Աուդիտորական աշխատանքները ներառում են նաև ֆինանսական հաշվետվությունների կազմման ժամանակ կիրառված հաշվապահական հաշվառման սկզբունքների, կազմակերպության ղեկավարության կողմից կատարված էական գնահատումների և ֆինանսական հաշվետվությունների ներկայացման գնահատումը: Մենք գտնում ենք, որ իրականացված աուդիտորական աշխատանքների արդյունքները բավարար հիմք են հանդիսանում մեր կարծիքն արտահայտելու համար:

Մեր կարծիքով, ֆինանսական հաշվետվությունները կազմակերպության ֆինանսական վիճակի՝ 01-ը հունվարի 20xx թ., ինչպես նաև հաշվետու ժամանակաշրջանի ֆինանսական արդյունքների և դրամական հոսքերի մասին տալիս են ճշմարիտ և իրական պատկերը (կամ բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացված):

- Վերապահումներով դրական կարծիք պետք է արտահայտվի, երբ աուդիտորը գալիս է այն եզրահանգման, որ դրական կարծիք հնարավոր չէ արտահայտել, սակայն կազմակերպության ղեկավարության հետ անհամաձայնություն կամ աուդիտի շրջանակների սահմանափակումների ազդեցությունը այնքան էական և համատարած չէ՝ բացասական կարծիք արտահայտելու կամ կարծիք տալուց հրաժարվելու համար: Տվյալ դեպքում դրական կարծիքը տրվում է, նշելով այն հանգամանքները, որոնց վերաբերում են վերապահումները:

- Կարծիք արտահայտելուց հրաժարվելը կատարվում է այն դեպքում, երբ աուդիտի շրջանակների սահմանափակման հնարավոր ազդեցությունը այնքան էական և համատարած է, որ աուդիտորն ի վիճակի չէ ձեռք բերել անհրաժեշտ աուդիտորական ապացույցներ և հետևաբար չի կարող արտահայտել կարծիք ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ:

- Բացասական կարծիք պետք է արտահայտվի, երբ կազմակերպության ղեկավարության հետ որևէ անհամաձայնության ազդեցությունը ֆինանսական հաշվետվությունների արժանահավատության վրա այնքան

եական և մեծ է, որ աուդիտորը գալիս է այն եզրահանգման, որ իր կողմից չեն կարող տրվել այնպիսի վերապահումներ, որոնք բավարար կլինեն ֆինանսական հաշվետվությունների մոլորեցնող բնույթն ու թերությունները բացահայտելու համար:

Այն բոլոր դեպքերում երբ աուդիտորը չի արտահայտում դրական կարծիք, աուդիտորական եզրակացության մեջ պետք է ներառվեն բոլոր պատճառների հստակ նկարագրությունները, ինչպես նաև, հնարավորությունների սահմաններում, այդ պատճառների հնարավոր քանակական ազդեցությունները ֆինանսական հաշվետվությունների վրա:

Շատ կարևոր է աուդիտի ընթացքում էականության ճիշտ բնորոշումը: Վերը նշված եզրակացության մեջ շեշտվում էր խեղաթյուրումների էական լինելու հանգամանքը, քանի որ աուդիտորը չի կարող հարյուր տոկոսով երաշխավորել կազմակերպության հաշվետվությունների արժանահավատ կամ կեղծ լինելու փաստը: Ընդհանրապես էականության ընդունելի մակարդակը աուդիտորի կողմից որոշվում է յուրաքանչյուր առանձին դեպքի համար: Սակայն կան որոշակի մշակված չափանիշներ, որոնց շրջանակներում որոշվում է այդ մակարդակը: Մասնավորապես, արևմտյան ստանդարտները խորհուրդ են տալիս ոչ էական համարել մինչև 5% շեղումը, 5-10% շեղումը թողնվում է աուդիտորի հայեցողությանը, 10%-ից բարձր շեղումը ընդունված է համարել էական:

Աուդիտորական ռիսկ

Աուդիտորական ռիսկը կայանում է նրանում, որ աուդիտորական եզրակացությունը կարող է ոչ ճիշտ արտացոլել կազմակերպության ռեալ ֆինանսական վիճակը: Լիովին բացառել այդ ռիսկը թերևս հնարավոր չէ, սակայն անհրաժեշտ է այն հասցնել նվազագույնի, հաշվի առնելով տարբեր գործոնները աուդիտի պլանավորման ընթացքում:

Ընդհանուր աուդիտորական ռիսկը իր մեջ պարունակում է`

- ներտնտեսական ռիսկ - պայմանավորված է աուդիտի ենթարկվող կազմակերպության գործունեության արտաքին և ներքին միջավայրերի առանձնահատկություններով, նրա կառավարման մակարդակով, կազմակերպության կողմից իրականացվող ոչ ստանդարտ գործառնությունների ծավալով և այլն:
- վերահսկողական ռիսկ - կապված է աուդիտի ենթարկվող կազմակերպության ներքին հսկողական համակարգի արդյունավետության մակարդակի հետ:
- չհայտնաբերման ռիսկ - տեղական կազմակերպությունն է այն բանի, որ աուդիտորական աշխատանքների ընթացքում աուդիտորին չի հաջողվի հայտնաբերել գոյություն ունեցող էական սխալները: Չհայտնաբերման ռիսկը համարվում է աուդիտորների աշխատանքների արդյունավետության և որակի ցուցանիշ և մեծապես կախված է աուդիտի իրականացման կարգից, աուդիտորների մասնագիտական և գործնական ունակություններից:

3.6. Բանկային անկախ աուդիտը և նրա նպատակը

Բանկային աուդիտը օրենսդրության պահանջներին համապատասխան աուդիտային գործունեություն իրականացնելու իրավունք ունեցող անձի կողմից բանկերի հաշվապահական հաշվառման վարման ճշտության ու ֆինանսական հաշվետվությունների անկախ ստուգում է, որի արդյունքում տրվում է եզրակացություն այդ հաշվետվությունների արժանահավատության վերաբերյալ:

Ֆինանսական հաշվետվությունների արժանահավատությունը նշված հաշվետվություններում արտացոլված տեղեկությունների ճշտության այնպիսի աստիճան է, որը հնարավորություն է տալիս այդ տեղեկությունների հիման վրա ընդհանուր առմամբ կատարել ճիշտ եզրակացություն բանկերի գործունեության արդյունքների մասին և ընդունելու համապատասխան որոշումներ: Բանկային աուդիտի հիմնական նպատակն է` զննահատել բանկերի ֆինանսական հաշվետվությունների արժանահավատությունն ու նրանց կողմից իրականացված ֆինանսական գործառնությունների համապատասխանությունը օրենսդրությանը:

Բանկային աուդիտի տեսակները

Բանկերում իրականացվող աուդիտը կարող է լինել պարտադիր և կամավոր, ինչպես նաև համատարած կամ ընտրանքային:

Յուրաքանչյուր տարի բանկերում պետք է անցկացվի պարտադիր աուդիտ` օրենքներով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով` անկախ աուդիտորական կազմակերպության կողմից:

Բանկերում կամավոր աուդիտ կարող է անցկացվել այն ժամկետներում և այնպիսի շրջանակներում, որոնք ընդունվել են բանկի իրավասու կառավարման մարմնի որոշմամբ: Կամավոր աուդիտն անցկացվում է` հաշվի առնելով բանկերի և աուդիտորական կազմակերպության միջև կնքված պայմանագրով նախատեսված աուդիտի կոնկրետ խնդիրները, ժամկետները և շրջանակները:

Բանկային աուդիտորը պարտավոր է աուդիտի ընթացքում պահպանել հետևյալ հիմնական սկզբունքները`

- ա) երրորդ անձանցից անկախությունը
- բ) աշխատանքի ձևերի և մեթոդների ընտրության ինքնուրույնությունը
- գ) աուդիտի իրականացման ժամանակ ստացված տեղեկատվության գաղտնիության պահպանումը
- դ) պրոֆեսիոնալ պատշաճ մակարդակի ապահովումը

Աուդիտ չի կարող իրականացնել այն աուդիտորը, որը (իրավաբանական անձ լինելու դեպքում` նրա ղեկավարը, կամ ղեկավարներից մեկը).

- ա) տվյալ բանկի հետ կապված անձ է, կամ ունի ընդհանուր շահեր
- բ) այն աուդիտորը, որը տվյալ աուդիտի ենթարկվող անձին մատուցել է հաշվապահական հաշվառման վերականգման, վարման կամ ֆինանսական հաշվետվությունների կազմման ծառայություններ` տվյալ ժամանակաշրջանը ներառող հաշվետու տարվա համար

զ) հանդիսանում է տվյալ բանկի հիմնադիրը, բաժնետերը (մասնակիցը), ապահովագիրը (բացառությամբ պարտադիր ապահովագրության տեսակների), ֆինանսական հաշվետվությունների կազմման և հաշվապահական հաշվառման վարման համար պատասխանատու անձ:

Աուդիտի, դրան հարակից և այլ ծառայությունների մատուցման համար վճարի չափը, վճարման կարգը և ձևը որոշվում է կողմերի միջև կնքված պայմանագրով և չեն կարող կախվածության մեջ դրվել բանկի այնպիսի պահանջներից, որոնք կարող են ազդել աուդիտի արդյունքում կատարվելիք եզրակացությունների բովանդակության վրա:

Բանկի կողմից ընտրված աուդիտորին հաստատում է բանկի բաժնետերերի ընդհանուր ժողովը կամ բանկի խորհուրդը: Բանկի խորհրդի (բաժնետերերի ընդհանուր ժողովի) կողմից հաստատված աուդիտի մասին բանկը 15 օրվա ընթացքում տեղեկացնում է Կենտրոնական բանկի բանկային վերահսկողության ծառայության՝ ներկայացնելով աուդիտորի հետ բանկի կնքած պայմանագրի պատճենը:

Որպես կանոն, աուդիտորը մինչև բանկի աուդիտ կարող է իրականացնել ոչ ավելի, քան 5 անգամ անընդմեջ:

Աուդիտն իրականացվում է «Աուդիտորական գործունեության մասին» ՀՀ օրենքին, Աուդիտի Ստանդարտներին, Հաշվապահական Հաշվառման Ստանդարտներին, ինչպես նաև աուդիտորական գործունեության լիցենզավորման կարգին համապատասխան:

3.7. Բանկերի և աուդիտորների իրավունքներն ու պարտականությունները

Աուդիտորներն իրավունք ունեն

ա) աուդիտի անցկացման ընթացքում լրիվ ծավալով ուսումնասիրելու բանկերի ֆինանսատնտեսական գործունեությանն առնչվող փաստաթղթերը, ինչպես նաև ստուգելու փաստաթղթերում հաշվառված յուրաքանչյուր գույքի փաստացի առկայությունը

բ) բանկից և նրա ղեկավարներից ստանալու աուդիտի անցկացման ընթացքում ծագած հարցերի վերաբերյալ բանավոր, գրավոր բացատրություններ և այլ անհրաժեշտ տեղեկություններ

գ) բանկերի հետ համաձայնեցնելով երրորդ անձանց գրավոր հարցմամբ՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ստանալու անհրաժեշտ տեղեկություն՝ արժանահավատ աուդիտորական հաշվետվություն և աուդիտորական եզրակացություն կազմելու համար

դ) աուդիտի անցկացման աշխատանքներում պայմանագրային հիմունքներով ներգրավելու անհատ աուդիտորների, այլ աուդիտորական կազմակերպությունների աուդիտորների, ինչպես նաև այլ մասնագետների: Աուդիտի անցկացման աշխատանքներում արգելվում է ներգրավել բանկերում աշխատող մասնագետների

ե) արժանահավատ աուդիտորական հաշվետվություն և աուդիտորական եզրակացություն կազմելու համար բանկերի կողմից պահանջվող տեղեկատվություն չներկայացնելու դեպքում իրաժարվելու աուդիտ անցկացնելուց կամ աուդիտորական եզրակացություն տալուց:

Մասնաճյուղեր ունեցող բանկերի հաշվապահական հաշվետվությունների հավաստիությունը հաստատելու համար աուդիտորը պարտադիր ստուգում է բանկի այն մասնաճյուղերը, որոնցից յուրաքանչյուրի ակտիվները կազմում են բանկի ակտիվների 25 %-ը և ավելին:

Աուդիտորական ստուգման ենթակա մասնաճյուղերի ցանկը սահմանվում է բանկի և աուդիտորի հետ կնքվող պայմանագրով:

Բանկային աուդիտորները պարտավոր են

ա) մինչև աուդիտի անցկացման պայմանագրի կնքումը բանկերին ներկայացնել աուդիտորական գործունեության լիզենզիա

բ) աուդիտի իրականացման ընթացքում պահպանել օրենսդրության և աուդիտի էթիկայի պահանջները:

գ) բարեխղճորեն կատարել աշխատանքը, ապահովել աուդիտի ընթացքում ստացված և կազմված փաստաթղթերի պահպանումը և փաստաթղթերում առկա տեղեկությունների զաղտնիությունը՝ աուդիտի անցկացմանը հաջորդող 3 տարվա ընթացքում, եթե կողմերի միջև պայմանագրով կամ օրենսդրությամբ այլ բան նախատեսված չէ

դ) Կենտրոնական բանկ ներկայացնել իրենց գործունեության վերաբերյալ տարեկան հաշվետվություն

ե) ՀՀ կառավարության սահմանած կարգով ներկայացնել իր գործունեության վերաբերյալ տարեկան հաշվետվություններ՝ մինչև տվյալ տարվան հաջորդող տարվա ապրիլի 15-ը:

Աուդիտորն իրավունք չունի աուդիտորական գործունեության ընթացքում ստացված և (կամ) իր կազմած փաստաթղթերը կամ դրանց պատճենները տրամադրել երրորդ անձին (բացառությամբ՝ Կենտրոնական բանկի բանկային վերահսկողությանը) կամ առանց բանկերի համաձայնության, իրապարակել դրանք կամ դրանցում առկա տեղեկությունները:

Բանկերի իրավունքներն ու պարտականությունները

Բանկերն իրավունք ունեն

ա) ինքնուրույն ընտրելու աուդիտորին
բ) աուդիտորից ստանալու աուդիտորական գործունեությունը կարգավորող օրենսդրական ակտերի վերաբերյալ տեղեկատվություն

գ) Կենտրոնական բանկին և (կամ) մասնագիտացված մարմնին տեղեկացնել աուդիտորների կողմից օրենսդրության խախտման այն դեպքերի մասին, որոնք վնաս են հասցրել բանկերին:

Բանկերը պարտավոր են

ա) չխոչընդոտել աուդիտորների պարտականությունների պատշաճ կատարմանը, աուդիտի անցկացման համար նրանց տրամադրել պահանջվող փաստաթղթեր, աուդիտորների բանավոր և (կամ) գրավոր հարցումներին տալ պարզաբանումներ և բացատրություններ (բանավոր և (կամ) գրավոր), ինչպես նաև աուդիտորի առաջարկությամբ, իր իրավասության սահմաններում, երրորդ անձանցից պահանջել աուդիտորական ծառայությունների իրականացման համար անհրաժեշտ տեղեկություններ

բ) չձեռնարկել աուդիտորական ծառայությունների իրականացման ընթացքում ուսումնասիրվող հարցերի շրջանակները սահմանափակող որևէ միջոց

գ) վերացնել աուդիտորական ծառայությունների իրականացման արդյունքում բացահայտված՝ հաշվապահական հաշվառման մեջ և ֆինանսական հաշվետվություններում տեղ գտած թերություններն ու խախտումները:

դ) աուդիտ իրականացնող անձից պահանջել ներկայացնելու լիցենզիայի պատճենը

ե) կրել օրենքով նախատեսված այլ պարտականություններ:

Աուդիտն սկսելուց հետո մեկշաբաթյա ժամկետում բանկը պարտավոր է Կենտրոնական բանկին տեղեկացնել աուդիտորի տվյալները (անուն, ազգանուն, անվանում, լիցենզիայի համար և այլն):

3.8. Աուդիտոր-Կենտրոնական բանկ փոխհարաբերությունները

Կենտրոնական բանկն իրավունք ունի օգտվել աուդիտորների աշխատանքային թղթերից և փաստաթղթերից, ինչպես նաև բացատրություններ և պարզաբանումներ ստանալ դրանց վերաբերյալ:

Կենտրոնական բանկն ու աուդիտորներն, ըստ անհրաժեշտության, հանդիպում են ինչպես աուդիտորների կազմած աուդիտորական, այնպես էլ Կենտրոնական բանկի՝ բանկերում անցկացրած վերստուգումների արդյունքում կազմած վերստուգման հաշվետվությունները քննարկելու նպատակով:

Կենտրոնական բանկը պարտավոր է ապահովել աուդիտորներից ստացված հաշվետվություններում պարունակվող բանկային գաղտնիքի պահպանությունը:

Կենտրոնական բանկը կարող է հարկային մարմինների պատվիրատուների (բանկերի), ինչպես նաև այլ աուդիտորների կողմից տվյալ աուդիտորի նկատմամբ հիմնավոր բողոքների առկայության դեպքում միջնորդագիր ներկայացնել աուդիտորական գործունեության լիցենզիա տվող լիազորված մարմնին՝ աուդիտորի լիցենզիան ուժը կորցրած ճանաչելու առաջարկությամբ:

Աուդիտորական հաշվետվության և աուդիտորական եզրակացության որակի վերաբերյալ հիմնավոր կասկածների դեպքում Կենտրոնական բանկը կարող է պարտադրել բանկին վեց ամսվա ընթացքում հրավիրել նոր, անկախ աուդիտորական կազմակերպություն և հրապարակել նրա եզրակացությունը:

Ինքնաստուգման հարցեր

1. Ինչպե՞ս է կարգավորվում աուդիտորական գործունեությունը ՀՀ-ում:
2. Ի՞նչ են աուդիտի ստանդարտները:
3. Ո՞րն է աուդիտի հիմնական նպատակը և որո՞նք են նրա տեսակները:
4. Ի՞նչ է բանկային աուդիտը:
5. Ինչպե՞ս կարելի է բնութագրել բանկի աուդիտն իրականացնող իրավասու աուդիտորին:
6. Որո՞նք են բանկային աուդիտորի պարտականությունները:
7. Ինչպիսի՞ն է բանկային աուդիտորի որակավորման կարգը:
8. Որո՞նք են բանկային աուդիտորի իրավունքները:
9. Որո՞նք են բանկերի իրավունքներն ու պարտականությունները:
10. Ինչպե՞ս կարելի է նկարագրել աուդիտի անցկացման փաստաթղթավորումը, աուդիտային հաշվետվությունը և եզրակացությունը:
11. Ինչպե՞ս կարելի է բնութագրել աուդիտոր - կենտրոնական բանկ փոխհարաբերությունները:

ԳԼՈՒԽ 4. ԲԱՆԿԵՐԻ ՆԵՐՔԻՆ ՀՄԿՈՂՈՒԹՅՈՒՆ (ՆԵՐՔԻՆ ԱՌԻԲՏ)

Թեմայի նպատակն է՝ բացատրել բանկերի ներքին հսկողության կարևորությունը, հիմնական սկզբունքները և հասկացությունները, բնութագրել ռիսկերը, որոնց ենթարկվում են բանկերը, ներկայացնել բանկերի ներքին հսկողության համակարգը և մեթոդները, արդյունավետ համակարգի ստեղծման հիմքերը, բանկի ներքին հսկողության պրակտիկ դրույթները և հիմնական տարրերը, աուդիտորների վարքագծի կանոնները, ներքին հսկողության ծառայության աշխատակիցների իրավունքներն ու պարտականությունները, բանկի ստորաբաժանումների համագործակցությունն այդ ծառայության հետ:

Ուսուցիչների և հնտությունների նկարագիրը: Թեմայի ավարտից հետո ուսանողները կկարողանան.

- տալ բանկերի ներքին հսկողության անհրաժեշտության հիմնավորումը
- բնութագրել բանկերի ներքին հսկողության հիմնարար սկզբունքները
- քվարկել և բնութագրել ներքին հսկողության երեք հիմնական հասկացությունները
- բնութագրել այն հիմնական ռիսկերը, որոնց ենթարկվում են բանկերը
- բնութագրել բանկի ներքին աուդիտի տեղը և դերը բանկի կառավարման կառուցվածքում
- ներկայացնել բանկի վերստուգիչ հանձնաժողովի լիազորությունները
- քվարկել ներքին հսկողության համար վերլուծության ենթակա ցուցանիշները
- բնութագրել կապիտալի բավարար մակարդակը
- նկարագրել բանկերի կողմից իրացվելիության ապահովման երեք հիմնական տարբերակները
- բնութագրել բանկի ակտիվների որակի գնահատման և պրոբլեմային վարկերի վաղ հայտնաբերման կարևորությունը
- բնութագրել խոշոր գործարքների վերահսկման երկու կողմերը
- բնութագրել բանկի ֆինանսական վիճակի կախվածությունը բանկի կառավարումից
- ներկայացնել այն հիմնական պրակտիկ դրույթները, որոնք աուդիտորները պետք է հաշվի առնեն իրենց ամենօրյա աշխատանքներում

▪ ներկայացնել ներքին հսկողության ծառայության աշխատակիցների (աուդիտորների) վարքագծի կանոնները

- բնութագրել ներքին հսկողության հիմնական տարրերը
- բնութագրել ընթացիկ հսկողության ստուգման աշխատանքների դերը և դրանց տարրերը
- բնութագրել բանկի ղեկավարների պատասխանատվությունը,
- քվարկել բանկի ղեկավարների իրավասությունները
- բնութագրել ֆինանսական և վարչական հսկողությունը
- քվարկել ներքին հսկողության ծառայության աշխատակիցների իրավունքները և պարտականությունները
- բնութագրել բանկի ստորաբաժանումների համագործակցությունը ներքին հսկողության ծառայության հետ:

Ժամանակակից տնտեսավարող սուբյեկտներն իրենց գործունեության ընթացքում հաճախ բախվում են այնպիսի խնդիրների հետ, ինչպիսիք են ռեսուրսների (ֆինանսական, մարդկային, նյութական) ոչ արդյունավետ օգտագործումը, որոշումների կայացման համար տեղեկատվության անբավարարությունը, տնտեսավարման գործընթացը բնութագրող հաշվետվությունների խեղաթյուրումը, չարաշահումները և այլն: Դրանց լուծման հրատապությունն առավել կարևորվում է, երբ գործ ենք ունենում համեմատաբար խոշոր կազմակերպությունների հետ, որոնք ունեն կառուցվածքային և տարածքային ստորաբաժանումների լայն ցանց, կամ ծավալում են տարաբնույթ տնտեսական գործունեություն: Գործունեության անցանկալի հեռանկարներից խուսափելու նպատակով կազմակերպությունները ձգտում են ստեղծել ներքին վերահսկողության արդյունավետ համակարգեր:

Նախ անհրաժեշտ է նշել, որ ներքին վերահսկողությունը, որպես այդպիսին, գոյություն ունի ցանկացած քիչ թե շատ էական տնտեսական գործընթացի մեջ: Յուրաքանչյուր կազմակերպության գործունեության մեջ զուտ գործառնական համակարգի հետ մեկտեղ գործում է ներքին վերահսկողությունը, որն ընդհանուր գծերով իրենից ներկայացնում է կանոնների, կանոնակարգերի, հաշվետվությունների և հաշվառման համակարգերի ամբողջություն: Դասական իմաստով, ներքին վերահսկողության համակարգը ձեռնարկություններում արմատավորվել է 20-րդ դարի սկզբին և ենթարկվելով փոփոխությունների, ներկայումս դարձել է կազմակերպության ռիսկերի վերահսկման գործիք՝ իր մեջ կրելով ռիսկերի կառավարման բնորոշ գծեր:

Ներքին հսկողության համակարգի հանդեպ աճող հետաքրքրությունը հիմնականում բացատրվում է կազմակերպությունների՝ այդ թվում բանկերի, կրած մեծ կորուստներով: Հայտնի են բազմաթիվ օրինակներ, երբ այդպիսի համակարգի բացակայությունը բերել է ֆինանսապես հզոր կազմակերպությունների սնանկացմանը: Դրա պատճառով, չնայած լրացուցիչ և երբեմն մեծ ֆինանսական ծախսումներին՝ կազմակերպությունները ձգտում են ստեղծել արդյունավետ կազմակերպված ներքին հսկողության համակարգեր: Վերջիններիս պահպանման ծախսումները, որպես կանոն, բազմակիորեն զիջում են կազմակերպությունների հնարավոր կորուստների չափը:

Հարկ է նշել, որ «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքի համաձայն, բանկերը գործադիր մարմնի ենթակայությամբ պետք է ունենան ներքին վերահսկողություն

իրականացնող կառուցվածքային ստորաբաժանում: Սույն փոփոխությունը նախատեսում է նաև Կենտրոնական Բանկի կողմից առևտրային բանկերում ներքին վերահսկողությանը ներկայացվող նվազագույն պահանջների սահմանում:

Բազելյան կոմիտեն, որը կոչված է միավորելու աշխարհի տարբեր երկրների բանկային վերահսկողության մարմինների ջանքերը բանկային համակարգի անվտանգ աշխատանքի համար, նշում է ներքին հսկողության լավ կազմակերպված համակարգի առկայության անհրաժեշտությունը: Նման համակարգերը կարող են ժամանակին հայտնաբերել հիմնախնդիրները (որոնք հետագայում կարող են հանգեցնել կորուստների)՝ դրանով իսկ կանխելով կամ նվազեցնելով բանկի հնարավոր կորուստները:

Ներքին վերահսկողությունը կազմակերպության շրջանակներում գործող անկախ գործունեության տեսակ է: Նրա առաջնային խնդիրներից են հանդիսանում ռիսկերի բացահայտումը, որում գտնվում է կազմակերպությունը (ինչպես նյութական, այնպես էլ հեղինակության առումով), գոյություն ունեցող ռիսկերից պաշտպանվածության ապահովումը և վերջինիս պարբերական վերանայումը: Կարևոր է գնահատել, թե արդյոք կան համապատասխան վերահսկողական հնարավորություններ առաջադրված նպատակներին հասնելու համար, ինչպես նաև ապահովել համապատասխան միջոցառումներ, որպեսզի վերահսկողական համակարգն արդյունավետ աշխատի:

Ներքին հսկողության համակարգն իր գործունեության ընթացքում հիմնականում օգտագործում է տվյալ երկրի բանկային վերահսկողության տեխնիկան, ներքին հսկողության համակարգի կազմակերպման սեփական մեթոդները և մոնիտորինգի գործընթացը, ելնելով տվյալ բանկի քաղաքականությունից:

4.1. Ներքին հսկողության հիմնական սկզբունքները

Ներքին հսկողության հիմնական սկզբունքներ կարելի է համարել.

- Ներքին հսկողությունը պետք է լինի շարունակական գործընթաց, որն իրականացվում է բանկի ղեկավարների ու ամբողջ աշխատակազմի կողմից:
- Ներքին հսկողությունը պետք է նպաստի բանկերի, նրանց հաճախորդների և ներդրողների շահերի պաշտպանությանը, բանկի գործունեության ընթացքում անձնակազմի կողմից օրենսդրության և նորմատիվ ակտերի պահպանմանը, իրականացվող գործառնությունների հուսալիության ապահովմանն ու բանկային գործունեության հետ առնչվող ռիսկերի նվազեցմանը:
- Բանկերում ներքին հսկողության գործունեությունը պետք է լինի անկախ այլ ստորաբաժանումների աշխատանքից՝ որն անմիջապես կառավարում է բանկի ղեկավարը կամ ղեկավարությունը:

Ներքին հսկողության արդյունավետությունը կախված է լավ ղեկավարությունից և համապատասխան կադրային ներուժից, ինչպես նաև տեղեկատվության փոխանակումից և բանկի այլ ստորաբաժանումների հետ գործնական արդյունավետ հարաբերություններից:

4.2. Ներքին հսկողության հիմնական խնդիրները

Ներքին հսկողության հիմնական խնդիրներն են՝

- բանկի կողմից օրենքների և այլ իրավական ակտերի պահանջների կատարումը
- բանկի գործունեության ընթացքում հայտնաբերված թերությունների, բացթողումների և խախտումների վերացմանն ուղղված արդյունավետ որոշումների ընդունումը
- բանկային գործունեության ռիսկերի արդյունավետ կառավարման պահանջների կատարումը
- հաշվապահական, ֆինանսական հաշվետվությունների մեջ բանկի գործունեության իրական և համարժեք արտացոլումը
- բանկի ակտիվների պահպանությունը
- բանկի պարտավորությունների հսկողությունը, արտաքին աուդիտորների, պետական վերահսկողության մարմինների հետ արդյունավետ համագործակցությունը:

4.3. Ներքին հսկողության հիմնական նպատակները

Ներքին հսկողության հիմնական նպատակները կարելի է համարել.

- Գործառնական արդյունավետության ապահովում (*գործառնական նպատակ*), որը նշանակում է առաջին հերթին ապահովել բանկի ակտիվների արդյունավետ օգտագործումը և դրանց ապահովությունը կորուստներից, ապահովել բանկի անձնակազմի կողմից ամենարդյունավետ ճանապարհով նպատակների նվաճումը նվազագույն բանկային ռիսկերի պայմաններում:
- Ֆինանսական և կառավարման տեղեկատվության հուսալիության, ամբողջականության և ժամկետայնության ապահովում (*տեղեկատվության նպատակ*): Այս նպատակը նշանակում է՝
 - ապահովել բանկի ընթացիկ ֆինանսական հաշվետվությունների ժամանակին և հուսալի պատրաստումը, ապահովել բանկի հիմնադիրներին, բաժնետերերին և վերահսկողներին ներկայացվող ֆինանսական հաշվետվությունների արժանահավատ և հուսալի պատրաստումը՝ վերջիններիս կողմից ճիշտ որոշում կայացնելու համար:
 - Գործունեության համապատասխանություն գործող օրենսդրությանը և կարգերին (*համապատասխանության նպատակ*): Այս նպատակը ենթադրում է՝ ապահովել բանկի գործունեությունը օրենքների և այլ իրավական ակտերի սահմաններում: Ելնելով վերահսկողության և վերստուգումների արդյունքում բանկին տրված առաջարկություններից, մշակել միջոցառումների ծրագրեր և դրանք կիրառել հետագա գործունեության ընթացքում, բանկի ընթացիկ գործունեությունը պահպանել նախատեսված քաղաքականության և ռազմավարության շրջանակներում, նպաստելով դրանց իրականացմանը:

4.4. Ներքին հսկողության երեք հիմնական հասկացությունները

Ներքին հսկողության արդյունավետ համակարգի կազմակերպումն անհնար է առանց հետևյալ երեք հասկացությունների՝ անկախություն, ռիսկ և հսկողություն, ճիշտ և համակարգված ընկալման: Այս երեք հասկացությունների գոյությունը պարտադիր է միաժամանակ: Հակառակ դեպքում, եթե ներքին հսկողության համակարգը հնարավորություն չունենա անկաշկանդ տալ իր եզրակացությունները և գնահատականները,

չտիրապետի և խորությամբ չկարողանա գնահատել բանկի ռիսկերը, հսկողության ընտրված մեթոդը համարժեք չլինի ռիսկի բավարար գնահատման համար, ապա կարելի է ասել, որ ներքին հսկողության համակարգ, որպես այդպիսին, կայացած չէ:

Անկախություն

Անկախությունը՝ ներքին [աուդիտի](#)

համար առավել կարևոր հատկանիշներից մեկն է: Ներքին աուդիտի առումով այս հասկացությունը կապված է այն հանգամանքի հետ, որ երբեմն աուդիտորը ստուգումից հետո պետք է հայտնի իր բացասական կարծիքը: Պարզ է, որ եթե աուդիտը անկախ չլինի ուսումնասիրվող ոլորտից, ապա նա կարող է թաքցնել հայտնաբերված սխալները:

Բանկերում ներքին աուդիտի ստորաբաժանման համար պետք է որոշակիացվի նրա ինքնուրույնության աստիճանը: Դա շատ կարևոր հանգամանք է և մեծապես որոշում է աշխատանքների կատարման որակի և օբյեկտիվության մակարդակը: Ներքին աուդիտն ունի իր առանձնահատկությունները, քանի որ, ի տարբերություն արտաքին աուդիտի, ներքին աուդիտի մասնագետները, համարվելով նույն կազմակերպության աշխատակիցներ, ուղղակի կախվածություն ունեն բանկի ղեկավարությունից: Նման դեպքում կարևորվում է կազմակերպչական անկախության մակարդակը կամ ենթակայության տիպը: Անհրաժեշտ է գտնել ենթակայության օպտիմալ մակարդակ, որի պարագայում աուդիտ իրականացնող ստորաբաժանումը կլինի բավականաչափ անկախ աշխատանքների օբյեկտիվությունը ապահովելու տեսանկյունից:

Արտասահմանյան բանկային համակարգում, ինչպես նաև այլ կազմակերպություններում ընդունված է ենթակայության երկու հիմնական տեսակ:

1. Ներքին աուդիտի ծառայությունը ենթարկվում է անմիջապես բարձրագույն գործադիր մարմնին: Այս դեպքում նրա իրավասության շրջանակները առավել լայն են և աշխատանքներն ուղղված են բանկի գործունեության տարբեր ոլորտների արդյունավետ վերահսկողությանը և ռիսկերի բացահայտմանը:

2. Ներքին աուդիտի ծառայությունը ենթարկվում է ֆինանսական տնօրենին: Տվյալ դեպքում նրա իրավասությունները սահմանափակվում են ֆինանսական հաշվետվությունների, հաշվապահական ձևակերպումների և կազմակերպության ակտիվների պահպանության վերահսկման աշխատանքներով: Փորձը ցույց է տալիս, որ ենթակայության առաջին տեսակն ավելի արդյունավետ է, քանի որ անկախությունը գործառնական այլ ստորաբաժանումներից թույլ է տալիս առավել անկողմնակալ լինել այս կամ այն խնդրի ուսումնասիրության ժամանակ: Ավելին, աուդիտի ծառայության կողմից արված առաջարկությունների կատարումը դաժնում է պարտադիր գործառնական օրակների համար: Տվյալ տարբերակը գործում է Հայաստանի բանկային համակարգում և կարգավորվում է օրենքով:

Ռիսկ

Ռիսկ հասկացությունը կարելի է կիրառել տարբեր իրավիճակներում: Լայն իմաստով այն կարելի է բնութագրել որպես այս կամ այն իրադարձության կայացման անորոշություն: Ռիսկերը կարելի է դասակարգել որպես ապահովագրելի և անապահովագրելի: Առաջին խումբը ներառում է այն ռիսկերը, որոնց կորուստները և տեղի ունենալու հավանականությունը կարելի է հաշվել: Անապահովագրելի են այն ռիսկերը, որոնք հազվադեպ են ի հայտ գալիս, կամ բավականաչափ անկանխատեսելի են:

Բանկային ռիսկը բանկային գործունեության առանձնահատկություններից բխող երևույթ է, և հավանականությունն է այն բանի, որ որոշակի իրադարձության կամ իրադարձությունների արդյունքում բանկը կկրի վնասներ կամ օգուտ չի ստանա:

Ռիսկի բացահայտումը վերահսկողի գործունեության հիմնական բաժիններից մեկն է: Վերահսկողական գործունեությունը մեծապես կապված է չնախատեսված ծախսերի հետ, այդ իսկ պատճառով կարևոր է, որպեսզի վերահսկողը կենտրոնացնի իր տրամադրության տակ եղած միջոցները բարձր ռիսկային բնագավառներում: Բանկերի համար դրանք այն բնագավառներն են, որտեղ ֆինանսական կորստի կամ հեղինակության անկման ռիսկերն ավելի բարձր են:

Ստորև նշենք ռիսկերի հիմնական տեսակները, որոնց ենթարկվում են բանկերը.

Վարկային ռիսկը այն բանի հավանականությունն է, որ վարկառուն չի կարող սահմանված ժամկետում վերադարձնել միջոցները: Թեև այս ռիսկը հաճախ կապվում է վարկի տրամադրման հետ, [վառկային ռիսկը](#) առաջանում է ամեն անգամ, երբ հակառակ կողմն իր վրա է վերցնում վճարումը իրականացնելու պարտավորությունը կամ բանկի նկատմամբ ունեցած պարտավորությունների մարումը, օրինակ արտարժույթի կամ արժեթղթերի հետ կապված գործարքների գծով:

Իրացվելիության ռիսկը այն բանի հավանականությունն է, որ բանկն ի վիճակի չի լինի մարելու իր կողմից ստանձնած պարտավորությունները սահմանված ժամկետում:

Եկամտաբերության ռիսկը այն բանի հավանականությունն է, որ բանկի ակտիվները կարող են ավելի քիչ եկամուտ բերել, քան ծախս:

Հուկայական ռիսկը կապված է բանկին պատկանող ֆինանսական գործիքների շուկայական գնի փոփոխությունների հետ, կապված տոկոսադրույքների, փոխարժեքների կամ առաջարկի և պահանջարկի փոփոխությունների հետ: Այդ գործիքները ներառում են պարտատոմսերը, սովորական բաժնետոմսերը, արտարժույթը, ֆյուչերսային կամ օպցիոն պայմանագրերը:

Գործառնական ռիսկը կապված է բանկային գործարքների ժամանակին և ճիշտ կատարման, կամ հսկողության համակարգի խափանման հետ՝ ինչպես արտաքին պատճառների, այնպես էլ կազմակերպության ներսում կատարված սխալների կամ խաբեությունների հետևանքով:

Արտարժույթային ռիսկը կապված է ազգային արժույթի նկատմամբ այլ արժույթների գների փոփոխման անորոշության հետ: Արտարժույթի փոխարժեքների անբարենպաստ փոփոխությունների արդյունքում բանկը

կարող է զգալի վնասներ կրել: Արտարժությալին բաց դիրքի (որի դեպքում առաջանում է [արտարժությալին ռիսկ](#)) առավելագույն չափը սահմանում է համապատասխան տնտեսական նորմատիվը: Արտարժությալին ռիսկը հաճախ համարվում է ավելի ընդհանուր համարվող շուկայական [ռիսկի](#) տարատեսակ:

Երկրի ռիսկը կապված է որևէ երկրի կառավարության քաղաքականության փոփոխության, կամ երկրի ֆինանսական վիճակի վատթարացման արդյունքում տնտեսական գործակալների՝ այդ թվում կառավարության կողմից իրենց ֆինանսական պարտավորությունների չկատարման հավանականության հետ:

Կառավարման /տնօրինման ռիսկը կապված է բաժնետերերի, տնօրենների, ինչպես նաև զբաղեցրած պաշտոնին ավագ ղեկավարների անհամապատասխանության կամ այն բանի հետ, որ վերջիններս կարող են չարաշահել իրենց պաշտոնական դիրքը:

Համբավի (հեղինակության) ռիսկը այն բանի հավանականությունն է, որ հեղինակության անկման արդյունքում բանկը կկրի կորուստներ:

Բանկի ղեկավարության ուշադրության կենտրոնում պետք է գտնվեն վերը նշված [ռիսկերի կառավարումը](#), որն իրենից ներկայացնում է բանկի կողմից ռիսկերի նվազեցմանն ուղղված միջոցառումների ամբողջությունը: Ռիսկերի կառավարման հիմնական մեթոդները համարվում են՝ ռիսկերի դիվերսիֆիկացիան, ռիսկերի վերլուծությունը և մոնիտորինգը, ռիսկերի հեջավորումը և ապահովագրությունը:

Ցանկացած բանկային ռիսկ մեծանում է, եթե այն լինում է կենտրոնացված: Օրինակ, եթե բանկի ակտիվային կամ պասիվային գործառնությունները կախվածության մեջ են մեկ կամ մի քանի փոխկապակցված կոնտրագենտներից, արտադրական հատվածներից, երկրներից կամ արտարժույթից: Տվյալ դեպքում մեծ է այն բանի վտանգը, որ ոչ նպաստավոր շուկայական պայմաններում բանկը կունենա լուրջ ֆինանսական կորուստներ:

Հարկ է նշել, որ բանկային ռիսկերը փոխկապակցված են, որը նշանակում է, որ որևէ ռիսկի ի հայտ գալը կարող է շրջապահված ազդեցություն թողնել, որի արդյունքում բանկը բախվում է ռիսկերի մի ամբողջ խմբի հետ, որոնցից յուրաքանչյուրը կարող է ավելի ուժեղ լինել, քան այն ծնող ռիսկը:

Հսկողություն

Աուդիտորի հիմնական նպատակն է ներքին հսկողության համակարգի աշխատանքների արդյունավետության և համարժեքության ապահովումը: Հսկողական համապատասխան մեխանիզմները կարող են ծախսատար լինել, այդ իսկ պատճառով, դրանց համարժեքության գնահատումը պետք է լինի աուդիտորի ուշադրության կենտրոնում, որպեսզի չկիրառվեն այնպիսի մեխանիզմներ, որոնց արժեքը կզերազանցի ստացվելիք օգուտները:

Բանկի ղեկավարության նպատակը պետք է լինի ոչ թե այնպիսի ներքին հսկողական համակարգի ստեղծումը, որը լիովին բացառի աշխատանքային սխալները կամ անարդյունավետությունը (որն ինքնին հնարավոր չէ), այլ մի համակարգի ստեղծումը, որը կօգնի խախտումների և թերությունների ժամանակին բացահայտմանն ու վերացմանը: Կարևոր է դիտարկել համակարգի գործունեությունը ոչ միայն դրված խնդիրների լուծման, այլ նաև համակարգի պահպանման ծախսերի արդյունավետության տեսանկյունից, քանի որ նույնիսկ ամենաարդյունավետ վերահսկողական համակարգի գոյությունը չի կարող արդարացնել հարաբերականորեն մեծ ծախսերը:

4.5. Ներքին հսկողության համակարգը և մեթոդները

Բանկի ներքին հսկողության համակարգը ասելով նկատի ունենք կառուցվածքային միավորների կողմից իրականացվող այն աշխատանքների ամբողջությունը, որոնց նպատակն է ապահովել բանկի անվտանգ և արդյունավետ աշխատանքը: Վերջիններս առաջնորդվում են բանկի համապատասխան մարմինների մշակած կանոնակարգերով, որոնք իրենց հերթին բանկի ընդհանուր քաղաքականության մասն են կազմում:

Բանկի քաղաքականությունը և այն արարողակարգերը, որոնք սահմանվում են բանկի տնօրենների և ավագ ղեկավարների կողմից, ուղղված են.

- ռիսկերի վերահսկման ապահովմանը
- ակտիվների պահպանմանը
- պարտավորությունների վերահսկմանը
- հաշվառման և այլ համակարգերի անխափան աշխատանքի ապահովմանը, որոնք ժամանակին գրանցում են բոլոր գործարքները և պարտավորությունները, միաժամանակ ղեկավարության տրամադրությանը ներկայացնելով հաշվետվություններ, որոնք թույլ են տալիս հայտնաբերել և գնահատել ռիսկերը, ինչպես նաև՝ գործարար ակտիվությունը:

Որպեսզի ներքին վերահսկողության մեթոդները լինեն արդյունավետ, նրանք պետք է.

- լինեն ընդգրկուն
 - պարբերաբար վերանայվեն աշխատակիցների կողմից, որոնք մասնակցում են գործունեության համապատասխան ձևում կամ գործընթացում
 - լինեն հասկանալի և գործնականում կիրառելի:
- Այս հիմնարար սկզբունքներն ունեն լայն կիրառում և տարածում գործարքների թույլտվության, համեմատման և պարտավորությունների բաժանման գործընթացներում:
- *գործարքների թույլտվության* գործընթացն անհրաժեշտ է, որպեսզի ղեկավարությունը որոշի և կանոնակարգերում գրանցի բանկի քաղաքականության և արարողակարգերի այն աստիճանը, որի սահմաններում առանձին աշխատակիցներ կամ երբեմն էլ ստորաբաժանումներ իրավունք ունեն բանկի անունից գործարքներ կատարել կամ պարտավորություններ ստանձնել
 - *համեմատում* է կոչվում երկու անկախ պատրաստված տեղեկատվությունների համեմատումը, որոնք վերաբերվում են նույն հարցին և սկզբունքորեն պետք է նույնը լինեն, օրինակ՝ «նոստրո» հաշիվների

քաղվածքների համեմատումը բանկերի գրքերում կատարված ձևակերպումների հետ, կամ **դիւերների** շահույթի և միջոցների մնացորդների մասին տվյալները համեմատումը հաշվարկային կենտրոնի տվյալների հետ:

▪ **պարտականությունների բաժանումը** սահմանափակում է աշխատակիցների կողմից գործարքների կատարման ընթացքում գործառնական ռիսկի դիմելու հավանականությունը, օրինակ, գործարքների իրականացման որոշման ընդունումը, իրականացումը և վերջինիս նկատմամբ վերահսկողությունը պետք է իրականացվի տարբեր կատարողների միջոցով:

Ներքին աուդիտի ստորաբաժանում

Ակնհայտ է, որ ներքին աուդիտի ստորաբաժանումը շատ կարևոր դեր է կատարում հսկողության համակարգում: Աուդիտորները պետք է ունենան բավարար և հստակեցված լիազորությունների շրջանակ, լինեն անկախ այն ղեկավարներից, որոնք ղեկավարում են ստուգվող ուղղությունները, ենթարկվեն անմիջապես գործադիր ղեկավարությանը և ապահովված լինեն անհրաժեշտ ռեսուրսներով:

Ներքին վերահսկողության օղակների նկատմամբ բանկի ղեկավարության վարած քաղաքականությունն է ձևավորում նրանց նկատմամբ վերաբերմունքը բանկում: Կարևոր է, որ այդ օղակների հետ հարաբերությունները այլ ստորաբաժանումների կողմից լինեն գործընկերային, քանի որ ներքին աուդիտը, ի տարբերություն ռեվիզիոն ծառայությունների, իր մեջ չի կրում որևէ պատժողական տարր: Բանկի կազմում արդյունավետ գործող ներքին աուդիտի ծառայության օգտագործումը կարևոր է նաև ներքին ռեզերվների բացահայտման, զարգացման առաջնահերթ ուղղությունների որոշման և այլ առումներով:

Ինչ վերաբերում է ներքին աուդիտի ծառայության գործունեության մեթոդներին, ապա դրանք ամենօրյա ուսումնասիրություններն են, ինչպես նաև պլանային և հանկարծակի ստուգումները, որոնք նպատակ ունեն ապահովելու աշխատանքային տարբեր փուլերի անընդհատ վերահսկողությունը: Աշխատանքների արդյունքում կազմվում են հաշվետվություններ, որտեղ նշվում են աշխատանքի օբյեկտը, բնույթը և ուսումնասիրության արդյունքները: Տրված եզրակացության և ներկայացվող առաջարկությունների հիման վրա ղեկավարությունը կայացնում է որոշումներ և տալիս համապատասխան հանձնարարականներ:

Ղեկավարության համար խիստ արժեքավոր կարող են լինել բանկի այս կամ այն գործառնական օղակի վերականգնման, կամ աշխատանքների բարելավման ուղղությամբ ներքին աուդիտի ծառայության արած առաջարկությունները, քանի որ շարունակական բնույթ կրող վերահսկողությունը թույլ է տալիս առավել ամբողջական գնահատելու տարբեր օղակների աշխատանքների թույլ և ուժեղ կողմերը:

Ներքին աուդիտի գործունեությունը բանկում տալիս է նաև ուղղակի խնայողություններ, կապված հետազայում արտաքին աուդիտի աշխատանքների ծավալների փոքրացման հետ: Այն ունի նաև այսպես կոչված **հակառեվիզիոն**, բնույթ, այսինքն՝ մեծապես նպաստում է բանկի դիրքերի ամրապնդմանը այս կամ այն ստուգող մարմինների այցելությունների ժամանակ:

Վերստուգիչ հանձնաժողով

Բանկի ներքին հսկողական համակարգի կարևոր օղակներից է **վերստուգիչ հանձնաժողովը**: Համաձայն «Բանկերի և բանկային դործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի, այն կազմվում է առնվազն երեք անդամից, որոնք նշանակվում են բանկի մասնակիցների ընդհանուր ժողովի կողմից: Սրանով փաստորեն ամրագրվում են բաժնետերերի շահերը բանկի գործունեության վերահսկողության առումով: Բանկի խորհրդի անդամները չեն կարող միաժամանակ լինել վերստուգիչ հանձնաժողովի անդամ:

Վերստուգիչ հանձնաժողովը՝

ա) բանկում հսկողություն է սահմանում հաշվապահական հաշվառման և հաշվետվության վարման նկատմամբ

բ) բանկի խորհրդին հաշվետվություն է ներկայացնում օրենքներին և այլ իրավական ակտերին բանկի գործունեության համապատասխանության, ինչպես նաև Կենտրոնական բանկի հանձնարարականները սահմանված ժամկետում կատարելու մասին

գ) եզրակացություններ է տալիս բանկի խորհրդի ներկայացրած, ինչպես նաև սեփական նախաձեռնությամբ առաջադրված հարցերի վերաբերյալ

դ) իրականացնում է «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և բանկի կանոնադրությամբ նախատեսված այլ լիազորություններ:

Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն, բանկի վերստուգիչ հանձնաժողովի նիստերը գումարվում են տարեկան առնվազն չորս անգամ: Արտահերթ նիստ կարող է իրավիճակ բանկի խորհրդի կամ վերստուգիչ հանձնաժողովի առնվազն երկու անդամի պահանջով:

Բացի ներքին աուդիտի ստորաբաժանումից և վերստուգիչ հանձնաժողովից, բանկերը կարող են վերահսկողության համակարգում ընդգրկել մասնագիտացված այլ ստորաբաժանումներ, որոնք պատասխանատու են տեղեկատվական համակարգերի վերահսկողության, ռիսկերի գնահատման և մոնիտորինգի իրականացման համար: Արևմտյան բանկերում ընդունված է ստեղծել առանձին կառուցվածքային ստորաբաժանումներ, որոնք պատասխանատու են ռիսկերի կառավարման համար, այսինքն՝ իրականացնում են այսպես կոչված «**ռիսկ-մենջմենթ**»:

4.6. Ներքին հսկողության արդյունավետ համակարգի ստեղծման հիմքը

Բանկի ներքին հսկողության արդյունավետ համակարգը հիմնված է նրա կանոնադրության այն դրույթների վրա, որոնցով կարգավորում է բանկի կողմից իրականացվող գործառնությունների ընթացիկ հսկողությունը:

Նման համակարգի ստեղծման նպատակը բանկի ընդհանուր վիճակի կայունության ապահովումն է, վտանգավոր երևույթների ժամանակին հայտնաբերումը և դրանց հակազդումը՝ չսպասելով արտաքին

հսկողության մարմինների արձագանքին: Առավել ընդհանուր առումով, այդ նպատակին հասնելու համար անհրաժեշտ է իրականացնել բանկի հետևյալ ցուցանիշների դիմանկայի վերլուծություն

- կապիտալի մակարդակ
- իրացվելիություն
- ակտիվների որակ
- ռիսկերի դիվերսիֆիկացիա
- կառավարման որակ

4.6.1. Կապիտալի բավարար մակարդակ

Բանկի կապիտալը կորուստները ամորտիզացնող բարձիկ է: Կորստի ծածկույթը պետք է ապահովեն ոչ թե ներդնողները, այլ բաժնետերերը:

Տվյալ մոտեցումը բնութագրում է կապիտալի տարրերը, վերահսկողության նպատակներով դիրքորոշում է ակտիվների լայն կատեգորիաները (օրինակ, պետական աժեթթեր, բանկերին վարկեր, հաճախորդներին կանխավճարներ) և արտահայտում է կապիտալը տոկոսի ձևով, համապատասխան ռիսկով կշռված ակտիվներից:

4.6.2. Իրացվելիություն

Բանկի հեղինակության և նրա ապագա գործունեության համար կարևորագույն գործոն է համարվում պարտավորությունների ժամանակին կատարումը, որը հիմնականում վերաբերում է միջբանկային շուկայից վերցված վարկերի վերադարձին և հաճախորդներից ներգրաված ավանդներին: Այդ կապակցությամբ բանկերը պետք է առաջին հերթին ակտիվորեն կառավարեն **իրացվելիությունը**:

Բանկերն ունեն իրացվելիության ապահովման երեք հիմնական տարբերակ և, որպես կանոն, օգտվում են դրանցից համատեղ: Դրանք են՝

- Վաճառքի համար նախապատրաստած **իրացվելի ակտիվների** առկայությունը, որոնք չնախատեսված իրավիճակներում կարող են արագ վերածվել կանխիկի: Վերահսկողները կարող են սուբյեկտիվորեն վերանայել ակտիվների իրացվելիությունը և պահանջել իրացվելի ակտիվների որոշակի ծավալի ապահովումը, որը համար-ժեք կլինի ավանդների ընդհանուր գումարի նկատմամբ սահմանված տոկոսին:
- Ակտիվների և պասիվների մարման մնացորդային ժամկետների վերաբերյալ տեղեկատվության օգտագործումը գալիք դրամական հոսքերի վերլուծության համար: Վերահսկողները կարող են նաև սահմանել լիմիտներ և թույլատրել որոշակի իրացվելի ակտիվների ընդգրկում հաշվարկների մեջ ավելի կարճ ժամկետով, քան նրանց մարման վերջնական ժամկետները, ցույց տալու համար նրանց ապրանքայնությունը:
- Շուկայից միջոցների փոխառումը դրամական հոսքերը հարթեցնելու նպատակով, կրճատելով անհամապատասխանությունները կոնկրետ ժամանակահատվածում:
- Նշված ուղիները բանկի կողմից իրացվելիության կառավարման հիմնական ուղղություններն են և համապատասխան ստորաբաժանումների կողմից իրականացվում են օրական կտրվածքով:

4.6.3. Ակտիվների որակը

Բանկի **ակտիվների որակի** վերաբերյալ հիմնական հարց է համարվում նրա վարկառուների վարկը օգտագործելու և վերադարձնելու հնարավորությունը: Ակտիվների որակի հետ կապված հիմնախնդիրները հաճախ հանդիսանում են բանկերի սնանկացման հիմնական պատճառը, երբ կորուստները լինում են շատ մեծ և չեն կարող փակվել բանկի կապիտալի հաշվին: ԱՄՆ-ում և այլ երկրներում, որտեղ օգտագործվում է տեղերում բանկերի մանրակրկիտ ստուգումների պրակտիկան, կոնկրետ վարկերի և այլ ակտիվների ուսումնասիրումը գտնվում է ամբողջ գործընթացի կենտրոնում:

Վերահսկողները ակնկալում են, որ բանկերը կմշակեն փաստաթղթերով ամրագրված սկզբունքներ և վարկեր տրամադրելիս կառաջնորդվեն դրանցով: Այդ սկզբունքները պետք է լուսաբանեն այնպիսի հարցեր, ինչպիսիք են՝

- ստանդարտները, որոնց պետք է համապատասխանեն վարկը ստանալու համար ներկայացված հայտերը
- վարկի գնահատումը և վարկի ձևակերպման գործողությունները
- յուրաքանչյուր վարկի համար պայմանների կատարման կանոնավոր ստուգումը և նրա պարբերաբար գնահատումը աշխատակիցների կողմից:

Շատ կարևոր է պրոբլեմային (խնդրահարույց) վարկերի վաղ հայտնաբերումը, որը կհանգեցնի խնդրի կարգավորման արդյունավետության բարձրացմանը: Այդ նպատակներով բանկերը կարող են օգտագործել վարկերի համար դասակարգված համակարգեր: Նման համակարգերն օգտագործում են յուրաքանչյուր վարկի վերաբերյալ տեղեկատվությունը, որպեսզի հնարավոր լինի վարկերի դասակարգումն ըստ սանդղակի՝ հուսալի վարկից մինչև պրոբլեմային կամ անհուսալի վարկի: Դասակարգման գործընթացում օգտագործվող կատեգորիաների քանակը և կոնկրետ չափանիշները կարող են զգալիորեն տարբերվել: Որոշ երկրներում, այդ թվում նաև ԱՄՆ-ում, յուրաքանչյուր վարկին տրվում է վարկանիշ, ինչը հանդիսանում է ստուգման գործընթացի մաս, որն ուղղված է բանկի ակտիվների գնահատմանը: Այդ աշխատանքները վերաբերում են ոչ միայն վարկերին, այլև ակտիվային մյուս գործիքներին:

4.6.4. Ռիսկերի կենտրոնացում

Ռիսկերի կենտրոնացման ավելացման խափանումը հանդիսանում է բանկային վերահսկողության կարևորագույն խնդիրներից մեկը, որովհետև որքան ուժեղ է նրանց կենտրոնացումը, այնքան մեծանում է կորստի հավանականությունը:

Վերահսկողության բնագավառում դասական որոշում է հանդիսանում առանձին կոնտրազենտների կամ մի խումբ կոնտրազենտների հետ կատարվող գործարքների ծավալների սահմանափակումը:

Հատուկ պետք է նշել խոշոր գործարքների վերահսկման հետևյալ երկու կողմերը՝

1. Բանկերը կարող են բախվել իրական դժվարությունների հետ այնպիսի խոշոր գործարքների բացահայտման ժամանակ, որոնք պետք է գումարվեն և տվյալ դեպքում դիտվեն որպես մեկ մեծություն, որովհետև միշտ չէ, որ վարկառուների միջև եղած կապն ակնհայտ է: Բանկերը կարող են հանդիպել լրացուցիչ հիմնախնդրի հետ, մասնավորապես, երբ անհրաժեշտ է ընդհանուր գնահատական տալ բանկային համակարգի շրջանակներում: Դ՞ր բանկային նորմատիվային դաշտում սահմանված է մեկ փոխառուի և նրա հետ փոխկապակցված անձանց գծով սահմանափակում:

2. Գոյություն ունի բանկի հետ կապված անձանց հետ գործառնությունների խնդիրը: Այդ անձանց մեջ ներառում են բաժնետերերին, տնօրեններին և նրանց տեղակալներին, բանկի մասնաճյուղերը, դուստր ձեռնարկությունները և այլն: Ստավախություն կա, որ նման գործարքները կարող են իրականացվել ավելի բարենպաստ պայմաններով (համեմատած այլ հաճախորդների հետ): Այդ պատճառով ընդունված է բանկի հետ կապված անձանց հետ կատարված բոլոր գործարքները գումարել և կիրառել նույն սահմանափակումը, ինչպիսին օգտագործվում է բանկի հետ կապ չունեցող անձի հետ մեկ գործարքի կատարման ժամանակ: Դ՞ր բանկային նորմատիվային դաշտում սահմանված է բանկի հետ կապված և նրա հետ փոխկապակցված անձանց գծով սահմանափակում:

Ռիսկերի կենտրոնացումը կիրառելի է ոչ միայն ակտիվների նկատմամբ: Այն կարող է անհանգստություն առաջացնել նաև բանկային համակարգի այլ բնագավառներում: Օրինակ,

ա) Ֆինանսավորում այն դեպքերում, երբ անհատական ավանդները խոշոր են և ոչ կայուն կամ միջոցները ստացվում են աղբյուրների նեղ կտրվածքով:

բ) Շահույթ այն դեպքում, երբ եկամուտները ստացվում են փոքր թվով գործարքներից:

գ) Գործառնությունների անբավարար տեսականի, այսինքն՝ նեղ մասնագիտացում:

դ) Գրավի որոշակի տեսակի ընդունում, քանի որ վերջիններիս շուկայական արժեքի կրճատումը կարող է բացասաբար ազդել վարկի ապահովության մակարդակի վրա:

4.6.5. Կառավարում

Բանկի հաջողությունը կամ սնանկացումը մեծապես կախված է տնօրենների խորհրդի փորձից, ընդունակություններից, մտածելակերպից և ազնվությունից:

Իրականում, երբ բանկը սնանկ է ճանաչվում, նշված մակարդակներում միշտ էլ գտնվում են թերություններ: Միաժամանակ ղեկավարումը հանդիսանում է ինչպես գիտություն, այնպես էլ արվեստ և հաճախ ենթադրում է դժվար և ոչ ստանդարտ որոշումների ընդունում:

Տնօրենների խորհուրդը պետք է լինի ուժեղ, անկախ և ակտիվորեն մասնակցի բանկի գործերին, հատկապես ռազմավարության մշակման և վերանայման, ռիսկերի և բանկի գործունեության վերահսկման հարցերում:

Տնօրենների խորհրդի անդամները և կառավարիչները պատասխանատու են բանկի քաղաքականության մշակման և կատարման ապահովման, ինչպես նաև բանկային գործունեության բոլոր կողմերի հետ կապված արարողակարգերի համար: Այդ կապակցությամբ կարևոր է ղեկավարման կառուցվածքի ստեղծումը, որը կապահովի աշխատակիցների ծառայողական հստակ պարտականությունները և ենթարկման գծերը, հեշտացնելով կառավարման ուղղահայաց և հորիզոնական կապերը:

4.7. Ներքին հսկողության պրակտիկ դրույթները

Ներքին հսկողությունը՝ բանկի ղեկավարությանը մատուցվող ծառայություն է: Գոյություն ունեն մի շարք հիմնական պրակտիկ դրույթներ, որոնք աուդիտորները պետք է հաշվի առնեն իրենց ամենօրյա աշխատանքներում, մասնավորապես.

- Աուդիտորները չպետք է կատարեն զուտ ստուգման աշխատանքներ: Օրինակ, նրանց կողմից ակտիվների ստուգումը չպետք է նույնանման լինի այն ստուգմանը, որը կատարում են ակտիվների կառավարմամբ զբաղվող աշխատակիցները:

- Աուդիտորները պարտավոր են պահպանել ստուգվող միջավայրի ներքին կարգուկանոնը: Նրանք պարտավոր են պահպանել [աուդիտի](#) համբավը և գիտակցել, որ իրենց աշխատանքի բնույթը կարող է ապես անդրադառնալ բանկի քաղաքականության վրա: Աուդիտորը ուստիկան չէ, և նրա դերը որպես *ռեվիզոր* վաղուց անցյալ է:

- Աուդիտորները պարտավոր են տվյալ միջավայրում իրենց բնականոն գործունեությունը խանգարող ցանկացած հանգամանքի մասին տեղեկացնել իրենց ղեկավարությանը, մասնավորապես, եթե այն կապված է անձնական շահագրգռության հետ (օրինակ, անհրաժեշտ է ստուգում իրականացնել այն ոլորտում, ուր աշխատում են իրենց ազգականը կամ ընկերը):

- Աուդիտորները պարտավոր են լինել շրջահայաց և զուսպ: Ակնհայտ է, որ աշխատանքի ընթացքում աուդիտորները բազմիցս շփվում են գաղտնիք պարունակող տեղեկատվության հետ, որոնք կարող են անձնական կամ այլ հետաքրքրության առարկա լինել:

- Աուդիտորները պարտավոր են խստությամբ հետևել էթիկայի նորմերին: Աշխատանքի ընթացքում աուդիտորները տիրապետելով բավարար տեղեկատվության, այն կարող են օգտագործել իրենց անձնական նպատակների իրագործման և շահ ստանալու համար: Այդ իսկ պատճառով, անհրաժեշտ է ունենալ կանոնակարգ, որը կպարտադրի աուդիտորներին իրենց կողմից իրականացվող անձնական ֆինանսական գործունեության վերաբերյալ կանխավ տեղեկացնել Գլխավոր աուդիտորին: Անհրաժեշտ է նաև ունենալ կարգ, որը կարգելի երրորդ անձանցից նվերների ստացումը կամ նման այլ հարաբերությունները:

4.8. Ներքին հսկողության ծառայության աշխատակիցների (աուդիտորների) վարքագծի կանոնները

Դրանք կարգավորում են աուդիտորների վարքագիծը անձնական շահերի և ի պաշտոնե ստանձնած պարտականությունների հնարավոր բախման իրավիճակներում:

Աուդիտորներն իրենց պարտականություններն իրականացնելիս պետք է գործեն ազնիվ և անաչառ՝ անձնական նպատակներով երբևէ չօգտագործելով գաղտնի տեղեկությունները (գաղտնի են համարվում պետական, բանկային, առևտրային գաղտնիք կազմող տեղեկությունները):

Բանկի արդյունավետ գործունեությունն ապահովելու նպատակով աուդիտորները պետք է անվերապա- հորեն պահպանեն ծառայողական տեղեկությունների գաղտնիությունը՝ զերծ մնալով չմտածված, պատահական և կանխամտածված քայլերի ձեռնարկումից:

Աուդիտորները պարտավոր են ենթարկվել հետևյալ պահանջներին.

- Հասարակական վայրերում, մտերիմների և բանկի ոչ աշխատակից ընկերների հետ չքննարկել ծառայողական գործունեությանն առնչվող գաղտնիք կազմող տեղեկությունները:
 - Առանց գլխավոր աուդիտորի գիտության կամ թույլտվության, աշխատակիցների կողմից երրորդ անձանց գաղտնի տեղեկությունների տրամադրումը, անկախ շարժառիթներից, արգելվում է:
 - Խուսափել բանկի կողմից հաստատված գործնական կապերը անձնական շահերի համար օգտագործելուց և այլ քայլերից, որոնք կարող են խանգարել աուդիտորական աշխատանքներին:
- Աուդիտորները պարտավոր են նաև հնարավորին չափ զերծ մնալ այնպիսի իրադրություններում հայտնվելուց, երբ կասկածի տակ կղրվի վերջիններիս ազնվությունը և բանկի հեղինակությունը՝ դրանից բխող բոլոր հնարավոր անցանկալի հետևանքներով:

4.9. Ներքին հսկողության հիմնական տարրերը

Հսկողության կուլտուրա

Ներքին հսկողությունը բանկի յուրաքանչյուր աշխատակցի պարտականությունն է: Բանկի խորհուրդը և գործադիր տնօրինությունը պատասխանատու են էթիկայի կանոնների պահպանման և կուլտուրայի հաստատման համար, որը կմատնանշի ներքին հսկողության կարևորությունը աշխատանքի ընթացքում: Ներքին հսկողության աշխատանքների բնականոն ընթացքը և բարձր կուլտուրան ապահովելու նպատակով բանկում անհրաժեշտ է ապահովել հետևյալ աշխատանքային մթնոլորտը.

- բոլոր աշխատակիցների կողմից իրենց պարտականությունների բարեխիղճ կատարումը՝ սկսած պարտաճանաչ հաճախումներից մինչև իրենց ընթացիկ աշխատանքի կատարումը
- որևէ խնդիր առաջանալու դեպքում՝ համագործակցությունը կառավարման համապատասխան օղակների հետ
- ամենօրյա համագործակցություն աուդիտորների հետ կապված ընթացիկ աշխատանքային խնդիրների հետ
- ներքին աուդիտորի, որպես վերստուգող (ռեվիզոր) դերը այլևս արդիական չէ և նման վարքագծի դրսևորումները ոչ այնտեղ, որտեղ պետք է, հաճախ կարող են վնաս հասցնել այն ծառայություններին, որոնք աուդիտորները կարող են մատուցել:

Հարկ է նշել, որ միայն հսկողության բարձր կուլտուրան չի կարող երաշխավորել բանկի արդյունավետ աշխատանքը, միևնույն ժամանակ դրա բացակայությունը կարող է առաջացնել անցանկալի հետևանքներ:

Օբյեկտիվություն

Ներքին աուդիտի աշխատակիցները (աուդիտորները) իրենց գործունեության ընթացքում պետք է առավելագույն օբյեկտիվ լինեն և թույլ չտան, որպեսզի արտաքին գործոնները կամ երրորդ անձանց կարծիքները ազդեն նրանց քննարկումների վրա: Օբյեկտիվության հարցը կարող է առաջանալ մի քանի ուղղություններով, մասնավորապես.

- Անձը, որը ենթարկվում է աուդիտորական ստուգման, կարող է զբաղեցնել ավելի բարձր պաշտոն, քան աուդիտորը, ինչը չպետք է վախեցնի աուդիտորին:
- Աուդիտորին կարող են հանձնարել ստուգել իր մոտ ընկերոջը, բարեկամին կամ ազգականին: Նման դեպքերում՝ աուդիտորը պետք է հրաժարվի կամ առաջարկի տվյալ հանձնարարությունը կատարել այլ աուդիտորի:
- Եթե աուդիտորին հանձնարվել է ստուգել որևէ մենեջերի աշխատանքը, որի մոտ հետազայում նա պարտավորվում է տեղափոխվել աշխատանքի, այս դեպքում աուդիտորը նույնպես պետք է հրաժարվի կամ առաջարկի տվյալ հանձնարարությունը կատարել այլ աուդիտորի:
- Աուդիտորները չպետք է ստուգեն այն ուղղությունները, որոնց համար նրանք արդեն պատասխան տվել են իրենց նախկին գործունեության ժամանակ:

Ռիսկի գնահատում

Արդյունավետ ներքին հսկողության համար կարևոր է ռիսկերի գնահատումը ներքին և արտաքին գործոն- ների տեսանկյունից, որոնք կարող են բացասաբար ազդել բանկի ընթացիկ և հեռանկարային նպատակների իրականացման վրա: Ռիսկի գնահատումը պետք է կրի անընդհատ բնույթ՝ նախկինում անվերահսկելի և նոր առաջացող ռիսկերի առավելագույն կառավարման տեսանկյունից: Ներքին հսկողության արդյունավետ հե- ռանկարի համար կարևոր է ռիսկերի՝ որպես բանկի գործունեության վրա ազդող ներքին և արտաքին գործոնների գնահատումը և ճանաչումը: Վերջիններս անմիջապես ազդում են բանկի տեղեկատվական, գործառնական և համապատասխանության նպատակների իրականացման վրա:

Ինչպես արդեն նշվել է, ներքին աուդիտը ուղղված է կազմակերպություններին սպառնացող ռիսկերի բացահայտմանը և դրանց համարժեք կառավարման ապահովմանը:

Ներքին աուդիտը չի հանդիսանում լրացում կամ կառավարման մարմնի կողմից վերահսկողության գործառնություն փոխարինում: Վերջինս հանդիսանում է կառավարման մարմինների պարտականությունը, որոնք պետք է կարողանան կառավարել [նիսկերը](#) առանց աուդիտի ծառայության:

Ռիսկի արդյունավետ գնահատումը ներառում է՝

- ներքին գործունեությունը, որոնցից են բանկի կառուցվածքի ամբողջականությունը, բանկային գործառնությունների էությունը, աշխատակազմի որակը և կազմակերպական փոփոխությունները
- արտաքին գործունեությունը, որոնցից հիմնականն է տնտեսության և այլ արտաքին (արդյունաբերության և տեխնոլոգիաների մեջ) փոփոխությունները:

Ներքին հսկողության կողմից ռիսկերի ճանաչումը և գնահատումը տարբերվում է ռիսկերի կառավարման գործընթացից, որը հիմնականում կենտրոնանում է գործառնական ռազմավարության զարգացման վրա:

Ռիսկերի ամբողջական գնահատումը ներառում է ինչպես կառավարելի (վարկային, շուկայական, իրացվելիության), այնպես էլ չկառավարվող (գործառնական, իրավական, համբավի և այլն) ռիսկերի գնահատումը:

Ռիսկերի գնահատման կառավարելիությունը որոշվում է դրանց գնահատման արդյունքում: Կառավարելի ռիսկերի համար բանկը պետք է ունենա հստակ մշակված ծրագիր. նման ռիսկերը պետք է դասակարգել և ձեռնարկել միջոցառումներ բանկի գործունեության վրա դրանց ազդեցությունը մեղմացնելու ուղղությամբ: Զկառավարվող ռիսկերը բանկը պետք է ի սկզբանե որոշի ընդունել և ձեռնարկել միջոցառումներ բանկի գործունեության վրա դրանց ազդեցությունը մեղմացնելու ուղղությամբ:

Ռիսկերի գնահատումը կարող է տալ դրական արդյունք միայն այն դեպքում, երբ գործադիր տնօրինության կողմից այն իրականացվում է մշտապես և յուրաքանչյուր փոփոխության դեպքում անմիջապես մշակվում և կիրառվում է համապատասխան մոտեցում:

Ընթացիկ հսկողական և ստուգման աշխատանքներ

Ընթացիկ հսկողական ու ստուգման աշխատանքները բանկի ամենօրյա գործառնությունների անբաժանելի մասն են և իրենց մեջ ներառում են՝

- բանկի գործադիր ղեկավարների կողմից հաշվապահական, ֆինանսական հաշվետվությունների մշտական վերլուծություն
- բանկի կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարների կողմից աշխատանքների ֆունկցիոնալ հսկողություն
- ակտիվների, ներառյալ արժեթղթերի և այլ ֆինանսական ակտիվների հսկում, պարբերաբար գույքագրում
- ռիսկի ընդունելի սահմանների հաշվարկ
- բանկի կողմից կատարված գործարքների համապատասխանության ստուգում
- բանկի պարտավորությունների նկատմամբ հսկողություն:

Ընթացիկ հսկողական և ստուգման աշխատանքների արդյունավետության բարձրացման համար կարևոր նշանակություն ունի անձնակազմի գործառնական պարտականությունների հստակ տարանջատումը՝ փոխադարձ հսկողության սկզբունքի հիման վրա:

Տեղեկատվություն և հաղորդակցություն (տեղեկատվական կոմունիկացիա)

Ներքին հսկողության օպերատիվությունը մեծապես կախված է արժանահավատ ու ամբողջական տեղեկատվություն և արդյունավետ հաղորդակցություն ապահովող կազմակերպական կառուցվածքից: Տեղեկատվության հոսքը պետք է լինի դեպի վեր (բանկի ղեկավարներ) և դեպի ներքև (բանկի անձնակազմ), որպեսզի ողջ անձնակազմը քաջատեղյակ լինի բանկի ռազմավարությանն ու քաղաքականությանը: Գաղտնիք չէ, որ միայն արժանահավատ և ամբողջական տեղեկատվությունը կարող է լինել ճիշտ ֆինանսական որոշումների հիմքում:

Մոնիտորինգ

Բանկի գործունեության դինամիկ զարգացման նպատակով բանկին անհրաժեշտ է իրականացնել գործունեության տարբեր բնագավառների մոնիտորինգ, որին համապատասխան տրվում են իրական գնահատականներ:

4.10. Ներքին հսկողության համակարգ

Հսկողություն ղեկավարների կողմից

Բանկի ղեկավարները պատասխանատու են բանկի ռազմավարության և քաղաքականության, ռիսկերի կառավարման, ներքին հսկողության համակարգի գործունեության, ինչպես նաև հսկողության կուլտուրայի ձևավորման համար, որպեսզի բանկի անձնակազմը գիտակցի ներքին հսկողության նշանակությունն ու կարևորությունը:

Բանկի խորհուրդը

Բանկի խորհուրդը պարտավոր է՝

- ա) իրականացնել բանկի ներքին հսկողության վերլուծություն գործադիր ղեկավարների, ներքին և արտաքին աուդիտորների հետ, քննարկել վերջիններիս դիտողությունները և առաջարկությունները
- բ) բանկի առավել ռիսկային գործառնությունների նկատմամբ հսկողությունը դասել առաջնային և պարբերաբար վերանայել բանկի ռազմավարությունը ներքին հսկողության առումով
- գ) պարբերաբար անդրադառնալ ներքին հսկողության աշխատանքներին, այդ թվում՝ վերահսկողների և աուդիտորների կողմից տրված առաջարկությունների կատարմանը:

Բանկի գործադիր ղեկավարները

Բանկի գործադիր ղեկավարները պատասխանատու են՝

ա) բանկի խորհրդի կողմից հավանության արժանացած քաղաքականության և ռազմավարության իրականացման, ինչպես նաև ներքին հսկողության համակարգի պատշաճ արդյունավետության

բ) պարտականությունների և իրավունքների հստակ բաշխման, ինչպես նաև հսկողության լայն տեսադաշտի ձևավորման, բանկի բոլոր ստորաբաժանումների և դրանց գործունեության հսկման

գ) առանձին բաժինների գործունեության համար պատասխանատու անձանց համապատասխան լիազորությունների ամրագրման

դ) կազմակերպական կառուցվածքի կատարելագործման (տեղեկատվության և հաղորդակցության ճկունության ապահովման տեսանկյունից)

ե) բանկի անձնակազմի պարբերաբար վերապատրաստման (նրանց արհեստավարժության և որակավորման մակարդակի բարձրացման) համար:

Ներքին հսկողության համակարգի կազմակերպում

Բանկի ներքին հսկողության կազմակերպումը կարող է իրականացվել երկու կտրվածքով՝ ֆինանսական հսկողության և ներքին հսկողության ծառայության միջոցով:

Ֆինանսական հսկողություն

Բանկի ներքին հսկողության համակարգի անմիջական կազմակերպմամբ զբաղվում է ներքին հսկողության ծառայությունը: Այն բանկերը, որոնք չունեն ներքին հսկողության ծառայություն, պետք է կազմակերպական կառուցվածքը կատարելագործեն այնպես, որպեսզի անուղակիորեն իրականացվի ներքին հսկողությունը:

Ֆինանսական հսկողության միջոցով ապահովվում է գործառնությունների համապատասխանությունը բանկի կողմից ընդունված քաղաքականությանը՝ հաշվետվություններում ֆինանսական բազմաբնույթ ծառայությունների համարժեք արտացոլման շնորհիվ:

Ներքին հսկողության ծառայության աշխատակիցների թվաքանակը որոշվում է բանկի ղեկավարի կողմից և պետք է բավարար լինի ներքին հսկողության նպատակների արդյունավետ իրականացման համար:

Վարչական հսկողություն

Վարչական հսկողությունը կատարվում է բանկային գործառնությունների իրականացումն ապահովող իրավասու անձանց, հիմնականում ղեկավարների կողմից՝ բանկի կողմից սահմանված ընթացակարգերին համապատասխան:

4.11. Ներքին հսկողության ծառայության աշխատակիցների իրավունքները և պարտականությունները

Իրավունքները

Ներքին հսկողության ծառայության աշխատակիցներն իրավունք ունեն`

ա) ստուգվող կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարներից կամ նրանց կողմից լիազորված աշխատակիցներից ստանալ անհրաժեշտ փաստաթղթեր, այդ թվում՝ հրամաններ, կարգադրություններ, հաշվապահական, դրամահաշվարկային և այլ նյութեր

բ) մշակել որոշումների ընդունման ընթացակարգը, հաշվառման և հաշվետվությունների կազմակերպման ձևը, վերլուծել ֆինանսական վիճակը բնութագրող ցուցանիշները

գ) անհրաժեշտության դեպքում ներքին հսկողության աշխատանքների մեջ ներգրավել կառուցվածքային այլ ստորաբաժանումների աշխատակիցներին

դ) մուտք գործել ստուգվող ստորաբաժանում և այն տարածքները, որտեղ պահվում են փաստաթղթեր (արխիվներ), կանխիկ դրամ, այլ արժեքներ (դրամապահոցներ), տվյալների համակարգչային մշակումներ՝ ստուգվող ստորաբաժանման ղեկավարի կամ նրա կողմից լիազորված աշխատակցի պարտադիր ներգրավմամբ

ե) բանկի գործադիր ղեկավարության թույլտվությամբ՝ ինքնուրույն կամ ստուգվող ստորաբաժանման աշխատակցի օգնությամբ պատճենահանել ստացված փաստաթղթերը, այդ թվում՝ համակարգչային գրառումները, որոնք պահվում են լոկալ (տեղային) ցանցում և ինքնուրույն համակարգչային համակարգերում, ինչպես նաև ապակողավորել այդ գրությունները:

Պարտականությունները

Ներքին հսկողության ծառայության աշխատակիցները պետք է ունենան իրենց կողմից իրականացվող աշխատանքների և ֆունկցիոնալ պարտականությունների բնույթին համապատասխան բարձրագույն կրթություն և տիրապետեն անհրաժեշտ որակական և մասնագիտական հմտություններին:

Ներքին հսկողության ծառայության աշխատակիցները պարտավոր են`

ա) ապահովել ստուգման յուրաքանչյուր փաստի լիարժեք փաստաթղթավորումը և ձևակերպել եզրակացություններ ստուգման արդյունքների վերաբերյալ, որտեղ պետք է արտացոլվեն ստուգման ընթացքում ուսումնասիրված բոլոր հարցերը, հայտնաբերված խախտումները, թերություններն ու բացթողումները

բ) մշակել սխալների վերացմանն ուղղված հանձնարարականներ, ինչպես նաև խախտումների համար կարգապահական կամ այլ բնույթի ազդեցության լծակներ կիրառելու առաջարկություններ

գ) հսկողություն իրականացնել նշված խախտումների վերացմանն ուղղությամբ արված առաջարկությունների և իրահանգների կատարման վրա

դ) ապահովել համապատասխան ստորաբաժանումներից ստացված փաստաթղթերի պահպանումն ու վերադարձը:

Բանկի ստորաբաժանումների համագործակցությունը ներքին հսկողության ծառայության հետ

Բանկի ստորաբաժանումների աշխատակիցները ներքին հսկողության ծառայության աշխատակիցներին օժանդակում են իրենց գործառնությունների կատարման ընթացքում:

Բանկի այն աշխատակիցները, որոնց հայտնի է դարձել օրինականության և գործառնությունների (գործարքների) իրականացման կանոնների, ինչպես նաև բանկին, ավանդատուներին, հաճախորդներին հասցված կամ սպառնացող վնասի փաստեր, պետք է տեղեկացնեն իրենց անմիջական ղեկավարներին և ներքին հսկողության ծառայությանը:

Բանկի աշխատակիցները, առանց ներքին հսկողության ծառայությանը նախապես ծանուցելու, չեն կարող մասնակցել այնպիսի գործառնությունների (գործարքների), որոնց իրականացման ժամանակ նրանք կարող են շահագրգիռ անձ ճանաչվել:

Ինքնաստուգման հարցեր

1. Որո՞նք են բանկերի ներքին հսկողության անհրաժեշտության հիմնավորումները:
2. Որո՞նք են բանկերի ներքին հսկողության հիմնական սկզբունքները:
3. Որո՞նք են ներքին հսկողության 3 հիմնական հասկացությունները:
4. Ինչպե՞ս կարելի է բնութագրել հետևյալ ռիսկերը՝
 - վարկային
 - իրացվելիության
 - եկամտաբերության
 - շուկայական
 - գործառնական
 - կառավարման (տնօրինման)
5. Որո՞նք են բանկի վերահսկողական քաղաքականության նպատակները (ուղղվածությունները):
6. Որո՞նք են ներքին վերահսկողության հիմնարար սկզբունքները:
7. Ինչպիսի՞ն է բանկի ներքին աուդիտի տեղը և դերը բանկի կառավարման կառուցվածքում:
8. Որո՞նք են բանկի վերաստուգիչ հանձնաժողովի լիազորությունները:
9. Որո՞նք են ներքին հսկողության հիմնական նպատակները:
10. Որո՞նք են ներքին հսկողության համար վերլուծության ենթակա ցուցանիշները:
11. Ինչպե՞ս կարելի է բնութագրել կապիտալի բավարար մակարդակը:
12. Որո՞նք են բանկերի կողմից իրացվելիության ապահովման երեք հիմնական տարբերակները:
13. Որո՞նք են բանկի ակտիվների որակի վերաբերյալ հարցի վարկավորման փաստաթղթերով ամրագրված սկզբունքների, պրոբլեմային վարկերի վաղ հայտնաբերման կարևորությունը:
14. Որո՞նք են խոշոր գործարքների վերահսկման երկու կողմերը:
15. Որո՞նք են բանկային համակարգի այն բնագավառները, որտեղ ռիսկերի կենտրոնացումը կարող է անհանգստություն առաջացնել:
16. Ինչպե՞ս կարելի է բնութագրել բանկի ֆինանսական վիճակի կախվածությունը բանկի կառավարումից:
17. Ինչպե՞ս կարելի է բնութագրել բանկի ղեկավարների պատասխանատվությունը:
18. Որո՞նք են այն հիմնական պրակտիկ դրույթները, որոնք աուդիտորները պետք է հաշվի առնեն իրենց ամենօրյա աշխատանքներում:
19. Որո՞նք են ներքին հսկողության ծառայության աշխատակիցների (աուդիտորների) վարքագծի կանոնները:
20. Ինչպե՞ս կարելի է բնութագրել հսկողության կուլտուրան՝ որպես ներքին հսկողության հիմնական տարր, նկարագրել անհրաժեշտ աշխատանքային մթնոլորտը:
21. Ինչպե՞ս կարելի է բնութագրել աուդիտորների օբյեկտիվությունը՝ որպես ներքին հսկողության հիմնական տարր:
22. Ինչպե՞ս կարելի է բնութագրել ռիսկերի գնահատման դերը արդյունավետ ներքին հսկողության գործում:
23. Ինչպե՞ս կարելի է բնութագրել ընթացիկ հսկողության ստուգման աշխատանքների դերը և դրանց տարրերը:
24. Ինչպիսի՞ն է տեղեկատվության և հաղորդակցության դերը:
25. Ինչպիսի՞ն է բանկի ղեկավարների պատասխանատվությունը:
26. Որո՞նք են բանկի խորհրդի իրավասությունները:
27. Որո՞նք են բանկի գործադիր ղեկավարների իրավասությունները:
28. Ինչպե՞ս կարելի է բնութագրել ֆինանսական հսկողությունը:
29. Ի՞նչ է վարչական հսկողությունը:
30. Որո՞նք են ներքին հսկողության ծառայության աշխատակիցների իրավունքները:
31. Որո՞նք են ներքին հսկողության ծառայության աշխատակիցների պարտականությունները:
32. Ինչպե՞ս կարելի է բնութագրել բանկի ստորոբաժանումների համագործակցությունը ներքին հսկողության ծառայության հետ:

ԳԼՈՒԽ 5. ՆԵՐՔԻՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՏԵԽՆԻԿԱ

Թեմայի նպատակն է՝ ներկայացնել բանկի գործունեության վերլուծության և գնահատման համար անհրաժեշտ տեղեկատվության ցանկը, չափանիշները և իրականացման մեխանիզմները, բացատրել բանկի ակտիվների նկատմամբ հսկողությունը և իրացման մեխանիզմը, վարկերի և դեբիտորական պարտքերի դասակարգումը՝ համաձայն գործող կարգի, դրամական ակտիվների դասակարգման և գնահատման կարգերը:

Ունակությունների և հնտությունների նկարագրիրը: Թեմայի ավարտից հետո ուսանողները կկարողանան.

- թվարկել այն տեղեկությունները, որոնք անհրաժեշտ է հավաքել բանկի գործունեության վերլուծության և գնահատման համար
- բնութագրել բանկի գնահատման հիմնական չափանիշները
- դասակարգել բանկի հաշվեկշռային տվյալները՝ բանկի ակտիվներն ուսումնասիրելու նպատակով
- դասակարգել ակտիվներն՝ ըստ ռիսկերի կշիռների և ապահովվածության
- ներկայացնել բարձր իրացվելի ակտիվների կազմը՝ համաձայն գործող կարգի
- թվարկել և բացատրել ակտիվների գնահատման հիմունքները
- բացատրել հաշվապահական հաշվառում վարելու և ֆինանսական հաշվետվություններ կազմելու սկզբունքները
- նշել այն հանգամանքները, որոնք պետք է հաշվի առնել գործարք կնքելիս և գործարքի ընթացքում
- խմբավորել վարկերը և դեբիտորական պարտքերը հինգ դասերի
- իրականացնել ակտիվների որակի դասակարգումը՝ օբյեկտիվ և սուբյեկտիվ չափանիշների միջոցով
- տալ չաշխատող ակտիվների սահմանումը և դրանց գրանցումը
- բնութագրել վարկերի և դեբիտորական պարտքերի դասակարգման նպատակը
- բնութագրել ընդհանուր և հատուկ պահուստները
- տարանջատել դրամական միջոցներն ըստ խմբերի
- թվարկել կանխիկին հավասարեցված վճարային գործիքներն՝ ըստ գործող կարգի
- թվարկել EURO-ի և SDR-ի զամբյուղների մեջ մտնող արտարժույթային միջոցները
- թվարկել Եվրահամայնքի մեջ մտնող երկրները:

5.1. Տեղեկատվություն

Բանկի վիճակը լիարժեք նկարագրելու, գործունեության վերլուծություն և գնահատական տալու համար անհրաժեշտ է տեղեկատվություն հավաքել հետևյալ հարցերի վերաբերյալ.

1. Ընդհանուր տեղեկություններ

ա) ԴՅ կենտրոնական բանկի ներկայացրած պահանջներին բանկի և մասնաճյուղերի տարածքային պայմանների և տեխնիկական հագեցվածության համապատասխանության

բ) ներքին կառուցվածքի, աշխատողների թվաքանակի և միջին աշխատավարձի

գ) բանկի կողմից իրականացվող հիմնական ֆինանսական գործառնությունների

դ) արտաքին աուդիտի կողմից բանկում կատարված ստուգումների և դրանց արդյունքների

ե) բանկային գործունեության համեմատական վերլուծության (UBPR) վերաբերյալ:

2. Տեղեկություններ

ԴՅ կենտրոնական բանկի Բանկային վերահսկողության ծառայության կողմից իրականացված նախորդ վերստուգումների և դրանց գծով բանկին տրված հանձնարարականների ու առաջարկությունների կատարման վերաբերյալ:

3. Բանկի կապիտալի համարժեքության ուսումնասիրություն, վերլուծություն և գնահատում

ա) ամփոփ տեղեկություն բանկի ընդհանուր կապիտալի վերաբերյալ

բ) կանոնադրական հիմնադրամ

գ) գլխավոր պահուստ

դ) չբաշխված շահույթ

ե) լրացուցիչ կապիտալ և դրա առանձին տարրեր:

4. Ակտիվների որակի ուսումնասիրություն, վերլուծություն և գնահատում

ա) դրամական միջոցներ

▪ ըստ արժույթների

▪ կանխիկ կամ անկանխիկ

բ) ներդրումներ արժեթղթերում

▪ ըստ իրավակազմակերպական տեսակի

▪ ըստ դասակարգման

▪ պահուստաֆոնդի ձևավորում:

գ) վարկային պորտֆել

վարկային պորտֆելի կառուցվածք

▪ ըստ ճյուղերի

▪ ըստ իրավակազմակերպական տեսակի

▪ ըստ դասակարգման

▪ պահուստաֆոնդ

- վարկերի պահուստաֆոնդի համեմատական վերլուծություն
- դ) դեբիտորական պարտքեր
- ե) հիմնական միջոցներ
- զ) այլ ակտիվներ
- է) հետհաշվեկշռային պարտավորություններ:

5. Բանկի կառավարման որակի վերլուծություն և գնահատում՝

ա) բանկի կողմից կենտրոնական բանկի խորհրդի որոշումների, ինչպես նաև գրություններով բարձրացված հարցերի վերաբերյալ բանկի ղեկավարության կողմից կատարված աշխատանքների արդյունավետության և դրանք ժամանակին կատարելու պատրաստականության գնահատում

- բ) բանկի ղեկավարների վերաբերյալ ամփոփ տեղեկություններ
- գ) բանկի ղեկավարների գործունեության գնահատականը՝ ելնելով հայտնաբերված խախտումների բնույթից
- դ) տեղեկատվություն բանկի ղեկավարների մասնագիտական համապատասխանության վերաբերյալ
- ե) ամփոփ տեղեկություններ ռազմավարական զարգացման ծրագրի և դրա իրականացման վերաբերյալ
- զ) բանկի ընդհանուր քաղաքականության դիտարկում, ուսումնասիրություն և գնահատում, մասնավորապես՝

- վարկային քաղաքականության և վարկերի կառավարման ուսումնասիրություն
- բանկի և հաճախորդների միջև փոխհարաբերությունների (մասնավորապես մերժված վարկային հայտեր և մերժման պատճառների գնահատում) վերաբերյալ
- վարկերի տրամադրման և դրանց երկարաձգման պայմանների վերլուծություն
- տրամադրված վարկերի՝ տնտեսության հատվածային սահմանափակումների և տեղաբաշխման վերլուծություն
- մեկ փոխառուի և բոլոր փոխառուների գծով վարկերի տրամադրման սահմանաչափերի ուսումնասիրություն
- տրված վարկերի ապահովվածության գծով սահմանափակումների ուսումնասիրություն
- չգործող ակտիվների հետ վերադարձման ուղղությամբ (ներառյալ օվերդրաֆտներ) բանկի կողմից տարվող քաղաքականության վերլուծություն և դրա արդյունավետության գնահատում
- միջոցների (իրացվելի ակտիվների, երկրորդային ռեզերվների, իրացվելիության պահպանման այլ աղբյուրների և այլն) կառավարմանն ուղղված բանկի քաղաքականության վերլուծություն և գնահատում
- է) բանկի ստորաբաժանումների աշխատանքները կարգավորող կանոնակարգերի գնահատում
- ը) տեղեկություններ ռիսկերի ուսումնասիրությամբ զբաղվող ստորաբաժանման վերաբերյալ և բանկի ղեկավարության կողմից առաջացած **ռիսկերին** հետևելու և գնահատելու կարողության գնահատում
- թ) բանկի ղեկավարների կողմից սահմանված նպատակներին և խնդիրներին հետամուտ լինելու, դրանց գնահատման և վերագնահատման կարողության ուսումնասիրություն
- ժ) ներքին հսկողության օդակի գործունեության գնահատում, մասնավորապես՝ ԴՀ ԿԲ կողմից բանկերում ներքին հսկողության կազմակերպման վերաբերյալ պահանջներին տվյալ ստորաբաժանման գործունեության համապատասխանության առումով

ժա) բանկի կառավարման մարմինների և վերստուգիչ հանձնաժողովի կողմից իրականացված աշխատանքների և կայացված որոշումների արդյունավետության գնահատում

6. Շահութաբերության վերլուծություն և գնահատում՝

- ա) վերստուգմամբ նախատեսված ֆինանսական հաշվետվության ժամկետին նախորդող մեկ տարվա ընթացքում ստացված եկամուտների և ծախսերի (շահույթ կամ վնաս) վերլուծություն
- բ) բանկի ակտիվների շահութաբերության մակարդակի վերլուծություն
- գ) ընդհանուր կապիտալի շահութաբերության մակարդակի վերլուծություն
- դ) բանկի եկամտաբերության աստիճանի վերլուծություն:

7. Իրացվելիության վերլուծություն և գնահատում՝

- ա) իրացվելիության ցուցանիշների վերլուծություն
- բ) տվյալներ բանկի կողմից ներգրավված և տեղաբաշխված միջոցների կառուցվածքի վերաբերյալ
- գ) ներգրավված և տեղաբաշխված միջոցների ժամկետայնության (GAP) վերլուծություն
- դ) դրամական հոսքերի վերլուծություն:

8. Ռիսկերի ուսումնասիրություն և գնահատում՝

- ա) գործառնական սխալների, տեխնիկական և խարդախությունների ռիսկերի գնահատում, բանկի ընդհանուր ծախսերի վրա այս տեսակի ռիսկից առաջացած կորուստների հարաբերակցության ուսումնասիրություն
- բ) ֆինանսական ռիսկերի գնահատում, մասնավորապես՝
 - արժուքային դիրքերի կառուցվածքի և դրանցում տեղի ունեցած փոփոխությունների դինամիկայի վերլուծություն և գնահատում, արժուքային սփոթ և ֆորվարդային դիրքերի գնահատում և այլն
 - պարտավորությունների պորտֆելի վերլուծություն և գնահատում, մասնավորապես բանկի կողմից թողարկված բարձր ռիսկային և ոչ ռիսկային արժեթղթերի միջև հարաբերակցության վերլուծություն, ներգրավված միջոցների կառուցվածքի մեջ ցպահանջ և ժամկետային ավանդների տեսակարար կշիռների վերլուծություն
 - ակտիվների պորտֆելի ռիսկայնության վերլուծություն, մասնավորապես՝ դասակարգված վարկերի, օվերդրաֆտի ծավալների, վարկերի պահուստի փոփոխության դինամիկայի, **արժեթղթերի պորտֆելի** ձևավորման ընթացքում բանկի համար ռիսկի ենթարկվածության աստիճանի գնահատում

- տոկոսային ռիսկի գնահատում, մասնավորապես՝ ընդհանուր ակտիվների և պասիվների պորտֆելում տոկոսադրույքի նկատմամբ զգայուն ակտիվների և պասիվների ծավալների վերլուծություն, տոկոսադրույքի GAP-ի գնահատում, բանկի ընդհանուր եկամուտների մեջ տոկոսային եկամուտների չափերի գնահատում
- սպրեդի մարժայի վերլուծություն և տոկոսադրույքի փոփոխությունների նկատմամբ մարժայի զգայունության գնահատում
- իրավական ռիսկի գնահատում կապված Հաշվապահական Հաշվառման Միջազգային Ստանդարտների ներդրման, կանոնակարգերում և այլ իրավական ակտերում կատարված փոփոխությունների հետ
- այլ ռիսկերի վերլուծություն:

9. Խախտումներ և թերություններ՝

- ա) ՀՀ կենտրոնական բանկ ներկայացված հաշվետվությունների և տեղեկանքների արժանահավատության
- բ) բանկի կողմից հիմնական տնտեսական նորմատիվների պահպանման
- գ) գործող օրենքների և այլ իրավական (նորմատիվ) ակտերի պահանջների կատարման վերստուգում:

10. Վճարման հանձնարարականներով բանկի կողմից միջոցների փոխանցումների իրականացման ժամկետների պահպանման վերստուգում (մասնավորապես բյուջեի գծով):

5.2. Բանկի գնահատման հիմնական չափանիշները և իրականացման մեխանիզմները

Բանկի գնահատման հիմնական չափանիշներից են բանկի կապիտալի համարժեքությունը և բանկի իրացվելիությունը, որոնց վրա էական ազդեցություն ունի բանկի ակտիվների որակը: Նշված չափանիշները հաշվարկում են՝

Բանկի ընդհանուր կապիտալի համարժեքությունը՝

- ընդհանուր կապիտալի և ռիսկով կշռված ակտիվների գումարների միջև սահմանային հարաբերակցությունը
- հիմնական կապիտալի և ռիսկով կշռված ակտիվների գումարների միջև սահմանային հարաբերակցությունը

Բանկի իրացվելիությունը՝

- բանկի բարձր իրացվելի ակտիվների և ընդհանուր ակտիվների գումարների միջև սահմանային հարաբերակցությունը (ընդհանուր իրացվելիություն,
- բանկի բարձր իրացվելի ակտիվների և ցպահանջ պարտավորությունների միջև սահմանային հարաբերակցությունը (ընթացիկ իրացվելիություն)

Վերը նշված չափանիշները հաշվարկելու համար անհրաժեշտ է բանկի ակտիվներն ուսումնասիրել տարբեր տեսանկյուններով՝ ըստ իրացվելիության և ռիսկի կշիռների:

Բանկի ակտիվների ուսումնասիրությունը սկսելու համար անհրաժեշտ է նախ բանկի հաշվեկշռային տվյալների համաձայն դրանք խմբավորել ըստ տեսակների՝

- դրամական միջոցները
- արժեթղթերի պորտֆելը
- վարկային պորտֆելը
- դեբիտորական պարտքերը
- լիզինգային և ֆակտորինգային գործառնությունները
- հիմնական միջոցները
- հետհաշվեկշռային պարտավորությունները
- այլ ակտիվները:

Ուսումնասիրելով վերը նշված ակտիվներից յուրաքանչյուրը, կարելի է դրանք դասակարգել և խմբավորել հետևյալ կերպ՝

- ընդհանուր ակտիվներ
- ռիսկով կշռված ակտիվներ
- բարձր իրացվելի ակտիվներ:

Բանկի ընդհանուր ակտիվները՝ բանկի հաշվեկշռային «Ակտիվներ» կարգի բոլոր հաշիվների հանրագումարն է: Նորմատիվների հաշվարկի ընթացքում դրանից նվազեցվում են՝

- ՀՀ պետական գանձապետական արժեթղթերով, ոսկու ստանդարտացված ձուլակտորներով, դրամով, SDR-ի գանբյուլների մեջ մտնող արժույթներով, ինչպես նաև այլ արտարժույթային միջոցներով ապահովված ակտիվների, եթե վերջիններս հանդիսանում են միևնույն արտարժույթով արտահայտված ակտիվների ապահովում և ռեպո համաձայնագրերի գումարների չափով
- այն վարկերի գումարի չափով, որոնք տրամադրվել են օտարերկրյա բանկերից և ֆինանսական կազմակերպություններից նպատակային կարգով ներգրաված միջոցների հաշվին, որոնց վերադարձն ապահովված է Հայաստանի Հանրապետության կառավարության կամ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի երաշխավորությամբ, դրանց տրամադրման ժամկետները չեն գերազանցում ներգրավման ժամկետները, և բանկը դրանց գծով չի ստանձնել լրացուցիչ ռիսկեր:

Բանկի ռիսկով կշռված ակտիվների ծավալը որոշելու համար անհրաժեշտ է ընդհանուր ակտիվները խմբավորել ըստ ռիսկերի կշիռների: Ռիսկի կշիռները տատանվում են 0-ից մինչև 100 տոկոս, համաձայն «Բանկերի գործունեության կարգավորումը, բանկային գործունեության տնտեսական նորմատիվները» Կանոնակարգ-2-ի: Ռիսկի կշիռները ուղիղ համեմատական են կոնկրետ ակտիվի ապահովության, վերադարձելիության և իրացվելիության մակարդակին:

Բանկի բարձր իրացվելի ակտիվների կազմում ընդգրկվում են.

- Կանխիկ դրամական միջոցները, կանխիկին հավասարեցված վճարային փաստաթղթերից՝ VISA, THOMAS COOK, MASTER CARD, AMERICAN EXPRESS և ԶԶ կենտրոնական բանկի խորհրդի համաձայնությամբ՝ նաև այլ վճարային փաստաթղթերը:
- ԶԶ կենտրոնական բանկում թղթակցային հաշիվների և պարտադիր պահուստների միջոցներ և ներդրված ավանդները:
- Ոսկու ստանդարտացված ձուլակտորները:
- ԶԶ պետական գանձապետական արժեթղթեր՝ ընթացիկ (վերականգնման) արժեքով, բացառությամբ գրավադրված և հետզման պայմանագրով վաճառված արժեթղթերի:
- Ուեզիդենտ և օտարերկրյա բանկերում թղթակցային հաշիվներ, ընդ որում վերջիններիս մեծությունները նվազեցվում են նույն բանկի նկատմամբ ունեցած պարտավորությունների չափով, բայց ոչ ավելի քան համապատասխան նոստրո հաշվի մնացորդն է:

Բարձր իրացվելի ակտիվների հաշվարկում ընդգրկվող վերը թվարկված ակտիվների և դրանց գծով հաշվարկված տոկոսների վրա չպետք է լինի դրանց օգտագործումը սահմանափակող որևէ պայման:

5.3. Բանկի ակտիվների նկատմամբ հսկողությունը և իրականացման մեխանիզմը

Բանկի ակտիվները և դրանց գնահատումը

Բանկի ակտիվները նրա կողմից վերահսկվող միջոցներ են՝ որպես կատարված գործառնությունների (դեպքերի) արդյունք և հաշվապահական հաշվեկշռում ճանաչվում են այն դեպքում, երբ կազմակերպությունը դրանց օգտագործումից ակնկալում է տնտեսական օգուտ և այն ունի արժեք, որը կարող է արժանահավատորեն գնահատվել:

Ակտիվների գնահատումն այն դրամական մեծության որոշումն է, որով դրանք գրանցվում են հաշվապահական հաշվառման մեջ և ֆինանսական հաշվետվություններում: Բանկի ակտիվների գնահատումը կատարվում է տարբեր աստիճաններով ու համակցություններով, ներքոհիշյալ հիմունքները կիրառելու միջոցով՝

- ա) սկզբնական արժեք՝ ակտիվները գրանցվում են դրանց ձեռքբերման ժամանակ վճարված դրամական միջոցների գումարի չափով կամ դրանց ձեռքբերման պահին կողմերի համաձայնությամբ որոշված արժեքով
- բ) ընթացիկ (վերականգնման) արժեք՝ ակտիվները գրանցվում են դրամական միջոցների այն գումարի չափով, որը կվճարվեր, եթե ներկա պահին միևնույն կամ համանման այլ ակտիվ ձեռք բերվեր
- գ) իրացման (մարման) արժեք՝ ակտիվները գրանցվում են դրամական միջոցների այն գումարի չափով, որը կարող էր ներկա պահին ստացվել, եթե ակտիվներն իրացվեին
- դ) ներկա արժեք՝ ակտիվները գրանցվում են դրամական միջոցների ապագա զուտ մուտքերի զեղչված գումարի չափով, որոնք պետք է ստեղծեն ակտիվները կազմակերպության սովորական գործունեության ընթացքում:

Սովորաբար գնահատման հիմունքների կիրառման եղանակները սահմանվում են հաշվապահական հաշվառման ստանդարտներով: Եթե տվյալ ակտիվի գնահատման եղանակը ստանդարտներով սահմանված չէ, ապա գնահատումը կատարվում է սկզբնական արժեքով:

Հաշվապահական հաշվառում վարելու և ֆինանսական հաշվետվություններ կազմելու սկզբունքները

Ակտիվների ուսումնասիրության ընթացքում առաջնահերթ ուշադրություն պետք է դարձվի հաշվապահական հաշվառում վարելու և ֆինանսական հաշվետվություններ կազմելու սկզբունքների պահպանմանը, մասնավորապես՝

- ա) անընդհատությունը՝ կազմակերպությունը շարունակելու է իր գործունեությունը տեսանելի ապագայում և միտում կամ անհրաժեշտություն չունի լուծարվելու կամ էականորեն կրճատելու իր գործունեությունը
- բ) հետևողականությունը՝ հաշվապահական հաշվառման քաղաքականությունը մի հաշվետու ժամանակաշրջանից մյուսը չպետք է փոփոխվի, բացառությամբ այն դեպքերի, երբ էական փոփոխություններ են տեղի ունենում կազմակերպության գործառնությունների բնույթում, կամ հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխության միջոցով տրվում է առավել էական տեղեկատվություն, կամ հաշվապահական հաշվառումը կարգավորող օրենսդրության մեջ տեղի են ունեցել փոփոխություններ
- գ) հաշվեգրումը՝ տնտեսական գործունեության արդյունքները (ակտիվները, սեփական կապիտալը, պարտավորությունները, եկամուտները և ծախսերը) հաշվապահական հաշվառման մեջ արտացոլվում են այն ժամանակ, երբ դրանք տեղի են ունեցել անկախ դրանց հետ կապված դրամական միջոցների վճարման կամ ստացման ժամկետից
- դ) հասկանալիությունը՝ ֆինանսական հաշվետվություններում պարունակվող տեղեկատվությունը պետք է հասկանալի լինի օգտագործողներին
- ե) էականությունը՝ տեղեկատվությունը համարվում է էական, եթե նրա չբացահայտումն ազդում է ֆինանսական հաշվետվություններ օգտագործողների՝ այդ հաշվետվությունների հիման վրա կայացրած տնտեսական որոշումների վրա
- զ) միասնականությունը՝ հաշվապահական հաշվառման բնույթով և գործառնություններով (ֆունկցիաներով) նման հաշիվները ֆինանսական հաշվետվությունների մեջ պետք է միավորվեն, եթե դրանց առանձին ներկայացումը չի պարունակում էական տեղեկատվություն
- է) արժանահավատությունը՝ ֆինանսական հաշվետվությունները համարվում են արժանահավատ, եթե բավարարում են հետևյալ պահանջներին.
 - ձևի նկատմամբ բովանդակության գերակայությանը՝ տնտեսական գործունեության արդյունքները հաշվապահական հաշվառման մեջ և ֆինանսական հաշվետվություններում պետք է հաշվառվեն և ներկայացվեն, ելնելով

դրանց տնտեսական բովանդակությունից և տնտեսավարման պայմաններից և ոչ թե միայն դրանց իրավական ձևից

- չեզոքությանը՝ ֆինանսական հաշվետվությունները չպետք է ուղղված լինեն օգտագործողների առանձին խմբի շահերի բավարարմանը
- հաշվենկատությանը՝ բավարար չափի զգուշության պահպանումն է, այնպես, որ ակտիվները և եկամուտները գերազնահատված չլինեն, իսկ պարտավորությունները և ծախսերը՝ թերազնահատված, միևնույն ժամանակ, թույլ չտրվի թաքցված պահուստների ստեղծում
- ամբողջականությանը՝ ֆինանսական հաշվետվություններում ներկայացված տեղեկատվությունը պետք է լինի ամբողջական՝ էականության և արժեքի սահմաններում:
 - ը) համադրելիությունը՝ կազմակերպության տարբեր ժամանակաշրջանների, ինչպես նաև տվյալ կազմակերպության և այլ կազմակերպությունների ֆինանսական հաշվետվությունները պետք է լինեն համադրելի
 - թ) հաշվանցումը՝ ակտիվների, սեփական կապիտալի և պարտավորությունների, եկամուտների և ծախսերի հոդվածների միջև հաշվանցում չի թույլատրվում բացառությամբ հաշվապահական հաշվառումը կարգավորող օրենսդրությամբ նախատեսված դեպքերի
 - ժ) սահմանազատումը՝ կազմակերպության ակտիվները և պարտավորություններն առանձնացված են այդ կազմակերպության հիմնադիրների, մասնակիցների և այլ կազմակերպությունների ակտիվներից ու պարտավորություններից:

Գործարք կնքելը

Բանկի ակտիվների արդյունավետ օգտագործումը և դրանք կորստից ապահովելու համար անհրաժեշտ է աշխույժ վերաբերմունք ինչպես գործարքը կնքելու մտադրությունը սկսելու պահին, այնպես էլ ընթացքում:

- Մինչև գործարքը սկսելը կարևոր է.
 - ձեռք բերել հաճախորդի վերաբերյալ օբյեկտիվ և սուբյեկտիվ բավարար տեղեկատվություն
 - նանրամասն ուսումնասիրել բիզնես ծրագրերը
 - գնահատել հաճախորդի վճարունակությունը
 - ուսումնասիրել գործունեության ոլորտը
 - ուսումնասիրել ներդրումային քաղաքականությունը:
- Գործարքի կնքման ընթացքում չափազանց կարևոր է հաճախորդի պահվածքը և վարվելակերպը կապված նախնական համաձայնությունների և պայմանավորվածությունների պատշաճ կատարման հետ, հատկապես պահանջվող փաստաթղթերի բովանդակության և դրանց ժամկետին ներկայացման առումով: Գործարքի ընթացքում անհրաժեշտ է՝
 - հետևել հաճախորդի ստանձնած պարտավորությունների կատարմանը, ինչպես ժամկետայնության, այնպես էլ նպատակայնության առումով
 - պարբերաբար պահանջել հաշվետվություններ ֆինանսական վիճակի վերաբերյալ
 - պարբերաբար հավաքել տեղեկատվություն հաճախորդի կողմից ստանձնած այլ պարտավորությունների վերաբերյալ
 - հետևել հաճախորդի կառավարման մարմիններում տեղի ունեցող փոփոխություններին
 - իրականացնել հաճախորդի վճարունակության դինամիկ վերլուծություն
 - գնահատել գործարքի ապահովվածությունը:

Ակտիվների ապահովվածությունը

Ակտիվները կորստից ապահովելու գործիքներից է գործարքի ապահովագրումը կամ ապահովվածությունը: Բարձր իրացվելի կարելի է համարել այն ակտիվները, որոնք ամբողջությամբ ապահովված են՝

- ա) Հայաստանի Հանրապետության կառավարության երաշխավորագրերով (բյուջետային երաշխիքներ)
- բ) Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի երաշխիքներով և արժեթղթերով
- գ) Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի համաձայնությամբ՝ առաջնակարգ բանկերի երաշխավորագրերով, երաշխիքներով կամ առաջնակարգ ապահովագրական ընկերությունների ապահովագրական վկայագրերով (պոլիսներով)
- դ) հայկական դրամի, ՀՀ կենտրոնական բանկի «Բանկերի գործունեության կարգավորումը, բանկային գործունեության տնտեսական նորմատիվները» կանոնակարգ 2-ի համապատասխան կանոնով սահմանված ազատ փոխարկելի արտարժույթի (այդ թվում՝ այդ արժույթներով արտահայտված ավանդների) գրավով
- ե) ոչ ազատ փոխարկելի արտարժույթի (այդ թվում՝ այդ արժույթներով արտահայտված ավանդների) գրավով, եթե այն հանդիսանում է միևնույն արտարժույթով արտահայտված ակտիվի ապահովում
- զ) Հայաստանի Հանրապետության պետական արժեթղթերի գրավով
- ը) թանկարժեք մետաղների ստանդարտացված ձուլակտորների (այդ թվում՝ ոսկով հաշիվների) գրավով: Հսկողության ընթացքում վերը նշված միջոցառումները կնպաստեն եթե ոչ լիարժեք, ապա զոնե համեմատաբար բանկի ակտիվների արդյունավետ օգտագործմանը և դրանց ապահովությանը կորստից: Բանկի ակտիվների կազմում առավել փոփոխական և ռիսկային են վարկերը ու դեբիտորական պարտքերը, որոնց հետ կապված ռիսկի կառավարման և փոխհատուցման գործիքներից է վարկերի ու դեբիտորական պարտքերի դասակարգումը և հնարավոր կորուստների պահուստների ձևավորումը: Այն ապահովում է բանկին հանկարծակի կորուստներից, թույլ տալով գնահատել ակտիվների որակը և բանկի հնարավոր կորուստները հաշվարկել ժամանակի ընթացքում (տվյալ պահին կոնկրետ չափով): Բանկերի համար նման պարտքեր են համարվում վարկերը (այդ թվում՝ օվերդրաֆտ, վարկային քարտեր, բանկերում (բացառությամբ ՀՀ կենտրոնական բանկի) ներդրված ավանդներ (այդ թվում՝ նաև բանկային ոսկով)),

Ֆակտորինգի, ֆինանսական վարձակալության (ֆինանսական լիզինգ), բանկային երաշխիքների և ակրեդիտիվների գծով պահանջները, ակտիվային այլ գործառնությունների (բացառությամբ արժեթղթերում ներդրումների) գծով ստացվելիք գումարները և (կամ) երրորդ անձանց նկատմամբ այլ պահանջները:

5.4. Ակտիվների դասակարգում

Վարկերի ու դեբիտորական պարտքերի դասակարգումը և հնարավոր կորուստների պահուստների ձևավորումը իրականացնելու նպատակով իրականացվում է ակտիվների դասակարգում՝ ակտիվների խմբավորում հետևյալ 5 դասերի՝ ստանդարտ, հսկվող, ոչ ստանդարտ, կասկածելի, անհուսալի:

Վերը նշված դասակարգումը իրականացվում է ակտիվների որակը օբյեկտիվ և սուբյեկտիվ ցուցանիշներով գնահատելու միջոցով: Առավել արդյունավետ է դասակարգման ընթացքում ձեռքի տակ ունենալ հետևյալ աղյուսակը:

Աղյուսակ 1.

Ակտիվի դասը	Օբյեկտիվ չափանիշ	Սուբյեկտիվ չափանիշ
Ստանդարտ	Ակտիվը աշխատող է և գտնվում է սպասարկման ընթացքում, համաձայն պայմանագրի	ա) փոխառուի (պարտապանի) ֆինանսական կացությունը կասկած չի հարուցում բ) առկա է ակտիվը մարելու (սպասարկելու) փոխառուի (պարտապանի) բավարար ունակությունը: Որպես կանոն, ստանդարտ ակտիվներն ունեն բավարար ապահովվածություն ինչպես հիմնական գումարի, այնպես էլ տոկոսային պարտքի գծով: Ստանդարտ ակտիվների գծով ձևավորվում է միայն ընդհանուր պահուստ:
Հսկվող	Ակտիվը աշխատող է մինչև 90 օր	Ամբողջությամբ համապատասխանում է ստանդարտ ակտիվների սահմանմանը

Աղյուսակ 1-ի շարունակություն

Ոչ ստանդարտ	Չաշխատող է 91-180 օր	Պայմանագրային պարտավորությունները չեն կատարվում կապված փոխառուի (պարտապանի) ֆինանսական վիճակից կամ նրա պարտքը մարելու ունակությունից: Ոչ ստանդարտ ակտիվների մեջ ներառվում են ա) ժամկետային ակտիվները, որոնց մարումը ժամկետում հնարավոր չէ փոխառուի (պարտապանի) դրամական միջոցների անբավարար հոսքի պատճառով բ) սեփական կապիտալի և ներգրավված միջոցների միջև հարաբերակցության բանկի կողմից սահմանված ներքին կանոնակարգին համաձայն, անբավարար աստիճան ունեցող փոխառուի (պարտապանի) վարկերը, կանխավճարները և փոխառուի (պարտապանի) նկատմամբ այլ պահանջները գ) այն ակտիվները, որոնք փոխառում (պարտապանը) չի կարող մարել նախնական պայմանավորվածության համաձայն, և որոնք փոխառուի ֆինանսական ոչ բարվոք վիճակի հետևանքով վերանայումների ու դրանց շուրջ տարվող բանակցությունների առարկա են: Այսինքն՝ ակտիվի մարման առաջնային աղբյուրները բավարար չեն, և բանկը պետք է դիմի դրա մարելու երկրորդային աղբյուրներին, որպիսիք են՝ զրավի, զույքի վաճառքը, պայմանների վերանայումը (վերաֆինանսավորումը) կամ կապիտալի նոր աղբյուրների հայթայթումը և այլն: Ոչ ստանդարտ ակտիվներն ունեն ակնհայտ թերություններ, որոնք վտանգում են պարտքի ամբողջությամբ մարումը: Ոչ ստանդարտ ակտիվներին կարող են դասվել նաև այն ակտիվները, որոնց հետ կապված է սովորականից ավելի մեծ ռիսկ՝ կապված փոխառուի ընթացիկ ֆինանսական տեղեկատվության կամ գրավի վերաբերյալ համարժեք փաստաթղթերի բացակայության հետ: Ոչ ստանդարտ ակտիվի համապատասխան դասակարգումը պարզելու համար պետք է հաշվի առնել նաև հետևյալ գործոնները ա) ակտիվի սպասարկման պայմանների շարունակական վերանայումները (վերաձևակերպումները) առանց դրա զգալի մարման բ) փոխառուի (պարտապանի) կողմից ավելի նպաստավոր պայմաններով ակտիվի մարման վերաբերյալ առաջարկով հանդես գալը՝ կապված վերջինիս ֆինանսական վիճակի հետ գ) ոչ համարժեք զրավի առկայությունը:
Կասկածելի ակտիվ	Չաշխատող է 181-270 օր	Կասկածելի ակտիվներն ունեն ոչ ստանդարտ ակտիվների բոլոր հատկանիշները, սակայն առավել խնդրահարույց են, ինչի արդյունքում դրանց հավաքագրումը տվյալ պահին դառնում է չափազանց դժվար կամ անհնար: Կասկածելի ակտիվների դեպքում զգալի կորուստների հավանականությունը բարձր է, բայց կորուստների չափերը պարզ չեն, ինչը հիմնականում պայմանավորված է մի շարք կարևոր և հատուկ գործոններով, որոնք կարող են բարելավել այս ակտիվի վիճակը: Այսպիսով, այս ակտիվի դասակարգումը, որպես անհուսալի, հետաձգվում է մինչև վերջինիս հետ կապված հանգամանքների հստակեցումը:

Աղյուսակ 1-ի շարունակություն

Անհուսալի	Չաշխատող է 271 և ավելի օր	Կորուստներն անհավաքագրելի և ցածրարժեք ակտիվներ են, որոնց հաշվառումը բանկի հաշվեկշռում որպես ակտիվներ այլևս նպատակահարմար չէ: Այս դասակարգումը չի նշանակում, որ ակտիվը հնարավոր չէ վերականգնել ապագայում, բայց դրա հաշվապահական ճանաչումը տվյալ պահին պետք է լինի որպես արժեզրկված ակտիվ:
------------------	---------------------------	--

Չաշխատող են համարվում այն ակտիվները, որոնք եկամուտ չեն ստեղծում և որոնց հիմնական գումարի (կամ դրա մի մասի) մարումը կամ տոկոսների վճարումն ուշացել է սահմանված ժամկետից, կամ վերագրվող ժամանակահատվածի համար տոկոսային վճարները կապիտալացվել են (գումարվել են չմարված փոխառվության (վարկի) գումարին), կամ վճարման պայմանները վերանայվել (վերաֆինանսավորվել), կամ էլ փոխանցվել են նոր փոխառվության (վարկի) գումարին:

Բոլոր չաշխատող ակտիվները գրանցվում են որպես ոչ կուտակային (ֆինանսական հաշվետվության կազմման նպատակահարմարությունից ելնելով՝ դրամարկղային մեթոդով):

Այն ակտիվները, որոնց համար սահմանված չեն մարման նախապես որոշված (նախատեսված) ժամկետներ (պայմաններ) (օվերդրաֆտները և այլ գործիքները), համարվում են չաշխատող ակտիվներ, եթե 90 օրվա ընթացքում մարումներ չեն կատարվել, իսկ հաշվում առկա միջոցները բավարար չեն համապատասխան ժամանակահատվածում կապիտալացված (հաշվեզրկված) տոկոսները մարելու համար:

Տոկոսների դադարեցման համար չաշխատող ակտիվների գումարը հաշվարկելիս հիմք է ընդունվում պարտքի հիմնական գումարի գծով փոխառուի չմարված պարտավորության գումարը, այլ ոչ թե վերջինիս ժամկետանց մասը:

Վարկերի և դեբիտորական պարտքերի դասակարգումը նպատակ է հետապնդում.

ա) շահութահարկի հաշվարկման նպատակով հստակեցնել բանկի համախառն եկամտի նվազեցումները՝ ակտիվների հնարավոր կորուստների պահուստներին ուղղված գումարների չափով

բ) բանկային գործունեությունը կարգավորող տնտեսական նորմատիվների հաշվարկման համար օգտագործվող բանկի ընդհանուր կապիտալի և ակտիվների մեծության վերաբերյալ արժանահավատ տեղեկատվության ստացումը:

Վերը նշվածի նպատակներից ելնելով, բանկերը ձևավորում են ընդհանուր պահուստ՝ ստանդարտ ակտիվների և հատուկ պահուստ՝ խնդրահարույց (ոչ ստանդարտ, կասկածելի, անհուսալի) ակտիվների համար.

Ընդհանուր պահուստը հաշվեկշռում ակտիվին հակակշիռ գրանցված պահուստ է, որը ձևավորվում է ստանդարտ ակտիվների գծով՝ ընդհանուր պահուստին կատարվող հատկացումների (մասհանումների) հաշվին: Վերջիններս ճանաչվում (գրանցվում) են որպես ծախս բանկի «Եկամուտների և ծախսերի մասին» հաշվետվությունում՝ ելնելով ակտիվների գծով ապագա, բայց դեռևս չպարզաբանված (չբացահայտված) կորուստների առաջացման հավանականությունից:

Հատուկ պահուստը հաշվեկշռում ակտիվին հակակշիռ գրանցված պահուստ է, որը ձևավորվում է հսկվող, ոչ ստանդարտ, կասկածելի և անհուսալի դասակարգված ակտիվների գծով՝ հատուկ պահուստին կատարվող հատկացումների (մասհանումների) հաշվին: Վերջիններս ճանաչվում (գրանցվում) են որպես ծախս բանկի «Եկամուտների և ծախսերի մասին» հաշվետվությունում, ելնելով վերոհիշյալ ակտիվների գծով պարզաբանված (բացահայտված) կորուստների առաջացման հավանականությունից:

Ըստ ռիսկի կշռի, բանկի դրամական միջոցները դասակարգվում են հետևյալ կերպ.

Աղյուսակ 2. Բանկի դրամական միջոցների դասակարգումը

<i>Ակտիվներ</i>	<i>Կշիռը ըստ ռիսկի %</i>
Կանխիկ դրամական միջոցներ և ԿԲ խորհրդի համաձայնությամբ կանխիկին հավասարեցված միջոցներ, բացառությամբ ճանապարհին գտնվողների	0
ՀՀ ԿԲ-ում թղթակցային հաշվի մնացորդը, ներդրված ավանդները և դրանց գծով հաշվարկված տոկոսները, բանկի կանոնադրական հիմնադրամի համարման համար բացված կուտակային հաշվի մնացորդները և տոկոսները	0
Արտարժույթով կանխիկ դրամական միջոցները և կանխիկին հավասարեցված միջոցները, որոնք մտնում են EURO և SDR- գամբյուղների մեջ	0
Ոսկու ստանդարտացված ձուլակտորներ	0
Անկանխիկ միջոցներ և հաշվեզրկված տոկոսներ օտարերկրյա բանկերում	0-100
Անկանխիկ միջոցներ ՀՀ բանկերում և դրանց գծով հաշվարկված տոկոսներ	20

Համաձայն գործող կարգի, EURO և SDR - գամբյուղի մեջ մտնող կանխիկին հավասարեցված միջոցներ են համարվում հետևյալ չեկերը. VISA, THOMAS COOK, MASTER CARD, AMERICAN EXPRESS, CITICORP
SDR գամբյուղի մեջ մտնում են արտարժույթային հետևյալ միջոցները.

1. ԱՄՆ դոլարը
2. EURO
3. անգլ. ֆունտ ստեռլինգ
4. ճապոնական իեն:

Եվրահամայնքի միության մեջ մտնում են հետևյալ երկրները.

1. Գերմանիա
2. Ֆրանսիա
3. Մեծ Բրիտանիա
4. Իտալիա

5. Բելգիա
6. Նիդեռլանդներ
7. Լյուքսեմբուրգ
8. Իռլանդիա
9. Դանիա
10. Հունաստան
11. Պորտուգալիա
12. Իսպանիա
13. Ավստրիա
14. Շվեդիա
15. Ֆինլանդիա
16. Հավաստեցված է Շվեյցարիան:

Ինքնաստուգման հարցեր

1. Որո՞նք են բանկի գնահատման հիմնական չափանիշները:
2. Ինչպե՞ս կարելի է դասակարգել բանկի հաշվեկշռային տվյալները՝ բանկի ակտիվներն ուսումնասիրելու նպատակով:
3. Ինչպե՞ս կարելի է դասակարգել ակտիվներն ըստ ռիսկերի կշիռների՝ համաձայն գործող կարգի:
4. Որո՞նք են համարվում բարձր իրացվելի ակտիվներ՝ համաձայն գործող կարգի:
5. Ո՞րն է ակտիվի սահմանումը՝ համաձայն «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքի:
6. Որո՞նք են ակտիվների գնահատման հիմունքները:
7. Որո՞նք են հաշվապահական հաշվառում վարելու և ֆինանսական հաշվետվություններ կազմելու սկզբունքները:
8. Որո՞նք են այն հանգամանքները, որոնք պետք է հաշվի առնել գործարք կնքելիս և գործարքի ընթացքում:
9. Ի՞նչպես կարելի է խմբավորել վարկերը և դեբիտորական պարտքերը հինգ դասերի:
10. Ինչպե՞ս կարելի է իրականացնել ակտիվների որակի դասակարգումը՝ օբյեկտիվ և սուբյեկտիվ չափանիշների միջոցով:
11. Ո՞րն է չափաատող ակտիվների սահմանումը:
12. Որո՞նք են վարկերի և դեբիտորական պարտքերի դասակարգման նպատակները:
13. Որո՞նք են ընդհանուր և հատուկ պահուստները:
14. Որո՞նք են կանխիկին հավասարեցված վճարային գործիքներն՝ ըստ գործող կարգի:
15. Որո՞նք են SDR զամբյուղի մեջ մտնող արտարժութային միջոցները:
16. Որո՞նք են եվրահամայնքի մեջ մտնող երկրները:

ԳԼՈՒԽ 6. ՎԵՐԱՀՍԿՈՂԱԿԱՆ (ՍՏՈՒԳՄԱՆ) ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

Թեմայի նպատակն է՝ բացատրել բանկի ակտիվային և պասիվային հիմնական հոդվածների ստուգման նպատակը, գործառնությունների իրականացման ընթացքում օրինականության պահպանման ստուգումը, ներկայացնել առանձին ստուգումների ընթացքում առավել կարևոր և ուշադրության արժանի պահերը, որոնք թույլ կտան արդյունավետ անցկացնել դրանք:

Ունակությունների և հմտությունների նկարագիրը: Թեմայի ավարտից հետո ուսանողները կկարողանան.

- ներկայացնել բանկի կանխիկ դրամական միջոցների ստուգման կարգը
- ներկայացնել բանկի անկանխիկ դրամական միջոցների ստուգման կարգը
- բնութագրել վարկային պորտֆելի ստուգման նպատակը
- թվարկել այն հարցերը, որոնք ներառվում են վարկային գործառնությունների իրականացման ընթացքում օրինականության պահպանման ստուգման մեջ
- ներկայացնել գրավի իրավունքի վերաբերյալ ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ սահմանված հիմնական կանոնները
- թվարկել և բացատրել բանկի կողմից վարկերի տրամադրման սկզբունքները
- ներկայացնել բանկի կողմից վարկերի տրամադրման և դրանց դասակարգման ներքին կանոնակարգի բովանդակությունը
- բացատրել վարկային պորտֆելի **ռիսկի** դիվերսիֆիկացման աստիճանը
- խմբավորել վարկառուի ֆինանսական վիճակի գնահատման չափանիշները 4 խմբերի, ներկայացնել յուրաքանչյուր խմբի չափանիշները
- թվարկել վարկերի դասակարգման օրինակության ստուգման համար քննարկվող հարցերը և ընթացակարգը
- տալ վարկերի դասակարգումը համաձայն գործող կարգի:

6.1. Բանկի դրամական ակտիվների ստուգումը, դասակարգումը և գնահատումը

Բանկի ակտիվների կազմում համեմատաբար նվազ ռիսկային են բանկի դրամական միջոցները: Այս ակտիվների որակի ստուգման և գնահատման ժամանակ անհրաժեշտ է տարանջատել դրամական միջոցների հետևյալ խմբերը՝

- կանխիկ - անկանխիկ
- դրամով - արտարժույթով
- ըստ տեղաբաշխվածության՝ բանկում, մասնաճյուղերում, գործառնական գրասենյակներում, այլ բանկերում:

Նման տարանջատումը կհեշտացնի հետազայում բանկի դրամական միջոցների առկայությունը, դրանց որակը և ռիսկի կշիռը որոշելը:

Կանխիկ միջոցների ստուգումը

Կանխիկ միջոցների ստուգումը բանկի դրամարկղային կարգապահությանն ու ակտիվների պահպանմանն ուղղված միջոցառում է, որը սովորաբար իրականացվում է հանկարծակի: Այն իրենից ներկայացնում է բանկի դրամարկղային հաշվապահական հաշվառման տվյալների և դրամարկղային հանգույցում փաստացի առկա արժեքների գույքագրման տվյալների համեմատում:

Նախատեսվող գույքագրման հետ կապված աշխատանքների պլանավորման և ելակետային թվերի մասին մոտավոր պատկերացում կազմելու նպատակով մինչև կանխիկ միջոցների գույքագրում սկսելը անհրաժեշտ է ձեռք բերել հաշվապահական սինթետիկ հաշվառման տվյալներ, այսինքն բանկի վերջին հաշվեկշիռը, որտեղ արտացոլված են այդ պահի դրությամբ բանկի միջոցների վերաբերյալ ամենաթարմ ամփոփ տվյալները: Հաշվեկշռային տվյալներից օգտվելով, կարելի է որոշել բանկի դրամական ակտիվների տեղաբաշխումը հետևյալ ձևով.

Աղյուսակ 3. Բանկի դրամական ակտիվներ

Կանխիկ դրամական միջոցներ դրամարկղում	թղթադրամներ, մետաղադրամներ և արտարժույթ, որոնք պահվում են բանկում և մասնաճյուղերում
Կանխիկ դրամական միջոցներ ճանապարհին	ճանապարհին գտնվող թղթադրամներ, մետաղադրամներ և արտարժույթ
Կանխիկ դրամական միջոցներ գործառնական գրասենյակներում	բանկի գործառնական գրասենյակներում գտնվող թղթադրամներ, մետաղադրամներ և արտարժույթ
Կանխիկին հավասարեցված վճարային փաստաթղթեր	չեկերը և այլ վճարային փաստաթղթերը
Կանխիկ դրամական միջոցներ բանկումատներում (ավտոմատ գանձման սարքեր)	բանկումատներում գտնվող կանխիկ դրամական միջոցները

Կանխիկ դրամական միջոցների տեղաբաշխվածությունը ճշտելուց հետո անհրաժեշտ է դրանք խմբավորել ըստ արժույթի տեսակների: Հաշվապահական հաշվառման փաստաթղթերի միջոցով նման տարանջատումներ հնարավոր է իրականացնել, եթե աշխատանքային խումբը ձեռքի տակ ունենա հաշվեկշռային վերը նշված դրամական ակտիվային հաշիվների մնացորդների վերծանումը և արտարժույթային հաշվարկային փոխարժեքները:

Այս տվյալներն ունենալուց հետո գույքագրման գործընթացը հեշտացնելու նպատակով կարելի է նախապատրաստել կանխիկ դրամական միջոցների գույքագրման աղյուսակ.

Աղյուսակ 4. Կանխիկ դրամական միջոցների գույքագրում

h/h	Արժույթի տեսակներ	Փոխարժեքներ	Փաստաթղթային տվյալներով		Փաստացի		Տարբերություն	
			Արժույթ անվանական	Համարժեք դրամ	Արժույթ անվանական	Համարժեք դրամ	Արժույթ անվանական	Համարժեք դրամ
	1	2	3	4	5	6 = (2x3)	7 = (5-3)	8 = (6-4)
1	AMD	*						
2	EUR							
3	USD							
Ընդամենը		*	*		*		*	

Հաշվապահական հաշվառման փաստաթղթերի միջոցով անհրաժեշտ է նաև ուսումնասիրել և տարանջատել ծանուցման կարգի հաշիվներում հաշվառվող բանկի դրամարկղային հանգույցում պահպանվող միջոցները, որն իրականացվում է ծանուցման կարգի հաշիվների մնացորդների վերծանման միջոցով: Այդ հաշիվներում կարող են հաշվառվել հետևյալ միջոցները.

Ստացված գրավ

- Պետական արժեթղթեր
- Այլ արժեթղթեր
- Ոսկու ստանդարտացված ծուլակտորներ
- Թանկարժեք գարդեր, ոսկու ջարդոն և թանկարժեք քարեր
- Անշարժ գույք և այլ հիմնական միջոցներ
- Այլ գրավ

Ստացված երաշխավորություններ

- Վարկային երաշխավորություններ
- Այլ երաշխավորություններ
- Հավատարմագրային պայմանագրի համաձայն կառավարվող ակտիվներ

Ի պահ ընդունված արժեքներ

- Պետական արժեթղթեր
- Այլ արժեթղթեր
- Թանկարժեք մետաղներ
- Այլ արժեքավոր իրեր

Վերը նշված արժեքների վերաբերյալ փաստաթղթային տվյալները հավաքելուց հետո կարելի է սկսել աշխատանքները դրամարկղային հանգույցում:

Գույքագրումը ցանկալի է սկսել այնպիսի պահի, երբ դրամարկղային հանգույցը քիչ ծանրաբեռնված է և հաճախորդների հոսքը կամ չկա կամ շատ սակավ է:

Կանխիկ միջոցների ստուգումը՝ գույքագրումն իրականացվում է զանձապահի և բանկի դրամարկղային արժեքների պատասխանատու անձանց ներկայությամբ: Մինչև արժեքների գույքագրում սկսելը, զանձապահը ստորագրում է հայտարարագիր՝ դրամարկղում առկա միջոցների և այլ արժեքների առկայության մասին, մեկնաբանելով հնարավոր անհամապատասխանությունները: Շատ կարևոր է այն հանգամանքը, որ զանձապահի առավել ևս դրամարկղային հանգույցի որևէ այլ աշխատակցի անձնական միջոցները չպահվեն այդ տարածքում:

Բանկի (նաև մասնաճյուղերի և գործառնական գրասենյակների) կանխիկ դրամական միջոցները պահպանվում են դրամարկղային հանգույցում, որի կազմում սովորաբար մտնում են.

- ընթացիկ գործառնությունների դրամարկղը
- վերահաշվարկի դրամարկղը
- դրամապահոցը:

Դրամարկղային միջոցների գույքագրումը ցանկալի է սկսել ընթացիկ դրամարկղային հանգույցից, որը ստուգողներին հնարավորություն կտա, առանց բանկի ընթացիկ գործունեությանը էական վնաս պատճառելու, առավել արագ և արդյունավետ իրականացնել իրենց առջև դրված խնդիրը:

Ստուգումը անհրաժեշտ է սկսել պահանջելով օրվա ընթացքում բանկի դրամարկղ մուտքագրված և ելքագրված արժեքների վերաբերյալ հաշվապահական փաստաթղթերը՝ դրամական չեկեր, կանխիկի ու արտահաշվեկշռային մուտքի և ելքի անդորրագրեր: Հաշվապահական հաշվառման վերը նշված փաստաթղթերի տվյալներով անհրաժեշտ է հաշվարկել բանկի կանխիկ դրամական միջոցների և դրամարկղային հանգույցում պահվող այլ արժեքների ենթադրվող մնացորդը: Այս աշխատանքները արագ և որակյալ կազմակերպելու համար զանկալի է կազմել աղյուսակ.

Արժեքների անվանումը	Հաշվեկշռային և ետհաշվեկշռային մնացորդներ	Մուտքեր	Ելքեր	Ընթացիկ մնացորդ
1	2	3	4	5 = (2+3-4)

Սովորաբար ընթացիկ դրամարկղային հանգույցում պահվող գումարները առանձնապես խոշոր չեն և ստուգումը կարելի է իրականացնել համատարած, այսինքն հաշվել յուրաքանչյուր թղթադրամ, մետաղադրամ կամ այլ արժեք:

Ընթացիկ դրամարկղային հանգույցում առկա միջոցների գույքագրումից և տվյալների ամփոփումից հետո անհրաժեշտ է գույքագրել վերահաշվարկի դրամարկղը, այստեղ կարող են գտնվել ինկասացվող կամ ինկասացված գումարներ, որոնք կարող են լինել չփաթեթավորված, փաթեթավորված կամ ինկասացիոն պարկերում կնքված: Այս տարածքում գումարները կարող են լինել բավական խոշոր և դրանց ստուգումը կարելի է իրականացնել ընտրանքային՝ այսինքն ելակետային վերցնել կապոցների վրա գրված և հսկիչի կողմից վավերացված գումարի չափը կամ ինկասացիոն պարկերի ռեեստրում գրանցված գումարները:

Վերահաշվարկի դրամարկղի գույքագրումից և տվյալների ամփոփումից հետո անհրաժեշտ է գույքագրել բանկի դրամապահոցը: Այստեղ նույնպես գումարները կարող են լինել բավական խոշոր և դրանց ստուգումը կարելի է իրականացնել ընտրանքային՝ ինչպես նկարագրեցինք վերը:

Դրամարկղային հանգույցում գույքագրման և հաշվապահական հաշվառման տվյալների հասնատման արդյունքում տարբերություն հայտնաբերելու դեպքում կարելի է կրկնել գույքագրումը, ընդ որում իրականացնելով համատարած հաշվելով յուրաքանչյուր թղթադրամ կամ մետաղադրամ:

Դրամարկղային հանգույցում իրականացվող ստուգումները աշխատանքային խմբից պահանջում են լուրջ ուշադրություն և զգոնություն, հաշվի առնելով աշխատանքների ծավալը և այն կրկնելու դեպքում աշխատանքի արդյունավետությունը:

Ստուգողների կողմից վերջնական տվյալների ամփոփումը խիստ ցանկալի է իրականացնել՝ տեղում՝ անմիջապես դրամական հանգույցում: Ստուգման արդյունքները ամփոփվում են «Դրամարկղի գույքագրման ակտի» տեսքով, որում նշվում են.

- գույքագրման մասնակիցների անունները, գույքագրման ամսաթիվը և ժամը
- գույքագրման մեթոդը՝ ընտրանքային կամ համատարած
- դրամական միջոցների մնացորդները հաշվապահական հաշվառման տվյալների համաձայն՝ ըստ արժույթի տեսակների
- փաստացի առկա դրամական միջոցների մնացորդները (անհրաժեշտության դեպքում կարող են նշվել նաև ըստ դրամանիշերի միավորների կամ համարների)
- փաստացի առկա այլ արժեքները՝ քանակական կամ գումարային տեսքով, կախված այն բանից, թե ինչպես է վարվում հաշվառումը
- մեկնաբանություններ դրամարկղային հանգույցում գույքագրման և հաշվապահական հաշվառման տվյալների հասնատման արդյունքների վերաբերյալ
- գույքագրման ընթացքում հայտնաբերված խախտումները կամ թերությունները
- գույքագրման մասնակիցների անունները և նրանց ստորագրությունները:

«Դրամարկղի գույքագրման ակտին» կցվում է դրամարկղում առկա միջոցների և այլ արժեքների առկայության մասին զանազան հայտարարագիրը կամ ակտում արձանագրված խախտումների և թերությունների վերաբերյալ մեկնաբանությունները:

Անկանխիկ միջոցների ստուգումը

Անկանխիկ միջոցների ստուգման նպատակը թղթակցային հարաբերությունների կարգապահությանն ու ակտիվների պահպանմանն ուղղված միջոցառում է, որը սովորաբար իրականացվում է թղթակից բանկերից պարբերաբար տեղաբաշխված դրամական միջոցների վերաբերյալ հաշիվների քաղվածքներ ստանալու կամ ընտրանքային կարգով որևէ օրվա դրությամբ թղթակից բանկի կողմից ուղարկված հաստատման հետ բանկի հաշվեկշռային տվյալների համեմատման միջոցով: Միևնույն ժամանակ անհրաժեշտ է որոշակի ժամանակաշրջանի համար ուսումնասիրել այդ հաշիվներից յուրաքանչյուրի շարժի ինտենսիվությունը և թղթակից բանկի կողմից հանձնարարականների կատարման ժամկետների պահպանումը:

Հաշվեկշռում արտացոլված թղթակցային հաշիվների մնացորդի ճշտության մեջ համոզվելու համար պետք է ուսումնասիրել ինչպես դեբետային, այնպես էլ կրեդիտային մնացորդները (բանկը կարող է որևէ բանկի հետ ունենալ փոխադարձ թղթակցային հարաբերություն):

Վերոհիշյալ խնդիրների իրագործման համար անհրաժեշտ է՝

- ուսումնասիրել թղթակցային հարաբերությունների վերաբերյալ պայմանագրային փաթեթը
 - համեմատել ուղարկվող վճարման հանձնարարականների և դրանց վերաբերյալ ստացվող հավաստագրերի ժամկետները
 - պարբերաբար ստուգել թղթակից բանկի հետ կնքված պայմանագրով նախատեսված վերջինիս կողմից տոկոսների կամ կոմիսիոն զանձումների ճշտությունը:
- Հարկ է հատուկ ուշադրություն դարձնել տարանցիկ հաշիվներին՝
- գումարների անհամապատասխանությանը, որի դեպքում ուսումնասիրվում են սկզբնական բոլոր փաստաթղթերը, իսկ հարկ եղած դեպքում՝ հարցում կատարել թղթակցող բանկին
 - հաշվապահական ձևակերպումներին
 - չփոփոխվող մնացորդին, որը կարող է տարածայնությունների արդյունք լինել
 - կասկածելի դեբետային մնացորդներին:

Համաձայն գործող նորմատիվային ակտերի՝ կանոնակարգ 2-ի, Հայաստանի հանրապետության տարածքում գործող բանկերի ընդհանուր կապիտալի համարժեքության և բանկերի իրացվելիության զնահատման նպատակով դրամական միջոցները անհրաժեշտ է դասակարգել՝ նաև ըստ ռիսկի կշռի և ըստ իրացվելիության:

6.2. Վարկային պորտֆելի ստուգումը և գնահատումը

Վարկային պորտֆելի վերստուգման նպատակն է որոշել բանկի կողմից իրականացվող վարկային քաղաքականության համապատասխանությունը գործող իրավական նորմերին և բանկի ընտրած քաղաքականությանը, ինչպես նաև որոշել վարկային պորտֆելի ռիսկի դիվերսիֆիկացման աստիճանը:

Օրինականության պահպանման ստուգումը

Վարկային գործառնությունների իրականացման ընթացքում օրինականության պահպանման ստուգումը՝ բանկի կողմից իրականացվող վարկային քաղաքականության համապատասխանությունը գործող իրավական նորմերին և բանկի ընտրած քաղաքականությանը, ներառում է հետևյալ հիմնական հարցերը՝

- չկան արդյոք հակասություններ բանկի կողմից վարկերի տրամադրման կարգի և գործող օրենսդրական դաշտի միջև
- վարկերի տրամադրման պահից սկսած մինչև մարումը ընկած ժամանակահատվածում պահպանվում են արդյոք օրենսդրությամբ կամ իրավական այլ ակտերով սահմանված պահանջները
- վարկերի դիմաց գրավների ընդունման և դրանցով վարկային պարտավորությունների մարման ընթացքում պահպանվում են արդյոք օրենսդրությամբ կամ իրավական այլ ակտերով սահմանված պահանջները
- որքանով է բանկի կողմից վարկերի տրամադրման կարգը արդիական և միաժամանակ համահունչ բանկի ռազմավարական ծրագրին:

Վարկային գործարքը: Բանկերի այլ գործարքները

Վարկը գործարք է, որի դեպքում վարկատուն պարտավորվում է պայմանագրով նախատեսված չափերով և պայմաններով դրամական միջոցներ (վարկ) տրամադրել փոխառուին, իսկ փոխառուն պարտավորվում է վերադարձնել ստացված գումարը և տոկոսներ վճարել դրանից:

Վարկային գործարքի ընթացքում ձևավորվող հարաբերությունները կարգավորվում են վարկային պայմանագրով և պետք է բխեն վարկային պայմանագրի էությունից: Վարկային պայմանագիրը կնքվում է գրավոր և օրենսդրության համաձայն գրավոր ձևը չպահպանելը հանգեցնում է վարկային պայմանագրի անվավերության՝ նման պայմանագիրն առչիչ է:

Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերը կարող են տրամադրել առևտրային և սպառողական վարկեր, այդ թվում՝ տալ բանկային փոխառություններ, հիփոթեքային վարկեր, իրականացնել պարտքի կամ առևտրային գործարքների ֆինանսավորում, ֆակտորինգ, տրամադրել բանկային երաշխիքներ և ակրեդիտիվներ (վարկային նամակներ):

Բանկերը կարող են կնքել քաղաքացիաիրավական ցանկացած գործարք, որն անհրաժեշտ կամ նպատակահարմար է իրենց օրենքով թույլատրված գործունեությունն իրականացնելու համար:

Բանկերը չեն կարող իրականացնել արտադրական, առևտրային և ապահովագրական գործունեություն: Բանկերին արգելվում է հաճախորդի հետ վարկային կամ այլ գործարք կնքելիս տվյալ հաճախորդին պարտադրել, որ վերջինս բանկային այլ ծառայությունների վերաբերյալ գործարք կնքի տվյալ բանկի հետ:

Բանկերին արգելվում է այնպիսի գործարքներ կնքել, որոնք ուղղված են կամ հանգեցնում են բանկերի ազատ տնտեսական մրցակցության սահմանափակմանը կամ, որոնց հետևանքով բանկը, նրա հետ փոխկապակցված և համագործակցող անձինք Հայաստանի Հանրապետության բանկային շուկայում ձեռք են բերում գերիշխող դիրք, որը նրանց հնարավորություն է տալիս կանխորոշելու ֆինանսական գործունեության և գործառնությունների կամ դրանցից թեկուզ մեկի շուկայական սակագներն ու պայմանները: Սույն սահմանափակումը չի տարածվում բանկի վրա, եթե տվյալ բանկը հնարավորություն ունի կանխորոշելու վերոհիշյալ գործունեության կամ գործառնությունների որոշակի տեսակի շուկայական սակագները զուտ այն պատճառով, որ տվյալ գործունեությունը կամ գործառնությունը իրականացնում է միայն տվյալ բանկը:

Բանկը պարտավոր է հաճախորդների պահանջով ներկայացնել իրապարակման ենթակա տեղեկությունները, բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի:

Այնպիսի հանգամանքների առկայությամբ, որոնք ակնհայտ վկայում են, որ վարկառուին տրամադրված գումարը ժամկետին չի վերադարձվի, վարկատուն իրավունք ունի լրիվ կամ մասնակի հրաժարվել վարկային պայմանագրով նախատեսված վարկը վարկառուին տրամադրելուց: Վարկառուի կողմից վարկային պայմանագրով նախատեսված վարկի նպատակային օգտագործման պարտականությունը խախտելու դեպքում վարկատուն իրավունք ունի հրաժարվել վարկառուին վարկավորելուց: Վարկառուն իրավունք ունի լրիվ կամ մասնակի հրաժարվել վարկն ստանալուց, այդ մասին մինչև պայմանագրով սահմանված վարկ տրամադրելու ժամկետը ծանուցելով վարկատուին:

Գրավի իրավունքը

Գրավի իրավունքը կամ գրավը գրավատուի գույքի նկատմամբ գրավառուի գույքային իրավունքն է, որը միաժամանակ միջոց է գրավառուի հանդեպ պարտապանի ունեցած դրամական կամ այլ պարտավորության կատարման ապահովման համար:

Այն լրացուցիչ (ակցետոր) պարտավորություն է գրավառուի (պարտատիրոջ) հանդեպ գրավատուի (պարտապանի) հիմնական պարտավորության կատարման ապահովման համար: Գրավով ապահովված պարտավորության պարտատերը (գրավառուն) պարտապանի կողմից այդ պարտավորությունը չկատարելու դեպքում գույքի տիրոջ (գրավատուի) մյուս պարտատերերի հանդեպ գրավ դրված գույքի արժեքից բավարարում ստանալու նախապատվության իրավունք ունի:

Գրավառուն իրավունք ունի բավարարում ստանալ գրավ դրված գույքի կորստի կամ վնասվածքների ապահովագրական հատուցումից, անկախ այն բանից, թե այն ուն օգտին է ապահովագրված, եթե նման կորուստը կամ վնասվածքը չեն ծագել այնպիսի պատճառներից, որոնց համար պատասխանատու է գրավառուն:

Գրավը ծագում է պայմանագրի ուժով: Գրավը ծագում է նաև օրենքի հիման վրա՝ դրանում նշված հանգամանքների երևան գալով:

Գույքի գրավատու կարող է լինել միայն դրա սեփականատերը, ընդ որում գրավատու կարող է լինել ինչպես պարտապանը, այնպես էլ երրորդ անձը:

Գրավառուն այն անձն է, ով օրենքով կամ պայմանագրով սահմանված հիմքերով՝ գրավատուի գույքի նկատմամբ ունի գույքային իրավունք (գրավի իրավունք)՝ ի պահովում իր հանդեպ պարտապանի դրամական կամ այլ պարտավորության կատարման:

Գրավի առարկա կարող է լինել ցանկացած գույք, այդ թվում՝ գույքային իրավունք (պահանջ), բացառությամբ շրջանառությունից հանված գույքի, պարտատիրոջ անձի հետ անխզելիորեն կապված պահանջների՝ ներառյալ ալիմենտի, կյանքին կամ առողջությանը պատճառված վնասի հատուցման պահանջների, և այն իրավունքների, որոնց զիջելն այլ անձի արգելված է օրենքով:

Գրավի առարկա չեն կարող հանդիսանալ.

- Այն գույքի գրավը, որը չի կարող բաժանվել առանց դրա նշանակության փոփոխման (անբաժանելի գույք), չի կարող գրավ դրվել մաս առ մաս:
- Առանց գույքի սեփականատիրոջ համաձայնության՝ վարձակալության իրավունքի գրավը չի թույլատրվում:
- Գույքի առանձին տեսակների գրավը, մասնավորապես՝ քաղաքացիներին պատկանող այն գույքի, որի վրա բռնագանձում տարածել չի թույլատրվում, կարող է արգելվել կամ սահմանափակվել օրենքով:

Ընդհանուր համատեղ սեփականության ներքո գտնվող գույքը կարող է գրավ դրվել միայն բոլոր սեփականատերերի գրավոր համաձայնությամբ: Ընդհանուր բաժնային սեփականության մասնակիցը կարող է ընդհանուր գույքի նկատմամբ իրավունքում իր բաժինը գրավ դնել առանց մյուս սեփականատերերի համաձայնության:

Գրավն ապահովում է գրավառուի պահանջն այն ծավալով, որն այն ունի փաստացի բավարարման պահին, այդ պահանջը մասնավորապես ներառում է տոկոսները, տուժանքը, կատարման ժամկետի կետանցով պատճառված վնասների, ինչպես նաև գրավ դրված գույքը պահելու և պահպանելու համար՝ գրավառուի կատարած և բռնագանձելու հետ կապված ծախսերի հատուցումը:

Գրավի պայմանագիրը պետք է կնքվի գրավոր, որտեղ պարտադիր է նշել կողմերի անունները (անվանումները) և բնակության վայրերը (գտնվելու վայրերը), գրավի առարկան, գրավով ապահովված պարտավորության էությունը, չափն ու կատարման ժամկետը: Օրենքով նախատեսված դեպքերում գրավի պայմանագիրը ենթակա է նոտարական վավերացման, իսկ գրավի իրավունքը՝ պետական գրանցման: Այս պահանջները չպահպանելը հանգեցնում է գրավի պայմանագրի անվավերության՝ նման պայմանագիրն առաջին չ է:

Գրավ դրված գույքը կարող է դառնալ այլ գրավի առարկա՝ հաջորդող գրավ, այն թույլատրվում է, եթե այն արգելված չէ դրան նախորդած գրավի պայմանագրերով: Հաջորդող գրավի դեպքում նոր գրավառուի պահանջները բավարարվում են գրավի առարկայի արժեքից նախորդ գրավառուի պահանջները բավարարելուց հետո: Գրավատուն կամ գրավառուն, կախված այն բանից, թե նրանցից ում մոտ է գտնվում գրավ դրված գույքը, պարտավոր է՝

1. գրավ դրված գույքը լրիվ արժեքով ապահովագրել կորստյան և վնասվածքի ռիսկերից, իսկ եթե դրա լրիվ արժեքը գերազանցում է գրավով ապահովված պահանջի չափը՝ դրանից ոչ պակաս գումարով
2. անհրաժեշտ միջոցներ ձեռնարկել գրավ դրված գույքը պահպանելու՝ ներառյալ այն երրորդ անձանց ոտնձգություններից և պահանջներից պաշտպանելու համար
3. մյուս կողմին անհապաղ տեղեկացնել գրավ դրված գույքի կորստյան կամ վնասվածքի սպառնալիքի ծագման մասին:

Գրավառուն և գրավատուն իրավունք ունեն փաստաթղթերով ու փաստացի ստուգել մյուս կողմի մոտ գտնվող գրավ դրված գույքի առկայությունը, քանակը, վիճակը և պահպանման պայմանները:

Գրավատուն իրավունք ունի

▪ օգտվել գրավի առարկայից դրա նշանակությանը համապատասխան, այդ թվում՝ դրանից ստանալ պտուղներ և եկամուտներ, եթե այլ բան նախատեսված չէ պայմանագրով

▪ օտարել գրավի առարկան, այն հանձնել վարձակալության կամ անհատույց օգտագործման կամ տնօրինել այլ կերպ, միայն գրավառուի համաձայնությամբ, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով:

Գրավ դրված գույքը կտակելու գրավատուի իրավունքը սահմանափակող համաձայնությունն առաջին չ է:

Գրավառուն իրավունք ունի օգտվել իրեն հանձնված գրավի առարկայից միայն պայմանագրով նախատեսված դեպքերում՝ գրավատուի պահանջով հաշվետվություն ներկայացնելով դրա օգտագործման մասին: Գրավառուի վրա պայմանագրով կարող է դրվել գրավի առարկայից պտուղներ և եկամուտներ քաղելու պարտականություն հիմնական պարտավորությունը մարելու նպատակով կամ ի շահ գրավատուի:

Գրավատուն կրում է գրավ դրված գույքի պատահական ոչնչացման, կորստի կամ պատահական վնասվածքի ռիսկը, եթե այլ բան նախատեսված չէ գրավի մասին պայմանագրով:

Եթե գրավառուին հանձնված գրավի առարկան վնասվածքի հետևանքով այնքան է փոխվել, որ չի կարող օգտագործվել իր ուղղակի նշանակությամբ, գրավատուն իրավունք ունի հրաժարվել դրանից և հատուցում պահանջել դրա կորստյան համար: Պայմանագրով կարող է նախատեսվել գրավառուի պարտականությունը՝ գրավատուին հատուցել գրավի առարկայի կորստով կամ վնասվածքով պատճառված այլ վնասներ:

Առանց դատարան դիմելու՝ գրավ դրված գույքի հաշվին գրավառուի պահանջները բավարարել թույլատրվում է գրավառուի և գրավատուի միջև կնքված ու նոտարական կարգով վավերացված համաձայնության հիման վրա: Նման համաձայնությունը դատարանով կարող է անվավեր ճանաչվել այն անձի հայցով, ում իրա-

վունքներն այդ համաձայնությամբ խախտվել են: Նման համաձայնության բացակայության դեպքում գրավ դրված գույքի արժեքից գրավառուի (պարտատիրոջ) պահանջները բավարարվում են դատարանի վճռով:

Գրավ դրված գույքն իրացվում (վաճառվում) է միայն հրապարակային սակարկություններով՝ դրա համար թույլտվություն (լիցենզիա) ունեցող մասնագիտացված կազմակերպությունների կողմից՝ հրապարակային սակարկությունների մասին օրենքով սահմանված կարգով:

Գրավ դրված գույքի իրացումից ստացված գումարից՝ այդ գույքի վրա բռնագանձում տարածելու և իրացնելու համար ծախսերը վճարելու համար անհրաժեշտ գումարներ պահելուց հետո բավարարվում են գրավառուի պահանջները, իսկ մնացած գումարը տրվում է գրավատուին: Եթե գրավ դրված գույքն իրացնելուց ստացված գումարը բավարար չէ գրավառուի պահանջները բավարարելու համար, նա իրավունք ունի պակաս գումարն ստանալ պարտապահի այլ գույքից, եթե այլ բան նախատեսված չէ պայմանագրով:


Գրավի տեսակներն են՝

1. Գրավականը՝ այն գրավը, որի առարկան անցնում է գրավառուի տիրապետմանը:
2. Իրավունքների գրավը՝ օտարման ենթակա իրավունքն է՝ ներառյալ հողամասի, շենքի, շինության, բնակելի տան (բնակարանի) նկատմամբ վարձակալության իրավունքը, տնտեսական ընկերակցության կամ ընկերության գույքում բաժնեմասի իրավունքը, պարտքի պահանջները և այլն, որոնք կարող են գրավի առարկա լինել միայն մինչև դրա գործողության ժամկետի ավարտը:
3. Դրամական միջոցների գրավը՝ գրավի առարկա դրամական միջոցները պահվում են բանկի կամ նոտարի դեպոզիտային հաշվում: Այդ գումարի վրա հաշվեգրվող տոկոսները պատկանում են գրավատուին:
4. Կոշտ գրավը՝ այն գրավն է, որի առարկան թողնվում է գրավատուի մոտ՝ գրավառուի փականքի տակ կամ գրավի մասին վկայող նշաններով:
5. Շրջանառության մեջ գտնվող ապրանքների գրավը՝ գրավատուի մոտ թողնված ապրանքների գրավը՝ գրավատուին իրավունք վերապահելով փոխել գրավ դրված գույքի (ապրանքային պաշարների, հումքի, նյութերի, կիսաֆաբրիկատների, պատրաստի արտադրանքի և այլն) կազմը և բնական ձևը, պայմանով, որ դրանց ընդհանուր արժեքը չնվազի գրավի մասին պայմանագրում նշվածից: Շրջանառության մեջ գտնվող գրավ դրված ապրանքների արժեքի նվազեցումը թույլատրվում է գրավով ապահովված պարտավորության կատարված մասին համաչափ, եթե այլ բան նախատեսված չէ պայմանագրով:
6. Հիփոթեքը այն գրավն է, որն անկախ նրանից այն անշարժ, թե շարժական գույք է, մնում է գրավատուի կամ երրորդ անձի տիրապետման և օգտագործման ներքո: **Հիփոթեքի** պայմանագրով մի կողմը՝ գրավառուն, որը հիփոթեքով ապահովված վարկային պայմանագրով կամ այլ պարտավորությամբ (հիմնական պարտավորությամբ) պարտատերն է, այդ պարտավորությամբ գրավ դրված գույքի արժեքից գրավատուի նյուս պարտատերերի հանդեպ իր դրամական պահանջները բավարարելու նախապատվության իրավունք ունի:

Բանկի կողմից վարկերի տրամադրման սկզբունքները՝

Բանկի կողմից վարկերի տրամադրման սկզբունքներն են՝

ա) Հնարավոր վարկառուի բնութագիրը նշանակում է վերջինիս համբավը, պատանասխատվության աստիճանը, ստանձնվելիք պարտավորությունների կատարման պատրաստակամությունը և ցանկությունը: Բանկը, առաջին հերթին, պետք է պարզի թե՞ ինչպես է հնարավոր վարկառուն անցյալում վերաբերվել իր կողմից ստանձնած պարտականությունների կատարմանը (վարկային պատմություն), եղել են, արդյո՞ք, հետաձգումներ վարկերի մարման ընթացքում: Բանկը պետք է ունենա հնարավոր վարկառուի անհատական և գործնական հատկանիշները բնութագրող տեղեկություններ, օգտվելով վերջինիս անձնական գործերից, այլ բանկերի և ընկերությունների հետ խորհրդակցություններից, այլ մատչելի տեղեկատվությունից:



Նկար 1. Բանկային վարկի հատկանիշները

բ) Վճարունակությունը նշանակում է վերջինիս կողմից վարկը մարելու կարողությունը, ինչը որոշվում է ֆինանսական հաշվետվությունների վերլուծության հիման վրա, նրանց ապագա փոփոխությունների մանրակրկիտ վերլուծության միջոցով: Վերլուծության պետք է ենթարկվեն ընթացիկ դրամական հոսքերը, վարկերի մարման աղբյուրները, ֆինանսավորման այլ աղբյուրները, ինչպես նաև հնարավոր վարկառուի դեբիտորական պարտքերի դինամիկան և ապրանքային պաշարներում փոփոխությունները: Մեծ ուշադրություն պետք է դարձվի հնարավոր վարկառուի կապիտալին (կապիտալ = ակտիվներ հանած պարտավորություններ), նրա կառուցվածքին, ակտիվների և պասիվների այլ հոդվածների հետ հարաբերակցությանը:

գ) Կիրառվող տոկոսադրույքը (վարկի եկամտաբերությունը) նշանակում է տրամադրվող վարկերի տոկոսադրույքը, ինչը սահմանվում է բանկի որոշումներով, հիմնված բանկի համար վարկերի եկամտաբերության, ռիսկայնության և վարկային շուկայի առաջարկի և պահանջարկի վրա:

դ) Վարկի նպատակայնությունը նշանակում է, որ բանկը պետք է իմանա վարկի օգտագործման նպատակը և չպետք է տրամադրի վարկեր օրենսդրությամբ արգելված գործունեություն իրականացնելու համար: Կարևոր է, որ վարկառուն օգտագործի իրեն տրամադրած գումարը վարկային պայմանագրում նշված նպատակների համար:

ե) Տրամադրվող վարկի գումարը. նշանակում է, որ տրամադրվող վարկի գումարը չպետք է գերազանցի ֆինանսավորվող ծրագրի արժեքը և պետք է հիմնված լինի հնարավոր վարկառուի առկա ֆինանսական հնարավորությունների վրա, վարկավորվող ծրագրի շրջանակներում կատարվող գործարքների հիմնավորվածության վրա: Տրամադրվող վարկի գումարը պայմանավորված է նաև ծրագրի շրջանակներում հնարավոր վարկառուի կողմից ներդրվող սեփական գումարի չափից:

զ) Վարկի մարման պայմանները և ժամկետները նշանակում է, որ վարկի մարման պայմանները և ժամկետները պետք է սահմանվեն դրամական հոսքերի վերլուծության հիման վրա: Մարվող գումարների չափերը և վճարման հաճախականությունը պետք է արտացոլված լինեն վարկի մարման ժամանակացույցում, ինչը կազմում է վարկային պայմանագրի անբաժանելի մասը և հաստատվում է նախքան վարկի տրամադրումը:

է) Վարկի ապահովվածությունը նշանակում է, որ վարկերը պետք է ապահովված լինեն արագ իրացվելի գրավներով կամ երաշխիքներով: Առաջարկված գրավի վերլուծությունը և գնահատումը կատարվում է բավարարության, որակի և իրացվելիության հիման վրա, իսկ երաշխիքի՝ այն տվող անձի բնութագրի և ֆինանսական հնարավորությունների վերլուծության հիման վրա:

ը) Ընդհանուր տնտեսական պայմանները նշանակում է, որ վարկերի տրամադրման ընթացքում հաշվի են առնվում հնարավոր վարկառուի տնտեսական կարգավիճակի վրա ազդող ընդհանուր տնտեսական պայմանները և միտումները՝ գործարար մթնոլորտը, տնտեսական իրավիճակը, մրցակցության առկայությունը, հարկային քաղաքականությունը, հունքի և ապրանքների գները:

Վարկերի և դրան առնչվող հաշվարկների և ձևակերպումների օրինականության ստուգում

Բանկի կողմից վարկերի հաշվապահական ձևակերպման և հաշվառման օրինականությունը, ինչպես նաև հաշվետվություններում դրանց վերաբերյալ տվյալները ճիշտ արտացոլելը ստուգելու համար ներքին հսկողության աշխատակիցներին անհրաժեշտ է ձեռքի տակ ունենալ բանկի բոլոր վարկառուների ցուցակը: Այս ստուգումը բավական աշխատատար է և ցանկալի է այն մոդելավորել: Ներկայումս օգտագործվում է վարկային ներդրումների ամփոփագիրը, որն իրենից ներկայացնում է աղյուսակ և տալիս է տվյալ պահին բանկի վարկային ներդրումների վերաբերյալ մանրամասն տվյալներ, որոնք ներառում են վարկառուի բնութագիրը, վարկի տրամադրման պայմանները, ընթացիկ մարումները, վարկի դասակարգումը, գրավի տեսակը և այն բնութագրող պարամետրերը և այլ տեղեկություններ:

Ամփոփագիրն անհրաժեշտ է թարմացնել յուրաքանչյուր տվյալի փոփոխության դեպքում: Ամփոփագրում ընդգրկված յուրաքանչյուր վարկառուի ստանձնած պարտավորությունների մարումից հետո բանկը պետք է առնվազն 5 տարի պահպանի (արխիվացնի) լրացված տվյալները:

Ներքին հսկողության աշխատակիցներին առաջնահերթ անհրաժեշտ է ստուգել վերը նշված ամփոփագրի տվյալները: Այն իրականացնելու համար պետք է վերծանել բանկի հաշվեկշռային և արտահաշվեկշռային և ծանուցման հաշիվներում հաշվառվող մի շարք մնացորդներ, մասնավորապես.

հաշվեկշռային՝

- վարկային հաշիվներ
- պահուստների հաշիվներ
- վարկերից և վարկային քարտերից ստացվելիք տոկոսներ
- ծախսերով դուրս գրված վարկերի վերականգնում:

արտահաշվեկշռային՝

- վարկային գծերի առավելագույն սահմանաչափեր
- վարկային գծերի չօգտագործված մասը
- վարկային քարտերի սահմանաչափեր:

ծանուցման հաշիվներից՝

- ստացված գրավ
- ստացված երաշխավորություններ
- դուրսգրումներ:

Չհիմնվելով բանկի վարկային ներդրումների ամփոփագրի, ինչպես նաև բանկի հաշվեկշռային, արտահաշվեկշռային և ծանուցման հաշիվներում հաշվառվող վարկերի հետ առնչվող հաշիվների մնացորդների տվյալների վրա, ներքին հսկողության աշխատակիցները պետք է պահանջեն յուրաքանչյուր վարկառուի գծով բանկում պահպանվող վարկային փաթեթները, որոնք կարող են ներառել վարկային և գրավի պայմանագրերը, վարկի

վերադարձն ապահովող երաշխիքներ կամ երաշխավորագրեր, գրավների գնահատման ակտեր, վարկառուի ֆինանսական վիճակի մասին հաշվետվություններ, վարկառուի վարկային պատմությունը և ընդհանրապես՝ վարկի և վարկառուի կամ երրորդ անձաց հետ կապված այլ փաստաթղթեր:

Ձեռքի տակ ունենալով վերը նշված փաստաթղթերը և տվյալները ներքին հսկողության աշխատակիցները կարող են անցնել վարկերի տրման, ժամկետանց ձևակերպման, պահուստին կատարված մասնհանումների, վարկի գծով տոկոսների հաշվարկման, վարկի դիմաց ապահովվածության, ինչպես նաև վարկը և տոկոսագումարները հաշվեկշիռից դուրս գրելու ընթացքում հաշվապահական ձևակերպումների օրինակաճանաչման ստուգմանը անալիտիկ հաշվառման փաստաթղթերի միջոցով:

Բանկը պարտավոր է ունենալ վարկերի տրամադրման և դրանց դասակարգման ներքին կանոնակարգեր, որոնք հանդիսանում են ուղեցույց ընթացիկ աշխատանքները և ներքին հսկողությունը կազմակերպելու համար: Կանոնակարգերը պետք է նախատեսեն հնարավոր բոլոր քայլերի մանրամասները, սկսած վարկ ստանալու խնդրանքով բանկին ներկայացված դիմումից մինչև վարկի տրամադրումը, դասակարգումը, մարումը կամ զիջումը, մասնավորապես՝

- վարկերի տրամադրման սկզբունքները
- տրամադրվող վարկերի տեսակները
- վարկ ստանալու նպատակով բանկ ներկայացվող տեղեկատվության մանրամասները
- փաստաթղթաշրջանառությունը
- վարկի տրամադրման կարգը
- վարկի երկարաժամկետ պայմանները
- վարկի օգտագործման և մարման հսկողությունը
- գրավի գնահատման, ընդունման և իրացման պայմանները և այլն:

Բանկի վարկային պորտֆելի ռիսկի դիվերսիֆիկացման աստիճանի գնահատումը

Բանկի վարկային պորտֆելի ռիսկի դիվերսիֆիկացման աստիճանը գնահատելու նպատակով անհրաժեշտ է այն ուսումնասիրել և վերլուծել ըստ հետևյալ տեսանկյունների՝

- ըստ ժամկետների
- ըստ ոլորտների
- ըստ հաճախորդների
- ըստ ապահովվածության
- որոշել մեկ փոխառուի գծով ռիսկը
- որոշել բանկի հետ կապված անձանց գծով ռիսկը
- գնահատել շուկայի փոփոխությունների ազդեցությունը վարկային պորտֆելի վրա:

Ստուգման ընթացքում անյուրաժեշտ է պարզել, թե արդյոք բանկի կողմից վարկերի դասակարգումը համապատասխանում է սահմանված կարգին, մասնավորապես՝

- բոլոր վարկերն են դասակարգված
- ճշտել հատկացված վարկերի դասը՝ համաձայն գործող կարգի
- բացահայտել դասակարգված վարկերի գծով պահուստավորմանն ուղղված միջոցների համապատասխանությունը գործող սահմանաչափերին
- վարկերի, տոկոսագումարների և տույժերի գծով պարտավորությունները հաշվեկշիռից դուրս գրելուց հետո հաշվառվում են արդյո՞ք «Ծանուցում» բաժնում՝ մինչև պահանջի իրավունքի դադարումը
- ուսումնասիրել բանկի կողմից տրամադրված վարկերի կառուցվածքն ըստ տնտեսության առանձին ճյուղերի և յուրաքանչյուր ճյուղում դրանց օգտագործման առանձնահատկությունները:

Բանկի վարկային պորտֆելի դիվերսիֆիկացման աստիճանն ըստ ժամկետների որոշելու նպատակով անհրաժեշտ է հավաքել բանկի կողմից տրամադրված յուրաքանչյուր վարկի վերաբերյալ տվյալները, մասնավորապես՝ երբ, ում, ինչ գումարով, վարկի և տոկոսագումարների ինչ մարման ժամկետով են տրամադրվել վարկերը: Արդյունքում կարելի է հաշվարկել տարբեր ժամկետներում բանկի սպասվելիք գումարները:

Ժամկետային առումով անհրաժեշտ է նաև ուսումնասիրել վարկային պորտֆելի ընդհանուր որակը՝ ժամկետանց, և երկարաժամկետ վարկերի տեսակարար կշիռը ընդհանուր վարկային ներդրումների մեջ, ինչը կօգնի որոշել դրա ազդեցությունը բանկի ֆինանսական վիճակի վրա:

Բանկի վարկային պորտֆելի վերլուծությունն ըստ ոլորտների իրականացնելու նպատակով անհրաժեշտ է հավաքել բանկի կողմից տրամադրված յուրաքանչյուր վարկի վերաբերյալ նույն տվյալները՝ առանձնացնելով վարկառուների գործունեության բնագավառը և վարկի օգտագործման նպատակը: Արդյունքում կարելի է գնահատել բանկի ռիսկի կենտրոնացման աստիճանը՝ սահմանելով բանկի միջոցների վերադարձելիության կախվածությունը տնտեսության այս կամ այն ճյուղից:

Բանկի վարկային պորտֆելի վերլուծությունն ըստ հաճախորդների իրականացնելու նպատակով անհրաժեշտ է հավաքել բանկի կողմից տրամադրված յուրաքանչյուր վարկի վերաբերյալ նույն տվյալները՝ առանձնացնելով վարկառուների իրավակազմակերպչական տեսակները և վարկի օգտագործման նպատակը: Արդյունքում կարելի է գնահատել բանկի կողմից տեղաբաշխած միջոցների նկատմամբ հսկողության աստիճանը, իրավաբանական անձանց արտադրություն կազմակերպելու նպատակով տրված վարկերի ծավալները:

Բանկի վարկային պորտֆելի վերլուծությունն ըստ ապահովվածության իրականացնելու նպատակով անհրաժեշտ է հավաքել բանկի կողմից տրամադրված յուրաքանչյուր վարկի դիմաց գրավադրված արժեքների պայմանագրային տվյալները, մասնավորապես գրավի առարկան, գնահատման արժեքը որքանով է ծածկում

վարկի գումարը և շուկայում դրա իրացվելիության աստիճանը: Արդյունքում կարելի է գնահատել բանկի կողմից տեղաբաշխած միջոցների վերադարձելիության այլընտրանքային հնարավորությունը:

Բանկի վարկային պորտֆելի վերլուծության ընթացքում վերը թվարկված տվյալները հավաքելու դեպքում կարելի է հեշտությամբ որոշել բանկի մեկ փոխառուի գծով ռիսկը: Այն իրենից ներկայացնում է բանկի կողմից մեկ փոխառուին և նրա հետ փոխկապակցված անձանց տրամադրված վարկերի, նրա պարտավորությունների դիմաց երաշխիքների և երաշխավորությունների գումարի և բանկի ընդհանուր կապիտալի հարաբերակցությունը: Այս վերլուծության համար անհրաժեշտ է հայտնաբերել փոխառուների միջև **փոխկապակցվածությունը**:

Բանկի վարկային պորտֆելի վերլուծության ընթացքում բանկի հետ կապված անձանց ռիսկը վերը թվարկված տվյալները հավաքելու դեպքում կարելի է որոշել բանկի հետ կապված անձին տրամադրված վարկերի, այլ փոխառությունների, նրա պարտավորությունների դիմաց տրամադրված երաշխիքների և երաշխավորությունների գումարի և բանկի ընդհանուր կապիտալի հարաբերակցության միջոցով: Այս վերլուծության համար անհրաժեշտ է ճշտել բանկի հետ կապված վարկառուների ցանկը:

Բանկերի հետ կապված անձանց հետ կնքվող այլ գործարքները չեն կարող վերջիններիս համար առավել բարենպաստ պայմաններ նախատեսել, քան այլ անձանց հետ կնքված նույնանման գործարքները: Բանկի հետ կապված անձանց հետ կնքված վերջիններիս համար առավել բարենպաստ պայմաններ նախատեսող գործարքները անվավեր են:

Բանկի վարկային պորտֆելի վրա շուկայական փոփոխությունների հնարավոր ազդեցությունը գնահատելու նպատակով, անհրաժեշտ է ուսումնասիրել բանկի տեղաբաշխած վարկերն ըստ ժամկետայնության, ինչպես նաև ֆինանսական շուկայում վարկային ռեսուրսների տոկոսադրույքների փոփոխությունների հնարավորությունը: Արդյունքում կարելի է գնահատել բանկի հնարավորությունը՝ շուկայում տեղի ունեցող փոփոխություններին համարժեք արձագանքելու առումով:

Վարկառուի ֆինանսական վիճակի գնահատումը

Վարկային պորտֆելի ստուգման ընթացքում չափազանց կարևոր է առավելագույն ճշտությամբ գնահատել վարկառուների ֆինանսական վիճակը: Արդյունքում կարելի է վարկային ներդրումների ճիշտ դասակարգման միջոցով հաշվարկել բանկի հնարավոր կորուստները: Այս խնդիրն իրագործելու նպատակով անհրաժեշտ է ուսումնասիրել յուրաքանչյուր վարկառուի ֆինանսական վիճակը, ընդ որում՝ տևական ժամանակահատվածի համար:

Վարկառուի ֆինանսական վիճակի գնահատման չափանիշներն՝ ըստ կարևորության և նշանակության դասվում են 4 խմբի.

I խմբում այն չափանիշներն են, որոնք վկայում են վարկառուի անիրավունակության (ֆիզիկական անձանց առումով՝ անգործունակության), անվճարունակության, կամ հնարավոր անվճարունակության առաջացման մասին, դրանք են հետևյալ 6 չափանիշները.

ա) անիրավունակ են այսինքն պետական լիազորված մարմինների կողմից ճանաչված չէ իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող կամ չունեցող անձի կողմից իրավունքներ ունենալու կամ պարտավորություններ կրելու ունակությունը (չունի պետական գրանցում) կամ դատարանի կողմից ֆիզիկական անձը ճանաչվել է անգործունակ

բ) դատարանի կողմից ճանաչվել են անվճարունակ կամ սնանկ

գ) մեկ կամ մի քանի պարտատերերի կողմից հարուցվել է հայց՝ վարկառուին անվճարունակ ճանաչելու կամ պարտքի մարման նպատակով վերջինիս գույքի նկատմամբ դատարանի վճռով բռնագանձում տարածելու վերաբերյալ

դ) կորցրել են իրենց կապիտալի զգալի մասը՝ գործունեության ընթացքում կամ պատասխանատվության կիրառման հետևանքով կրած վնասի արդյունքում

ե) պարտավորությունների հանրագումարը զգալիորեն գերազանցում է կապիտալի չափերը

զ) ունեն նշանակալից մասնակցություն այնպիսի անձաց կապիտալում (կամ հանդիսանում են փոխկապակցված անձ վերջիններիս հետ), որոնք դատարանի օրինական ուժի մեջ մտած որոշմամբ ճանաչվել են սնանկ կամ անվճարունակ:

Բացի վերը նշված չափանիշներից, վարկառուի անվճարունակության փաստը կարող են վկայել նաև բանկի կողմից վարկառուի ֆինանսական վիճակի վերաբերյալ որևէ տեղեկության բացակայությունը կամ անբավարար տեղեկությունները:

II խմբում այն չափանիշներն են, որոնցով կարող են գնահատվել վարկառուի ֆինանսական կայունության մակարդակը, դրանք են հետևյալ 6 չափանիշները.

ա) Ֆինանսական անկախության աստիճանը՝ վարկառուի սեփական կապիտալի հարաբերակցությունը հաշվեկշռի հանրագումարին

բ) Ֆինանսական լարվածության մակարդակը՝ բոլոր փոխառու միջոցների հարաբերակցությունը սեփական կապիտալին

գ) Ֆինանսավորման մակարդակը՝ սեփական կապիտալի հարաբերակցությունը բոլոր փոխառու միջոցների հանրագումարին

դ) Պարտքի մակարդակը՝ բոլոր պարտավորությունների հանրագումարի հարաբերակցությունը հաշվեկշռի հանրագումարին

ե) Ֆինանսական կայունության մակարդակը՝ սեփական կապիտալի և երկարաժամկետ փոխառու միջոցների գումարի հարաբերակցությունը սեփական կապիտալին

զ) ֆինանսական մանկրայնության մակարդակը՝ շրջանառու կապիտալի (շրջանառու ակտիվների գումարի և կարծաժամկետ պարտավորությունների տարբերությունը) հարաբերակցությունը սեփական կապիտալին:

III խմբում այն չափանիշներն են, որոնցով կարելի է գնահատել վարկառուի վճարունակության և իրացվելիության մակարդակը, դրանք են հետևյալ 4 չափանիշները.

ա) ընթացիկ իրացվելիության մակարդակը՝ բարձր և արագ իրացվելի ակտիվների գումարի հարաբերակցությունը կրեդիտորական պարտքերի և կարծաժամկետ պարտավորությունների գումարին

բ) հեռանկարային իրացվելիության մակարդակը՝ դանդաղ և դժվար իրացվելի ակտիվների գումարի հարաբերակցությունը երկարաժամկետ պարտքերի և կապիտալի գումարին

գ) կարծաժամկետ պարտքի ծածկման մակարդակը՝ շրջանառու ակտիվների հարաբերակցությունը կարծաժամկետ պարտավորությունների գումարին

դ) վարկառուի դրամական միջոցների շարժը (ներհոսքի և արտահոսքի տարբերությունը):

IV խմբում այլ չափանիշներ են, որոնք վկայում են վարկառուի հուսալիության և վարկունակության մակարդակը, դրանք են հետևյալ 6 չափանիշները.

ա) վարկառուի եկամտաբերության (շահութաբերության) ցուցանիշները՝ ըստ ակտիվների, ըստ կապիտալի, ըստ վաճառքի կամ իրացման ծավալների և ըստ ծախսերի կամ ինքնարժեքի

բ) վարկառուի արտադրատեխնիկական ներուժի, տեխնիկական հագեցվածության մակարդակը և դրա կատարելագործման հեռանկարները

գ) արտադրանքի որակական բնութագիրը, մրցունակությունը ներքին և արտաքին շուկաներում

դ) վարկառուի ղեկավարների կառավարման ունակությունները, իրավասությունները և նախաձեռնությունները, անձնակազմի որակավորման մակարդակը:

Բացի վերը նշված չափանիշներից, բանկը, անհրաժեշտության դեպքում, ելնելով վարկերի հատկացման նպատակայնությունից ու վարկառուի առանձնահատկություններից, կարող է օգտագործել այլ իր կողմից սահմանված չափանիշներ ու ցուցանիշներ: Միաժամանակ բանկը կարող է վարկառուի ֆինանսական վիճակի գնահատման նպատակով կիրառել վերը թվարկված բոլոր ցուցանիշները կամ դրանց մի մասը՝ սահմանելով այդ չափանիշների քանակական բնութագրերը (կշիռները), ինչպես նաև ելնելով հատկացված վարկի չափերից, վարկային պայմանագրի ժամկետներից, վարկի և տոկոսների մարման ժամանակացույցից՝ կատարել վարկառուի ֆինանսական դրության և համապատասխան ցուցանիշների ժամանակային վերլուծություններ (անցած հաշվետու ժամանակահատվածների կրտրվածքով և հեռանկարային):

Վարկերի դասակարգման օրինականության ստուգումը

Բանկի վարկային պորտֆելի որակի մասին լիարժեք պատկերացում կազմելու համար անհրաժեշտ է պարբերաբար ստուգել արդյո՞ք բանկի կողմից վարկերի դասակարգումը համապատասխանում է սահմանված կարգին թե՞ ոչ: Այդ նպատակով անհրաժեշտ է պարզել հետևյալ հիմնական հարցերը՝

1. ճշտել հատկացված վարկերի դասը
2. ճշտել դասակարգված վարկերի ռիսկի գործակիցները
3. բացահայտել դասակարգված վարկերի գծով պահուստին ուղղված միջոցների համապատասխանությունը գործող սահմանաչափերին
4. ստուգել բանկի կողմից իրականացվող վերանայումների հաճախականությունը և կարգը
5. վարկերի, տոկոսագումարների և տույժերի գծով պարտավորությունները հաշվեկշիռի դուրս գրելուց հետո հաշվառվում են արդյոք «Ծանուցում» բաժնում մինչև պահանջի իրավունքի դադարումը:

Բանկի կողմից վարկերի դասակարգման օրինականությունը ստուգելու համար ներքին հսկողության աշխատակիցներին անհրաժեշտ է ուղղորդվել վարկային պորտֆելի ստուգման արդյունքում յուրաքանչյուր վարկառուի հետ կապված հաշվապահական, իրավաբանական և վերլուծական ողջ տեղեկատվությունից, քանի որ վարկերի դասակարգումը ամփոփում է բանկի գործունեության այս բնագավառի գնահատականը՝ մատնանշելով առկա ռիսկերը և հավանական կորուստերը:

Բանկն առնվազն 30 օրը մեկ անգամ (գերադասելի է՝ հաշվետու ամսվա վերջին բանկային օրը) պետք է դասակարգի իր վարկերը՝ բանկի կողմից սահմանված ներքին կանոնակարգին համապատասխան:

Յուրաքանչյուր վարկ պետք է դասակարգվի որպես ստանդարտ, հսկվող, ոչ ստանդարտ, կասկածելի կամ անհուսալի, ելնելով օբյեկտիվ և սուբյեկտիվ չափանիշներից:

Բանկերի համար նաև պետք է հիմք հանդիսանա այն տեղեկատվությունը, որը նրանք ստանում են **ԿԲ վարկային ռեզիստրից**: Այն իր մեջ պարունակում է տեղեկատվություն բանկի վարկառուների ողջ պարտավորությունների մասին: Դրա համար բանկերը յուրաքանչյուր վարկի տրամադրման կամ վերջինիս հետ կապված որևէ փոփոխության դեպքում ԿԲ է ուղարկում համապատասխան տեղեկատվություն:

Օբյեկտիվ և սուբյեկտիվ չափանիշներով ակտիվների դասակարգման ընթացքում տարբերությունների առկայության դեպքում բանկի համար առաջնային է առավել խիստ չափանիշը:

Օբյեկտիվ չափանիշները հիմնված են ժամկետանց օրերի և ապահովվածության աստիճանի վրա:

Սուբյեկտիվ չափանիշները հիմնված են բանկի դատողությունների և մասնագիտական կարծիքի վրա, որոնք պետք է համարժեք լինեն սահմանված ստանդարտ, հսկվող, ոչ ստանդարտ, կասկածելի և անհուսալի ակտիվների սահմանումների հետ:

Ներքին հսկողության աշխատակիցներին անհրաժեշտ է՝ տարանջատել աշխատող և չափատող վարկերը

Չափատող են այն վարկերը, որոնք եկամուտ չեն ստեղծում և որոնց

ա) հիմնական գումարի (կամ դրա մի մասի) մարումը կամ տոկոսների վճարումն ուշացել է սահմանված ժամկետից կամ

բ) տոկոսային վճարները կապիտալացվել են (գումարվել են չմարված վարկի գումարին), կամ վճարման պայմանները վերանայվել (վերաֆինանսավորվել), կամ էլ փոխանցվել են նոր վարկի գումարին:

Տոկոսների դադարեցման համար չաշխատող վարկի գումարը հաշվարկելիս հիմք է ընդունվում պարտքի հիմնական գումարի գծով վարկառուի չմարված պարտավորության գումարը, այլ ոչ թե վերջինիս ժամկետանց մասը:

Ստանդարտ վարկերի պորտֆելը իրենից ներկայացնում է համախառն և դասակարգված ակտիվների տարբերությունը: Ստանդարտ են դասակարգվում այն վարկերը, որոնք սպասարկվում են պայմանագրի համաձայն և խնդրահարույց չեն: Որպես կանոն, ստանդարտ վարկերին բնորոշ է հետևյալը.

ա) վարկառուի ֆինանսական կացությունը կասկած չի հարուցում

բ) առկա է վարկը մարելու վարկառուի բավարար ունակությունը:

Որպես կանոն, ստանդարտ վարկերն ունեն բավարար ապահովվածություն ինչպես հիմնական գումարի, այնպես էլ տոկոսային պարտքի գծով: Ստանդարտ վարկերի գծով ձևավորվում է միայն ընդհանուր պահուստ՝ ստանդարտ վարկի գումարի 1 - 2%-ի չափով:

Չսկզկող վարկեր են այն վարկերը, որոնք ամբողջությամբ համապատասխանում են ստանդարտ վարկերի սահմանմանը, սակայն նրանց հիմնական գումարի, կամ, տոկոսների մարումը ուշացել է մինչև 90 օր:

Ոչ ստանդարտ են այն վարկերը, որոնց գծով պայմանագրային պարտավորությունները չեն կատարվում՝ կապված վարկառուի ֆինանսական վիճակից կամ նրա պարտքը մարելու ունակությունից: Ոչ ստանդարտ վարկերի մեջ ներառվում են՝

ա) ժամկետային վարկերը, որոնց մարումը ժամկետին հնարավոր չէ վարկառուի դրամական միջոցների անբավարար հոսքի պատճառով

բ) սեփական կապիտալի և ներգրավված միջոցների միջև հարաբերակցության՝ անբավարար աստիճան ունեցող վարկառուի վարկերը

գ) այն վարկերը, որոնք վարկառուն չի կարող մարել նախնական պայմանավորվածության համաձայն, և որոնք վարկառուի ֆինանսական ոչ բարվոք վիճակի հետևանքով վերանայումների ու դրանց շուրջ տարվող բանակցությունների առարկա են: Այսինքն՝ վարկի մարման առաջնային աղբյուրները բավարար չեն, և բանկը պետք է դիմի մարման երկրորդային աղբյուրներին, որպիսիք են՝ գրավի, գույքի վաճառքը, պայմանների վերանայումը (վերաֆինանսավորումը) կամ կապիտալի նոր աղբյուրների հայթայթումը և այլն: Ոչ ստանդարտ վարկերը ունեն ակնհայտ թերություններ, որոնք վտանգում են պարտքի ամբողջությամբ մարելը:

Ոչ ստանդարտ կարող են դիտվել նաև այն վարկերը, որոնց հետ կապված է սովորականից ավելի մեծ ռիսկ՝ կապված վարկառուի ընթացիկ ֆինանսական տեղեկատվության կամ գրավի վերաբերյալ համարժեք փաստաթղթերի բացակայության հետ:

Ոչ ստանդարտ վարկի համապատասխան դասակարգումը պարզելու համար պետք է հաշվի առնել նաև հետևյալ գործոնները՝

ա) վարկի սպասարկման պայմանների շարունակական վերանայումները (վերաձևակերպումները) առանց դրա զգալի մարման

բ) վարկառուի կողմից ավելի նպաստավոր պայմաններով վարկի մարման վերաբերյալ առաջարկով հանդես գալը՝ կապված վերջինիս ֆինանսական վիճակի հետ

գ) ոչ համարժեք գրավի առկայությունը:

Ոչ ստանդարտ վարկերի գծով ձևավորվում է հատուկ պահուստ՝ ոչ ստանդարտ վարկի գումարի 20% - 25%-ի չափով:

Կասկածելի վարկերն ունեն ոչ ստանդարտ վարկերի բոլոր հատկանիշները, սակայն առավել խնդրահարույց են, ինչի արդյունքում դրանց հավաքագրումը տվյալ պահին դառնում է չափազանց ռիսկոս կամ անհնար: Կասկածելի վարկերի դեպքում զգալի կորուստների հավանականությունը բարձր է, բայց կորուստների չափերը պարզ չեն, ինչը հիմնականում պայմանավորված է մի շարք կարևոր և հատուկ գործոններով, որոնք կարող են բարելավել այս ակտիվի վիճակը: Այսպիսով, այս վարկի դասակարգումը՝ որպես անհուսալի՝ հետաձգվում է մինչև վերջինիս հետ կապված հանգամանքների հստակեցումը:

Կասկածելի վարկերի գծով ձևավորվում է հատուկ պահուստ՝ կասկածելի վարկի գումարի

50% - 70%-ի չափով:

Անհուսալի վարկեր՝ անհավաքագրելի և ցածրարժեք վարկերն են, որոնց հաշվառումը բանկի հաշվեկշռում որպես ակտիվներ այլևս նպատակահարմար չէ: Այս դասակարգումը չի նշանակում, որ վարկը հնարավոր չէ վերականգնել ապագայում, բայց դրա հաշվապահական ճանաչումը տվյալ պահին պետք է լինի որպես արժեզրկված ակտիվ:

Եթե վարկը ճանաչվում է անհուսալի, ապա ձևավորվում է հատուկ պահուստ՝ անհուսալի վարկի 100%-ի չափով և նույն օրվա ընթացքում դուրս գրվում բանկի հաշվեկշռից՝ «հատուկ պահուստի» հաշվին, շարունակելով հաշվառել այն հաշվեկշռի ծանուցման համապատասխան հաշիվներում:

Երբեք հսկողության աշխատակիցներին անհրաժեշտ է ստուգել, թե վարկերի գծով տոկոսների հաշվեգրումը և դադարեցումը համապատասխանում է արդյոք գործող կարգին, մասնավորապես՝

▪ Չաշխատող վարկերը, այդպիսին դասակարգվելուց սկսած, պետք է հաշվառվեն հաշվեգրման մեթոդով, ինչը նշանակում է, որ այն տոկոսը, որը կուտակվել է, բայց չի հավաքագրվել, այլևս չի կարող գրանցվել որպես տոկոսային եկամուտ: Այդ վարկի գծով հաշվեգրված տոկոսները պետք է գրանցվեն «չճանաչված տոկոսային»

եկամտի հաշվին: Տոկոսի հաշվեգրումը շարունակվում է, սակայն այն այսուհետ չի գրանցվում որպես տոկոսային եկամուտ մինչև դրա վճարումը:

▪ Այն տոկոսները, որոնք արդեն հաշվեգրվել են, սակայն չեն հավաքագրվել միևնույն (հաշվետու) ժամանակաշրջանի ընթացքում, պետք է «տոկոսային եկամուտներ հաշվից փոխանցվեն «չճանաչված տոկոսային եկամուտ հաշվին»:

▪ Այն տոկոսները, որոնք հաշվեգրվել են նախորդ ժամանակաշրջանի ընթացքում, սակայն չեն հավաքագրվել, ճանաչվում են որպես ծախս՝ գրանցվելով «չճանաչված տոկոսային եկամուտ հաշվին»:

▪ Չաշխատող վարկի նկատմամբ հաշվեգրման սկզբունքը վերականգնվում է, որպես կանոն, միայն ժամկետանց հիմնական գումարի և տոկոսների, ինչպես նաև տուժանքները ամբողջովին մարելու դեպքում:

▪ Հաշվեգրված, բայց դեռևս չգանձված տոկոսները, որոնք գրանցվում են «չճանաչված տոկոսային եկամուտ» հաշվում, ենթակա են հաշվեկշռից դուրսգրման՝ համապատասխան վարկի անհուսալի ճանաչելու պահին: Հաշվեկշռից դուրս գրելուց հետո բանկը հաշվառում է դրանք ծանուցման հաշիվներում և կարող է շարունակել տոկոսների հաշվեգրումը:

▪ Ծանուցման հաշիվներում հաշվառվող վարկերի դիմաց վճարում (փոխհատուցում) ստանալիս.

▪ հաշվեկշռում վերականգնվում է դուրս գրված վարկը կամ դրա մի մասը՝ թղթակցելով «հատուկ պահուստ» հաշվի հետ

▪ վերականգնված վարկը մարվում է, թղթակցելով դրամական միջոցների կամ համապատասխան այլ ակտիվի հաշվի հետ

▪ վարկի հերթական դասակարգումը և պահուստների ճշգրտումներն իրականացնելիս, բանկն ընդհանուր և հատուկ պահուստներում առկա ավելցուկային մնացորդներն ուղղում է եկամուտների հաշվին:

Ծանուցման հաշիվներում հաշվառվող տոկոսների դիմաց վճարում (փոխհատուցում) ստանալիս.

▪ հաշվեկշռում վերականգնվում է դուրս գրված տոկոսը կամ դրա մի մասը՝ թղթակցելով «տոկոսային եկամուտ» հաշվի հետ

▪ վերականգնված տոկոսը մարվում է՝ թղթակցելով դրամական միջոցների կամ համապատասխան այլ ակտիվի հաշվի հետ:

Ծանուցման հաշիվներում հաշվառվող վարկերը և տոկոսները (կամ դրանց մի մասը) դուրս են գրվում ծանուցման հաշիվներից.

▪ բանկի կողմից վարկի և տոկոսների (կամ դրանց մի մասի) զիջելու (կամ ներելու) պարագայում

▪ վարկի և տոկոսների (կամ դրանց մի մասի) նկատմամբ պահանջի իրավունքի՝ օրենսդրությամբ սահմանված վաղեմության ժամկետը լրանալու դեպքում:

Եթե ծանուցման հաշիվներում հաշվառվող վարկերը և տոկոսները (կամ դրանց մի մասը) բանկի կողմից զիջվել են (կամ ներվել) մինչև դրանց անհուսալի ճանաչվելը՝ կամ հաշվեկշռից դուրս գրվելը, դրանք չեն հանդիսանում շահութահարկի հաշվարկման նպատակով համախառն եկամտի նվազեցումներ: Տվյալ դեպքում բանկը պարտավոր է 7-օրյա ժամկետում այդ մասին հայտնել հարկային տեսչության տարածքային ստորաբաժանմանը:

6.3. Բանկի սեփական կապիտալի աուդիտ

Բանկի սեփական կապիտալի ստուգման հիմնական նպատակներն են՝

▪ ՀՀ ԿԲ և օրենսդրական ակտերի պահանջներին կապիտալի ձևավորման և փոփոխությունների համապատասխանության ստուգում

▪ գլխավոր պահուստի ձևավորման և օգտագործման կարգի ստուգում

▪ բանկի հիմնական և լրացուցիչ կապիտալների բաղկացուցիչ մասերի և նորմատիվների հաշվարկի ճշտության ստուգում:

Բանկի սեփական կապիտալի ձևավորման ստուգման առանձնահատկությունը կայանում է նրանում, որ այն կանոնակարգվում է ոչ միայն բանկային օրենսդրությամբ, այլ նաև արժեթղթերին վերաբերող օրենքներով և այլ ակտերով:

Բանկի կանոնադրական կապիտալի ձևավորման ճշտության ստուգման համար անհրաժեշտ է ուսումնասիրել հետևյալ փաստաթղթերը.

▪ Բանկի հիմնադիր փաստաթղթերը և կանոնադրությունը: Վերջիններս պետք է պատշաճ ձևով հաստատված լինեն բանկի իրավասու մարմնի և ԿԲ-ի կողմից: Ստուգման համար անհրաժեշտ է ուսումնասիրել միայն փաստաթղթերի առաջին օրինակները:

▪ Բանկային գործունեության իրականացման լիցենզիան:

▪ Բանկի ընդհանուր ժողովների անցկացման արձանագրությունները:

▪ Արժեթղթերի թողարկման ազդագիրը, բանկի բաժնետոմսերի սեփականատերերի ցուցակը:

▪ արժեթղթերի առքուվաճառքի պայմանագրերը:

Կանոնադրական կապիտալի ձևավորման ճշտությունը կարելի է ստուգել՝ ուսումնասիրելով.

▪ կապիտալի համալրման համար կազմված համապատասխան վճարային փաստաթղթերը և նրանց համապատասխան արտացոլումը հաշվապահական հաշվեկշռում

▪ բաժնետերերի կանոնադրությունները, հաշվեկշռները, [աուդիտորական եզրակացությունները](#) և այլ տեղեկություններ, համոզվելու, որ տվյալ գումարները գոյացել են բաժնետիրոջ սեփական միջոցներից:

Կարևոր է բանկի կանոնադրության մանրակրկիտ ուսումնասիրությունը, կապված նրանում նշված արժեթղթերի տեսակների, քանակի, թողարկման պայմանների, հայտարարված և համալրված կապիտալների և թույլատրելի ժամկետների, ինչպես նաև գլխավոր պահուստի և դրա ձևավորման կարգի հետ:

Քանի որ բանկի շահույթը համարվում է հիմնական կապիտալի բաղկացուցիչ մասերից մեկը, կարևոր է եկամուտների և ծախսերի պարբերական ուսումնասիրությունը ներքին վերահսկողների կողմից:

Ստուգման հիմնական նպատակը կայանում է բանկի գործունեության արդյունքում ֆինանսական արդյունքների հաստատումը, որը ենթադրում է բանկի հաշվապահական առումով եկամուտների և ծախսերի ժամանակին և ամբողջական արտացոլման ստուգում: Ֆինանսական արդյունքների ճշտության կարելի է հանգել, ստուգելով հետևյալ հոդվածները.

- հաշվառման մեջ տոկոսային և ոչ տոկոսային եկամուտների ու ծախսերի ժամանակին և ճիշտ հաշվեգրումն ու արտացոլումը
- եկամտային և ծախսային հոդվածների ճիշտ արտացոլումը համապատասխան հաշվապահական հաշիվներում
- նախորդ և ընթացիկ ժամանակաշրջանների շահույթների ձևավորման և հաշվառման ճշտության ստուգում:

6.4. Ավանդային գործառնությունների ստուգում

Ավանդային գործառնությունների ստուգման համար անհրաժեշտ է պահանջել հետևյալ փաստաթղթերը.

- բանկում գործող ավանդների ներգրավման և հաշիվների բացման կարգերը
- ստուգվող ամսաթվի դրությամբ հաշվապահական ծրագրից արտահանված ավանդային պայմանագրերի տեղեկությունները
- բանկի հաշվապահական հաշվեկշիռը ստուգվող ամսաթվի դրությամբ
- հաճախորդների հետ կնքված ավանդային պայմանագրերի և հաշիվների բացման փաթեթը
- այն փաստաթղթերը, որոնք վերաբերում են հաճախորդների ավանդների դիմաց տոկոսագումարների հաշվեգրմանը
- ավանդների և տոկոսագումարների ելքագրման և մուտքագրման դրամարկային օրդերները:

Ավանդային գործառնությունների ստուգման հիմնական ելքային կայանում է նրանում, որ

- ավանդային պայմանագրերը պետք է լրացված լինեն ճիշտ և ամբողջական
- ավանդային գործարքները և պայմանագրի կետերը չպետք է հակասեն օրենսդրության՝ այդ թվում Քաղաքացիական օրենսգրքի և ներբանկային կարգերի պահանջներին
- ավանդների դիմաց հաշվարկվող տոկոսները համապատասխան են բանկի սահմանած դրույքաչափերին, ինչպես նաև նրանց հաշվարկը ճիշտ իրականացվի
- սինթետիկ և անալիտիկ հաշիվների ընդհանուր մնացորդները պետք է համապատասխանեն
- տոկոսների հաշվեգրման ժամանակ պետք է ուշադրություն դարձնել, թե արդյոք ժամանակին է կատարվում տոկոսների հաշվեգրումը, տոկոսների վճարման ձևը համապատասխանում է արդյոք պայմանագրով նախատեսվածին, կամ հաշվեգրված տոկոսագումարների վճարման ժամանակ գանձվում է արդյոք օրենքով սահմանված եկամտահարկը
- անհրաժեշտ է ճշտել, թե արդյոք ճիշտ են կատարվում ԿԲ-ում ձևավորված ավանդների ապահովագրման պահուստաֆոնդին կատարվող մասհանումները, թե գումարների չափի և թե ժամկետայնության առումով: Հիշեցնենք, որ 01.07.03 թ. գործում է առևտրային բանկերի կողմից ֆիզիկական անձանց՝ այդ թվում անհատ ձեռնարկատերերի բանկային ավանդների և հաշիվների երաշխավորման համար պարտադիր մասհանումների կատարման կարգը: Ֆիզիկական անձանց բանկային ավանդների և հաշիվների պարտադիր երաշխավորման չափը, երաշխիքային վճարների չափը, ավանդների երաշխավորման հիմնադրամի միջոցների կառավարման, երաշխավորված գումարի հատուցման կարգը, պայմանները և ժամկետները կարգավորվում են ԿԲ թիվ 20 կանոնակարգով:

6.5. Բանկի արժեթղթերի պրոսֆեկտի և արտարժույթային գործառնությունների ստուգում

Արժեթղթերում կատարված ներդրումները, որպես կանոն, հանդիսանում են բանկի գործունեության առավել ակտիվ ուղղություններից մեկը: Հետևաբար, արժեթղթերում կատարված ներդրումներին առնչվող փաստաթղթերի և ձևակերպումների ստուգումը պետք է հանդիսանա աուդիտորական աշխատանքների առաջնահերթ ուղղություններից մեկը:

Բանկի արժեթղթերում կատարված ներդրումների և նրանց հետ կապված գործառնությունների ստուգումն իր մեջ ներառում է հետևյալ քայլերը.

- արժեթղթերի շուկայում որպես դիլեր կամ գործակալ հանդես գալու համար անհրաժեշտ համապատասխան լիզենզիայի առկայության ստուգում
- արժեթղթերում կատարված ներդրումների փաստաթղթային հիմքերի և հաշվապահական հաշվառման համապատասխանության ստուգում
- հաշվապահական չափանիշներին արժեթղթերի ձեռքբերման գնի, հավելավճարի և (կամ) զեղչատոկոսի հաշվառման համապատասխանության ստուգում
- բանկի հաշվապահական հաշվառման տվյալների համեմատում ԿԲ դեպո հաշիվների քաղվածքների հետ
- հաճախորդների համար գնված արժեթղթերի փաստաթղթերի, կոմիսիոն վճարների գանձման, դեպո հաշիվներում դրանց հաշվառման ստուգում
- ռեպո գործարքների գծով պայմանագրերի, արժեթղթերի, տոկոսագումարների հաշվառման ճշտության ստուգում
- պետական այլ արժեթղթերում և կորպորատիվ արժեթղթերում կատարված ներդրումների փաստաթղթային և հաշվապահական ձևակերպումների համապատասխանության ստուգում

▪ ինվեստիցիոն արժեթղթերի գծով պահուստաֆոնդի ստեղծման ճշտության ստուգում՝ համաձայն «Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերի ինվեստիցիոն արժեթղթերում ներդրումների հնարավոր կորուստների պահուստի ձևավորման և օգտագործման» կարգի:

Արտարժույթային գործառնությունների ստուգումն իր մեջ ներառում է

- բանկի համապատասխան ստորաբաժանման կողմից արտարժույթների փոխանակման կուրսերի սահմանման և գործառնական ստորաբաժանումների կողմից նրանց կիրառման ստուգում
- հաճախորդների՝ այդ թվում բանկերի հետ արտարժույթի արքուվաճառքի պայմանագրերի, նրանց փոխանակման կուրսերի, ժամկետների, գործարքների կատարման արդյունքում եկամուտների կամ ծախսերի ձևակերպման ճշտության ստուգում
- կոնկրետ ժամանակահատվածի ընթացքում բանկի արժույթային գործառնություններից ձևավորված եկամտային և ծախսային հոդվածների ուսումնասիրություն:

6.6. Բանկի հիմնական միջոցների ստուգում

Հիմնական միջոցների ստուգման ժամանակ անհրաժեշտ է իրականացնել հետևյալ քայլերը.

- ստուգել գույքի՝ որպես հիմնական միջոց, հաշվառելու հիմքերը, և ըստ տնտեսական նշանակության հաշվառումը համապատասխան հաշվապահական հաշվում
- հիմնական միջոցի ձեռքբերման փաստաթղթերի ստուգում ինչպես իրավական, այնպես էլ հաշվապահական տեսանկյունից և նրանց համեմատում ծրագրային տվյալների հետ
- հիմնական միջոցի հաշվառման արժեքի ճշտության ստուգում
- հիմնական միջոցների պահպանության կարգի և գույքագրման համարների առկայության ստուգում
- մաշվածքի կատարման ստուգում ժամանակին և ճիշտ կատարելու առումով
- հիմնական միջոցների վերագնահատման կատարման ճշտության ստուգում
- հիմնական միջոցների շարժի, այդ թվում՝ գնման, վաճառքի, վերագնահատման ձևակերպումների ստուգում

Կարևոր է ուշադրություն դարձնել հիմնական միջոցների ամսական մաշվածքի հաշվառմանը, համաձայն գործող օրենսդրական պահանջների: Հիմնական միջոցի մաշվածքի գումարը չի կարող գերազանցել նրա հաշվապահական արժեքը՝ հաշվի առած նրա վերագնահատման արժեքը:

Կարևոր է նաև ստուգել հիմնական միջոցների գույքագրման կատարման ընթացքը և նրա համապատասխանությունը ընդունված ակտերին:

6.7. Բանկի հաշվետվությունների կազմման և տնտեսական նորմատիվների հաշվարկման ստուգում

Ներքին աուդիտի ստորաբաժանման կողմից պարբերաբար պետք է ստուգվեն բանկի կողմից ԿԲ ներկայացվող հաշվետվությունները: Վերջիններս պետք է կազմվեն ժամանակին և ճիշտ՝ համաձայն ՀՀ ԿԲ «Բանկերի հաշվետվությունները, դրանց ներկայացումը և հրապարակումը» կանոնակարգ 3-ի: Վերջիններիս ժամանակին և ճիշտ կազմումը անհրաժեշտ է ոչ միայն ԿԲ պահանջները կատարելու, կամ պատժամիջոցներից խուսափելու, այլ նաև բանկի գործունեության մասին արժանահավատ տեղեկատվություն ունենալու համար: Դրա համար անհրաժեշտ է.

- պարբերաբար ստուգել բանկի հաշվետվությունները, այդ թվում բանկի գործունեության հիմնական տնտեսական նորմատիվները
- ուսումնասիրել հաշվետվությունների տվյալների գրանցումների համապատասխանությունը հաշվապահական հաշվառման ստանդարտների և ԿԲ նորմատիվ ակտերի պահանջներին
- պարբերաբար ուսումնասիրել հաշվետվությունների հիմնական տվյալների դիմամիկան
- ստուգման ընթացքում պահանջել տեղեկություններ և փաստաթղթեր համապատասխան ստորաբաժանումներից, համեմատելով նրանք հաշվետվությունների տվյալների հետ
- ուսումնասիրել բանկի հիմնական տնտեսական նորմատիվների տարրերի հաշվարկը և նրա համապատասխանությունը ՀՀ ԿԲ «Բանկերի գործունեության կարգավորումը, բանկային գործունեության տնտեսական նորմատիվները» կանոնակարգ 2-ին:

Ինքնաստուգման հարցեր

1. Որո՞նք են բանկի կանխիկ և անկանխիկ դրամական միջոցների ստուգման նպատակները և իրականացման քայլերը:
2. Ո՞րն է վարկային պորտֆելի ստուգման նպատակը:
3. Որո՞նք են այն հարցերը, որոնք ներառվում են վարկային գործառնությունների իրականացման ընթացքում օրինականության պահպանման ստուգման մեջ:
4. Որո՞նք են բանկերի կողմից գործարքների (այդ թվում վարկային) կնքելու վերաբերյալ օրենսդրական դրույթները:
5. Որո՞նք են գրավի պայմանագրի կողմերի, առարկայի, դրա պահպանության վերաբերյալ սահմանված կանոնները և նրանց իրավունքները:
6. Որո՞նք են գրավ դրված առարկայի վրա բռնագանձում տարածելու և պահանջները բավարարելու հերթականության վերաբերյալ սահմանված կանոնները:
7. Որո՞նք են գրավի տեսակները:
8. Ինչպե՞ս կարելի է սխեմայի միջոցով պատկերել բանկային վարկի հատկանիշները:
9. Որո՞նք են բանկի կողմից վարկերի տրամադրման սկզբունքները:

10. Ինչպիսի՞ն է բանկի կողմից վարկերի տրամադրման և դրանց դասակարգման ներքին կանոնակարգի բովանդակությունը:
11. Որո՞նք են վարկային պորտֆելի ռիսկի դիվերսիֆիկացման աստիճանի ուսումնասիրության ուղղությունները:
12. Ինչպիսի՞ն է բանկի մեկ փոխառուի, բանկի հետ կապված անձանց գծով ռիսկերի հաշվարկը և վերլուծությունը:
13. Ո՞րն է փոխկապակցված անձանց սահմանումը:
14. Որո՞նք են վարկառուի ֆինանսական վիճակի գնահատման չափանիշների 4 խմբերը:
15. Որո՞նք են վարկերի դասակարգման օրինակային ստուգման համար քննարկվող հարցերը:
16. Ինչպիսի՞ն է վարկերի դասակարգումը համաձայն գործող կարգի:
17. Ինչպե՞ս կարելի է իրականացնել բանկի ընդհանուր կապիտալի և նրա տարրերի ստուգումը:
18. Ինչպե՞ս է իրականացվում բանկի ավանդային գործառնությունների ստուգումը:
19. Ինչպե՞ս կարելի է ստուգել բանկի հիմնական միջոցների հաշվառումը:
20. Որո՞նք են բանկի արժեթղթերով կատարվող և արտարժութային գործառնությունների ստուգման հիմնական ուղղությունները:
21. Ի՞նչ քայլեր պետք է ձեռնարկվեն բանկի հաշվետվությունների ստուգման ժամանակ:

ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. «Բանկերի գործունեության կարգավորումը, բանկային գործունեության տնտեսական նորմատիվները» կանոնակարգ - 2
2. «Բանկերում վերստուգումների իրականացումը» կանոնակարգ - 4
3. «Բանկերում վերստուգումների իրականացման ձեռնարկ» - ՀՀ ԿԲ 2003թ
4. ՀՀ Աուդիտի ստանդարտներ
5. ՀՀ օրենք «Աուդիտորական գործունեության մասին»
6. «ՀՀ տարածքում գործող բանկերի, օտարերկրյա բանկերի մասնաճյուղերի, կամ դրանց ղեկավարների կողմից բանկային օրենսդրության խախտումների արձանագրման, վարույթների ընթացակարգի և պատժամիջոցների կիրառման մասին» կարգ
7. „Аудит“ - Э.Аренс, Д.ж.Лоббек 1995г.
8. „Аудит“ - А.Д. Шеремет, В.П.Суща - 2003г.
9. „Аудит“ - Н.Т.Белуха- 2000г.
10. „Аудит“ - Ю.А.Данилевский- 2002г.
11. „Аудит банков“ - Г.Белоглазова, Л.Кроливецкая, Е.Лебедев 2002г.
12. „Банки и банковские операции“ - Е. Ф. Жуков - 1997г.
13. „Банковское дело „ - О.И.Лаврушин - 2003г.
14. „Банковское дело: стратегическое руководство“ - В.Платонов, М.Хиггинс 1998г.
15. „Практический аудит“ - В. Д. Андреев 1997г.
16. «Internal audit in banks and the supervisor’s relationship with auditors» – Basel Committee on Banking Supervision 2001
17. «Internal control –Comptroller’s handbook» 2001

ՀԱՆԳՈՒՑԱՅԻՆ ԲԱՌԵՐԻ ՑՈՒՑԻՉ

Ա

- [Արտարժութային ռիսկ, 49](#)
- [Աուդիտորական եզրակացություն, 34](#)
- [Աուդիտ, 29](#)
- [Աուդիտի ստանդարտներ, 30](#)
- [Աուդիտին հարակից ծառայություններ, 29](#)
- [Աուդիտոր , 28](#)

Բ

- [Բանկային աուդիտ, 37](#)
- [Բանկային ռիսկ, 48](#)
- [Բանկային վերահսկողություն, 14](#)

Գ

- [Գործառնական ռիսկ, 49](#)

Ե

- [Երկրի ռիսկ, 49](#)

Ի

- [Իրացվելիության ռիսկ, 49](#)

Շ

- [Շուկայական ռիսկ, 49](#)
- [Ներքին վերահսկողություն, 45](#)

Շ

- [Ռիսկ, 48](#)
- [Ռիսկերի կառավարում, 49](#)

Վ

- [Վարկային ռիսկ, 48](#)

**Արկադի Իվանյան
Տիգրան Եսայան**

ԲԱՆԿԱՅԻՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՈՒԴԻՏ

Խմբագիր՝

Համակարգչային ձևավորում՝

Լարիսա Նադարյան

Յուլյա Ստակյան, Աննա Գևորգյան